

ՎԱԼԵՆՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՁԿԻՊԻՍԻՍ ՎՅՂՈՅԻ



ՄԻՔԱՅԷԼ ԽԱԳԱՏՐՅԱՆ

ՎԱՆԵՆՏԻՆ ԹՈՎԱՍԱՅԱՆ

ԿՅԱՆՔԻ

ՈՒՐՎԱԳԻԾ

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ВАЛЕНТИН ТОВМАСЯН

КОНТУР

ЖИЗНИ

МИКАЕЛ ХАЧАТРЯН

«Հայրենիքին շա՛վ կը ծառայե՛ս այն գրագետրը,
որ ապրող տըկ Վր կը թողու՛ իր ապգին...»

Շահան Շահնազ

ՀՏԴ 891.981-94:008(479.25)

ԳՄԴ 84Հ7-4+71(2Հ)

Խ 282թ

Խմբագիր՝ արվեստագիտության քկնաժու
Ն.Վ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Գրախոսներ՝ քանասիրական գիտությունների
քեկնաժու Ն.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
երաժշտագետ Գ.Կ. ՇԱԳՈՅԱՆ

Համակարգչային՝ Հ.Ե. ԱԲԵԼՅԱՆԻ
ձևավորումը

Թովմասյան Վ.Խ.

Խ Կյանքի ուրվագիծ: Միքայել Խաչատրյան. - Եր.: ԵՊԿ
հրատ., 2004. - 176 էջ.

Գիրքն արտապուլում է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտական հասարակական գործիչ, անխոնջ մանկավարժ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, փողային գործիքների ամբիոնի վարիչ, պրոռեկտոր տաղանդավոր շեփորահար, Միքայել Խաչատրյանի կյանքն ու ստեղծագործական, համերգային, հասարակական գործունեությունը: Միաժամանակ իր ժամանակի մշակութային, մասնավորապես երաժշտական կյանքի արտապուլքն է գրքում արտաբերվում՝ ազնիվ Մարդու, Զաղաքացու, Մանկավարժի, շիտակ ու բարեկիրթ և նվիրյալ անձնավորության նիստ ու կացը, ժամանակի անցուղարձը:

ԳՄԴ 84Հ7-4+71(2Հ)

ISBN 99941-9333-0-9

© ԵՊԿ հրատ., 2004

© Վ. Թովմասյան, 2004

Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, հմուտ մանկավարժ, Հայֆիլիհարմոնիայի, ազգային օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբերի երկար տարիների մենակատար, շեփորահար Միքայել Վահանի Խաչատրյանը մինչև իր կյանքի վերջին օրը շարունակում էր իր հարուստ փորձն ու գիտելիքները, նաև արժեքավոր խորհուրդները հաղորդել երիտասարդ երաժիշտներին՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փողային բաժնի ուսանողներին և դասախոսներին, այդ թվում նույնիսկ պրոֆեսորներին:

Տարիների վաստակով ու քրտնաջան աշխատանքով իմաստնալից տաղանդավոր երաժիշտ-արվեստագետի, հասարակական գործիչ անցած ուղու, բազմավաստակ մանկավարժի մասին, առավել ևս իր հուշերով համեմված գիրք գրելը և՛ անչափ դյուրին է, և՛ անչափ դժվար: Դյուրին, որովհետև հայտնի են նրա կյանքի բոլոր անցուդարձերը, նվաճումները, գրաված յուրաքանչյուր պաշտոնը: Երաժշտական միջավայրը՝ սկսած պատանեկան փողային նվագախմբից ու ավարտած օպերային թատրոնի մենակատար լինելուց ու կոնսերվատորիայի պրոռեկտորի ու Ազգային օպերային թատրոնի տնօրենի գործունեությունը, դրա հետ մեկտեղ, ընտանիքի ու հարազատների, հանդես նրա իրադարձություններով, հոգսերով ու շփուճը ականավոր դեմքերի հետ հարուստ կյանքի անքակտելի մասն են կազմում: Դժվարին, որովհետև յուրաքանչյուր արվեստագետ, բարձրագույն մակարդակի մասնագետ երաժիշտ իր ինքնատիպ ու յուրահատուկ մոտեցումն ունի ցանկապես մեծ ու փոքր կտավի ստեղծագործության մեկնաբանման ու ներկայացման, իրադարձությունների ու պատմական նշանակության դեպքերի ճիշտ ընկալման վերլուծման, հետո միայն արտահայտման ու փոխանցելու, ենթականերին ու սաներին հաղորդելու, պարզապես անբասիր, անաչառ ղեկավար լինելու պատճառով:

Քսաներորդ դարի առաջին տասնամյակները Հայաստանում, մասնավորապես 20-ական թվականների երաժշտարվեստի հիմնադրման ու բուռն զարգացման ժամանակաշրջանն էր: Դասական եվրոպական փողային գործիքները՝ ֆլեյտա, հորոյ, ֆագոտ, կլառնետ, գալարափող, շեփոք, տրոմբոն, բարիտոն, տենոր, դարասկզբին Հայաստան աշխարհ մուտք գործեցին, տարածքում տեղակայված ռուսական գորքերի մաս կազմող փողային նվագախմբերի շնորհիվ:

1912 թվականին Երևանի կայագործի հրավերով Թիֆլիսից ժամանեց զինվորական ծառայության մեջ գտնվող կապելմայստր Վիլհելմ Շպետլինգը², որն էլ հանդիսանում է Հայաստանում առաջին փողային նվագախմբերի հիմնադիրն ու փողային գործիքների տարածողը և Երևանի կոնսերվատորիայի հիմնադրման առաջին իսկ օրից միակ դասավանդողը:

Երկար տարիների խմբագրական աշխատանքի, լրագրողի և երաժշտի դիտարկում-գրույցների, ձայնագրությունների արդյունք այս գիրքը պետք է լույս տեսներ Միքայել Խաչատրյանի աշխատանքային գործունեության ընթացքում, առավելագույնը՝ գոնե կյանքի վերջին տարիներին, առնվազն Միքայել Խաչատրյանը պետք է տեսներ այս գիրքը: Սակայն մենք կանխատեսում ենք, իսկ Աստված տնօրինում: Եվ դեպքերի բերումով այնպես ստացվեց, որ գրքի տեքստն ամբողջությամբ ընթերցեցի իրեն, հայտնի պատճառներով ինքը չէր կարող կարդալ: Լսում էր ուշադիր, ու փոքրիկ դադարի ընթացքում անգամ, անմիջապես արձագանքում էր. «Հետո՞» ու հանգստանում, երբ շարունակում էի ընթերցումը: Մինչև գրքի ավարտելը հանդիպում էինք շաբաթը երկու անգամ, միացնում էի ձայնագրիչն ու սկսում հարյերը, որոնց պատասխանում էր անմիջապես, սթափ ուղեղով, թարմ ու զգոն մտածողությամբ, նույնիսկ չնոռանալով անգամ մանրությունները, որոնք, իհարկե, տեղ չէին գտնելու գրքում: Բոլոր դեպքերում իր կյանքն էր, իր

¹ Ազգային փողային գործիքները՝ դուդուկ, շվի, բլուլ, գուռնա, դարեր շարունակ հայ ժողովրդի երգի և ծեսերի հիմնական մասնակիցն ու ուղեկիցն են են եղել (տարբեր անասմբային կազմերում):

² Ավստրիայի երաժշտի կերպարն արտահայտվել է «Հայֆիլմի» նկարահանած «Նվագախմբի տղաները» գեղարվեստական ֆիլմում:

ապրումներն ու մտորումները, ինչու չէ՝ տանջանքները նաև: Գոհ էր
ամեն ինչից, կատակում էր ու շարունակում պատասխանել
առաջադրված հարցերին: Ու հաճախ կրկնում էր. «Մի քիչ ուշացրինք,
և դու հիվանդանոց ընկար և ես, բայց լավ է ավարտին հասցրինք»:

Մի անգամ ասաց. «Ձայնագրիչը չմիացնես, այլ բաների մասին
ենք զրույցելու, երաժշտության հետ կապ չունեցող: Գիտես ես երա-
զներում Իգորին եմ տեսնում, հայրիկիս հայրենիքը, միշտ մտածել եմ
անպայման այցելել նախնիներիս ծննդավայրը, սակայն չհասցրի:
Միշտ գործ, աշխատանք: Սա վերջացնեմ հետո, այս էլ վերջացնեմ,
հետո: Այդ հետոներին քիվ ու հաշիվ չկա»:

...Այո, կարոտ ուներ իր սրտում, հոգում, հայացքում, որը տարավ
իր հետ:

Պաշտում էր Կոմիտասին, Խաչատրյանին, Չոխաջյանին, հայ
երաժշտությունը: Երեխայի նման ուրախանում էր հայ երաժիշտների
ծեռք բերած հաջողություններով, հատկապես գնահատում էր երի-
տասարդ տաղանդներին:

Երբ արդեն չէր աշխատում, իսկ մեր հանդիպումները շարունակ-
վում էին, հարց ու փորձ էր անում կոնսերվատորիայում կատարված
փոփոխությունների, ուսանողների, դասախոսների, պրոֆեսորների,
բոլորի, բոլորի մասին ու բարևներ ուղարկում, մաղթում ամենայն
բարիք և բաժանվելիս ամեն անգամ ասում էր. «Հաջորդ այսդ ե՞րբ է
լինելու, չմոռանաս»:

Ձայնագրեցի՞նք շուրջ 15 կոմպակտ քասեթ՝ 90 րոպեանոց: Որոնց
վերծանման, շարադրման, խմբագրման աշխատանքը ավելի տևեց,
քան պետք էր: Ինչո՞ւ առաջին դեմքով գրվեց, ասել է թե որպես հու-
շեր, որովհետև այլ պարագայում մեջբերումների, ավելորդ շեղում-
ների քանակը միտքը խաթարելու, կամ անավարտ մնալու հակում
ուներ: Այդ իսկ պատճառով էլ գրվեց որպես հուշեր:

Ասում էր. «Հեղինակը դու ես, ինչպես կուզես»:

Ծնվել էր երաժիշտ, այդպիսին մնաց մինչև վերջին շունչը և շա-
րունակում է մեր մեջ մնալ որպես բարձրակարգ, նմանը չունեցող
երաժիշտ:

Ինքն իր աշխատանքով ու գործունեությամբ ստեղծեց իր անձե-
ռակերտ հուշարձանը:

Բնությունը Միքայել Խաչատրյանին օժտել էր ոչ միայն շեփոր «նվագելու» շնորհով, այլև որպես շրջակա աշխարհին իր բազմաբնույթ կողմերով ըմբռնելու, մարդկանց հետ հոգևոր շփման իր արտահայտման, նաև ինքնահաստատման և համամարդկային կատարողական արվեստին ներգրավվելով, իրեն հատուկ կատարողական պրոֆեսիոնալիզմով: Խորունկ ժողովրդական, մարդկային ապրումների ռոմանտիզմով լուսավորված, զգայուն և քննարկող առլեսյուն և շարժուն, ներազդեցության հզոր ուժով օժտված էր նրա կատարողական արվեստը:

Շեփորի հանրահայտ հայտագրի հիմնական ստեղծագործությունների մեկնաբանման ասպարեզում Միքայել Խաչատրյանը թողել է անմոռանալի օրինակներ: Սակայն, ինչպես հաճախ է պատահում արվեստագետ անհատականությունների հետ, իր սկզբունքները այլ կատարողների և աշակերտների մեկնաբանությունների վրա սահմանափակումների, կաշկանդող ազդեցություններ են թողնում, ոչ միայն այն բանի համար, որ գործիքին տիրապետման իր արվեստը անկրկնելի էր, այլև, որ մշտապես գեղարվեստական խորություններ, ստեղծագործական մտքի նոր ուղիներ, շեփորային արտահայտչամիջոցների այլ հորիզոններ էին բացում:

Նրա, դասավանդողի հատկապես այս հատկանիշը դեռևս տասնամյակներ շարունակ պետք է որոշակիորեն ազդի և ազդեցություն թողնի փողային գործիքների, մեկնաբանության նորանոր մոտեցումների սկզբունքային կողմերի որոնումների վրա:

Իր տաղանդի իրավունքով գրավելով առաջատարի պատվավոր տեղը, Միքայել Խաչատրյանն ընդհանրապես արվեստի անդաստանում, փողային գործիքների հայ կատարող երաժիշտների թվում եղել է Հայաստանի երաժշտասերների կողմից առավել սիրելի, քանզի ոչ միայն պահել-պահպանել ու փայփայել է երաժշտական մշակույթի և կատարողական արվեստի թանկարժեք ավանդույթները, այլև նոր արվեստի գեղարվեստական ընկալման նոր աշխարհի և մարդու որոնումների նոր ուղիներ է հարթել:

Նրա, արտիստի դիմապատկերը արտահայտվել է ամենուր և՛ անցյալում. և՛ ներկայում ստեղծված շեփորի գրականության հանճարեղ ընթերցումը, և կոմպոզիտորների հետ նրբանկատ համագործակ-

ցությունը՝ բազմաթիվ նոր ստեղծագործությունների ստեղծման և խմբագրման աշխատանքում, և համերգային կատարողական մեծ փորձի հաղորդումը Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի իր աշակերտներին՝ երաժշտության ու երաժիշտների, կատարողական արվեստի գաղտնիքների մասին իր իմաստուն, խորունկ գրույցներով:

Երաժշտության պատմության էջերում բազմաթիվ են հռչակավոր երաժիշտները, սակայն յուրահատուկ տեղ են զբաղեցնում այն եզակիները, ում վիճակված է ի վերուստ ստեղծել նոր, մինչ այդ անհայտ, կատարյալին հասնելու չտորված ճանապարհ: Հենց այդ պատճառով էլ Միքայել Խաչատրյանի անունը, որը շեփորի կատարողական արվեստում շրջադարձային դեր է կատարել. առաջին հերթին իր գործը շարունակող շեփորահարների, գալարափողահարների, տրոմբոնահարների, տուբահարների շնորհիվ՝ Անուշավան Գրիգորյան, Միքայել (Միմիկ) Փեշտմալջյան, Հակոբ Ագարյան, Վահան Տիրատուրյան, Նիկոլայ Խաչատրյան, Յուրի Բալյան, Հրաչիկ Փոթիկյան, Վալենտին Թովմասյան, Ֆելիքս Հայրապետյան, Ֆելիքս Մովսիսյան, Գուրգեն Մարգարյան, Կոնստանտին Խաչատրյան, Արթուր Մխիթարյան, Արմեն Արմենյան, Արա Խաչատրյան և շատ ու շատ ուրիշներ, ովքեր բարձր են պահում իրենց դաստիարակի՝ Միքայել Խաչատրյանի ստեղծած ավանդույթները:

Իր գործունեության ընթացքում, սկսած Հայաստանի ջագ-նվագախմբի մենակատար, Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի մենակատար, օպերային թատրոնի նվագախմբի մենակատար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ամբիոնի վարիչ, դեկան և վերջապես ուսումնական և գիտական գծով պրոռեկտոր, Ալ. Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրեն, գերել է շրջապատին ազնիվ, անբասիր ու անմնայորդ նվիրյալ աշխատանքով:

Վալենտին ԹՈՎՄԱՍՅԱՆ

«**U** յօր 1995 թվականի դեկտեմբերի 29-ն է, լրացավ իմ 80-ամյակը: Պատկառելի տարիք, որը պարտավորեցնում է և ես որոշեցի գրի առնել անչափ դժվարին, բայց իրադարձություններով հարուստ կյանքիս էջերի հուշերը:

Կյանքս նկարագրելու եմ համեստորեն, առանց չափազանցությունների, ճշմարտություն և միայն ճշմարտություն:

Ծնվել եմ 1915 թվականի դեկտեմբերի 16-ին (նոր տոմարով՝ 29) Սարդարապատի շրջանի Շահիխար գյուղում, ուսույիչների ընտանիքում:

Հայրս՝ Վահան Խաչատրյանը, գյուղական դպրոցի ուսույչապետ էր (դիրեկտոր) և, գոյություն ունեցող կարգերի համաձայն, մեր ընտանիքն ապրում էր դպրոցի շենքում:

Ես ընտանիքի կրտսեր զավակն էի քրոջիս՝ Էմմայից (1911) և եղբորիս՝ Ալեքսանդրից (1913) հետո:

Իմ ծննդից հետո, երկրորդ տարում, ավելի ճիշտ՝ 1917 թվականի ամռանը, ծնողներիս՝ Վահան և Հայկանուշ Խաչատրյաններին աշխատանքի բերումով տեղափոխել են Կողբ գյուղ (Արաքս գետի ճիշտ հակառակ ափին):

1918 թվականի վաղ գարնանը թուրքական հրոսակների հարձակման պատճառով մենք ստիպված (իհարկե, ծնողներիս որոշմամբ) Կողբից տեղափոխվեցինք Էրիվան:

1918 թվականի աշնանը 33 տարեկան հասակում, թրքաբորբից հայրս վախճանվեց, և մենք ծանր դրության մեջ հայտնվեցինք: Հինգ ամիս հետո՝ 1919 թվականին, ծնվեց կրտսեր եղբայրս, նրան ի հիշատակ հայրիկիս անվանակոչեցինք Վահան:

Մեր ընտանիքը՝ չորս անչափահաս երեխա, մայրս և տատիկս, մնաց առանց ապրուստի միջոցի և անհույս՝ ապագայի նկատմամբ:

Խեղճ ու կրակ մայրս հարկադրված էր կարունճկի ուսույչուհի աշխատել ամերիկյան որբանոցներում, սկզբում Օշականում (1920-1922), իսկ հետո՝ Աշտարակում (1922-1926):

1922 թվականին Աշտարակում ես սկսեցի դպրոց հաճախել:

Չորս տարի հետո, Աշտարակի մանկատունը տեղափոխեցին Ստեփանավան, ուր և մենք էլ հարկադրաբար տեղափոխվեցինք, որտեղ և 1929 թվականին ավարտեցի յոթնամյա դպրոցը և ընդունվեցի գյուղատնտեսական տեխնիկում:

1931 թվականին մեր ընտանիքը վերադարձավ Երևան, և ես շարունակեցի իմ ուսումնառությունը: 1933-ին ավարտեցի Երևանի գյուղատնտեսական տեխնիկումը, որը գտնվում էր երկաթուղային կայարանի մոտակայքում: Դասերը՝ դասեր, ուսումնառությունը՝ ուսումնառություն, աշխատանքը՝ մինչև ժամը 5-6-ը, իսկ երեկոներն ազատ էի, քաղաքի կենտրոնում գոյություն ունեւ, այսպես կոչված՝ «միայնալ աչուներ», որտեղ փողային նվագախումբ էր գործում: Եվ իմ ընկերներից մեկը, որն արդեն անդամագրվել էր այդ նվագախմբին, մի օր ասաց.

- Միշտ, արի միասին գնանք, փորձիր, միգուցե նվագել սկսես:

Այդ նվագախմբի ղեկավարն էր իր ժամանակի համար կրթյալ մի անձնավորություն՝ Վաղինակ Խանգադյանը: Նա ինձ բացատրեց իմ անելիքը և միանգամից ինձ շեփոր տվեց: Փողային նվագախմբում ընդունված կարգ է, սկզբում ալտ կամ տենոր՝ եմ տալիս նվագել, ապա միայն, որոշ փորձառություն ձեռք բերելուց հետո, փոխում՝ շեփոր կամ բարիտոն: Մեկ տարվա ընթացքում բավականին վարժ նվագում էի: 1933-ին ես արդեն նվագախմբի առաջին շեփորահարն էի, իսկ 1935-ին իմ ղեկավարն ուղղակիորեն պահանջեց, որպեսզի ես թողնեմ ագրոտեխնիկական իմ աշխատանքը և ընդունվեմ կոնսերվատորիա: Ի դեպ, այն ժամանակ ուսումնառանն ու կոնսերվատորիան համատեղ էին գործում և գտնվում էր Սպանդարյան փողոցում: Մատուրո Վաղինակի առաջարկությունն ինձ մտատանջության մեջ գցեց: Տատանվում էի, չէ՞ որ ես արդեն աշխատում էի ագրոտեխնիկի իմ մասնագիտությամբ, օգնում էի մայրիկիս, վատ չէի վարձատրվում իմ կատարած աշխատանքի համեմատ: Մայրս արդեն չէր աշխատում, այլ հետևում էր մեր նիստուկացին:

Երկար մտատանջությունից հետո տեղի տվեցի Վաղինակ

¹ Խոսքը փողային ալտ, տենոր գործիքի մասին է:

Իսանգաղյանի հորդորներին, գնացի երաժշտական տեխնիկունի շեփորի դասարան ընդունվելու, դիմում գրեցի ու մասնակցեցի մասնագիտության ընդունելության քննությանը: Թե ինչ ծրագիր նվագեցի, երևի դժվարանամ ասել, որովհետև փողային նվագախմբի ընդունված ծրագրերին հրաշալի էի տիրապետում և երաժշտական ուսումնական հաստատություն ընդունվելու պարտադիր ծրագիր չէր պահանջվում, մասնավանդ փողային գործիքներ նվագողներից: Ինչ պահանջում էին, այն էլ նվագում էինք՝ գամմաներից սկսած: Իմ նվագը դուր եկավ հանձնախմբի անդամներին, որոնց, փաստ է, ես չէի ճանաչում: Իսկ ինչ վերաբերում է տեսական առարկաներին՝ սովորեցի, երաժշտական տարրական տեսությամբ, երաժշտական գրականությամբ, դրանց մասին ես գաղափար չունեի, ինչպես փողային ինքնագործ նվագախմբի ցանկացած մասնակից-երաժիշտ: Կարճ ասած՝ երևի հաշվի առնելով գործիքին տիրապետելու իմ հմտություններն ու երաժշտական որոշ ընդունակություններս, քննական հանձնախումբը որոշեց ընդունել ինձ, ասելով, թե տեսական գիտելիքներ ձեռք կրերեմ ուսման ընթացքում:

Ի դեպ, տեղին է ասել, որ այդ ժամանակ որպես կոմսերվատորիայի տնօրեն Մոսկվայից հրավիրվեց հիանալի մի անձնավորություն, բարձրակարգ պրոֆեսիոնալ դիրիժոր, երաժիշտ և հմուտ մանկավարժ Կոնստանտին Սարաջյանը¹: Նրա զլխավոր հատկությունը, իմ կարծիքով, այն էր, որ ամեն ինչ ինքնուրույն էր անում: Մեծ և

¹ Սարաջյան Կոնստանտին Սողոմոնի (Սարաջև, 1875-1954) - 1898 թ. ավարտել է Մոսկվայի կոմսերվատորիայի ջութակի բաժինը (Ի. Գրիեմալիի դասարանը, արժաքն մեծ մեդալով), ելույթներ է ունեցել որպես մենակատար ջութակահար և մասնավոր սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստր: Դիրիժորության դասեր է առել Օտակար Շչեկլիցի: Դիրիժորական գործունեությունն սկսել է 1901 թ.: 1905-1906 թթ. կատարելագործվել է Արթուր Նիկիշի մոտ: 1911-1912 թթ. եղել է Սերգիև-Ալեքսեյան ժողովրդական տան սիմֆոնիկ նվագախմբի զլխավոր դիրիժոր: Ղեկավարել է 226 օպերային ներկայացում, այդ թվում նաև բենադրել: 1912-1917 թթ. համագործակցել է «Մուզիկա» ամսագրի հետ: 1918-1920 թթ.՝ Սարատովի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր (հիմնադիր): «Սարատովի սովետական օպերային» թատրոնի կազմակերպիչ ու դիրիժոր: 1920 թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: 1920-1922 թթ. Դոնի Ռոստովում կազմակերպել է նվագախմբեր, անասնբներ: 1921 թ. առաջինն է արժանացել «Աշխատանքի հերոսի» պատվավոր կոչման: 1922-1935 թթ. Մոսկվայի կոմսերվատորիայի պրոֆեսոր, դասավանդել է պարտիտուրի ընթերցում, տեսական առարկաներ՝ նվագախմբային, երգչախմբային, օպերային դասարաններում: Հիմնել է Մոսկվայի կոմսերվատորիայում դիրիժորության ֆակուլտետը: Եղել է դիրիժորական, նվագախմբային, խմբերգային և վոկալ բաժինների ղեկավար: 1924-1935 թթ. հիմնել է Ղեկավարել է Նոգինի ակումբի ինքնագործ սիմֆոնիկ նվագախումբը, որը հետագայում Սարաջյանի անունով է կոչվել:

հիմնավոր գիտելիքների տեր բարեկիրթ անձնավորությունը լսում և տեսնում էր ամեն ինչ ու սեփական որոշումներ կայացնում:

Ուսումնարան-տեխնիկումի մասնագիտության իմ դասատուն էր հրաշալի շեփորահար, օպերային քատրոնի մենակատար Գուգուշ Թառայանը¹, որը ծնունդով նույնպես իգորիցի էր: Նա անչափ խստապահանջ էր իր սաների նկատմամբ: Բարի ու քնքուշ էր պարապող սովորողների, խիստ ու անաչառ՝ ծույլերի հանդեպ, ընդհուպ մինչև նոտաները շարտելը, դասարանից դուրս վնդդելը և այլն, իսկ որ բարձրակարգ մասնագետ-շեփորահար էր՝ կասկածից վեր է: Ճիշտն ասած՝ տեսնելով այդ ամենը, նաև վախենում էի, որ ես էլ նրան չզայրացնեմ, ամեն դասի գալիս էի հանձնարարություններն անգիր սովորած: Փորձառու մանկավարժը պահանջում էր մեզնից, որ վարժությունները (էտյուդները) մենք անգիր նվագենք: Այդպես էլ ամուսն էի, իսկ եթե հանկարծ մեկը համարձակվեր նոտաներով նվագել, դասարանից վնդդում էր:

Երբ կոնսերվատորիայի ռեկտոր դարձավ Կոնստանտին Սարաջյանը, ուսման մասնագիտական մակարդակը միջինից բարձրացրեց; զավառայինից հասցնելով կենտրոնների երաժշտական կրթօջախների մակարդակին: Այդ բանը նույնիսկ մեզ՝ երիտասարդներիս, տեսանելի և շոշափելի էր: Իսկ որ նա հրաշալի գիտեր ուսումնառության, երաժշտական կրթության դրվածքն ու հիմունքները, մենք շատ լավ էինք զգում: Այդ բանն զգացվում էր ամեն ինչում:

Մեկ-երկու տարի ուսումնառությունից հետո հետաքրքրական մի մրցույթ տեղի ունեցավ. այն նվիրված էր սովետական կոմպոզիտորների ստեղծագործություններին: Իմ ուսույիչ Գուգուշ Թառայանն ասաց, որ պետք է մրցույթին նվագեն Ալեքսանդր Գեդիկեի²

¹ Թառայան Գուգուշ Ռուբենի (1898-1943)- շեփորահար, 1931-ին ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիան՝ Վիլիելմ Շպետլինգի դասարանը: Սովորել և ավարտել է 1931-ին Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիան՝ Ա. Բ. Գորդոնի դասարանը: 1931-1943 թթ. դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում (շեփորի դասարան): Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական քատրոնի շեփորահարների կոնցերտմաստր, մենակատար:

² Գեդիկե Ալեքսանդր Ֆյոդորի (1877-1957), երգեհոնահար, կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ: Ռ.ԽՖՍՀ ժողովրդական արտիստ (1946), արվեստագիտության դոկտոր (1940), Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր, երգեհոնահար, դաշնակահար, դասատու Կառլ Գեդիկեի որդին (1839-1916):

«Կոնցերտային էտյուդը»: Հետաքրքրական այն է, որ իմ ուսուցչի մոտ միայն շեփորի նվագաբաժինը կար նվագակցության նոտաները չկային, երևի թե հանրապետությունում էլ չկար: Գուգուշ Թառայանը ձայնապնակը տվել էր իր ծանոթ-ընկեր երաժիշտներից մեկին (Ռորբերտ Աթայանին-Վ.Թ.) ու խնդրել գրել նվագակցության նվագաբաժինը, և շուտով նոտաները մեզ մոտ էին:

Մրցույթը, որին մասնակցում էին և՛ դաշնակահարներ, և՛ լարային գործիքներ, և՛ այլ գործիքներ, մաս փողայիններ, և՛ արդյունքներն էլ ընդհանուր էին: Մրցույթը մեծ իրարանցում էր առաջացրել երաժիշտների և հատկապես փողային գործիքներ նվագող երաժիշտների շրջանում: Մրցույթը տեղի ունեցավ և առաջին մրցանակը շնորհվեց Առնո Բաբաջանյանին, որն այն ժամանակ էլ աչքի էր ընկնում կատարողական բարձր մակարդակով: Երկրորդ մրցանակ ստացավ Լենա Լեկգերը, պրոֆեսոր, ջութակահար Դմիտրի Լեկգերի՝ դուստրը: Երրորդ մրցանակն ինձ շնորհվեց: Առնոն ստացավ 300 ռուբլի, Լենա Լեկգերը՝ ջութակի շատ գեղեցիկ պատյան, իսկ ինձ տվեցին 150 ռուբլի: Ամենակարևորն այստեղ այն էր, որ ինձ որպես շեփորահարի ճանաչեցին: Սա ինքնահաստատման առաջին քայլն էր:

Այսպես սկսվեց իմ մուտքը երաժշտական կատարողական արվեստ: Մի քանի ամիս հետո ճանաչված, Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ, շեփորահար, «Հայաստանի ջազ» նվագախմբի դիրիժոր և մենակատար Յուլակ Վարդազարյանը² ինձ հրավիրեց

¹ Լեկգեր Դմիտրի Նիկոլայի (1896-1980) - ավարտել է Օդեսայի կոնսերվատորիան Ֆ. Յա. Ստուպկեի դասարանը (ջութակ): Երևանի կոնսերվատորիայում դասավանդել է 1927-1948 թթ.: 1948-1980 թթ. Դ. Լեկգերը դասավանդել է Լվովի պետական կոնսերվատորիայում: Նա Հայաստան աշխատանքի է հրավիրվել Քութաիսից: Երևանի պետական կոնսերվատորիայում նրան աշակերտել են Հրաչյա Բոգդանյանը, Կարեն Կոստանյանը, Ջոյա Պետրոսյանը, Ջուզե Մարգարյանը, Լևոն Մամիկոնյանը, Ջարեհ Սահակյանը:

² Վարդազարյան Յուլակ Մարտիրոսի (1910-1944) - շեփորահար, դիրիժոր, մանկավարժ: 1932-ին ավարտել է Երևանի երաժշտական ուսումնարանը (Գ. Թառայանի դասարան), 1932-1936-ին սովորել է ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան (Մ. Տաբակովի դասարան): Պրոֆեսոր Տաբակովն իր սանի մասին ասել է. «Այս պատերն այսպիսի գեղեցիկ ձայն երբեք չեն լսել»: 1937-ին Հայաստանի օպերայի և բալետի նվագախմբի մենակատար, երաժշտական ուսումնարանի և կոնսերվատորիայի դասախոս, 1938 թ.՝ Հայաստանի ջազ-նվագախմբի մենակատար և դիրիժոր: 1943-ին՝ նորաստեղծ երաժշտական կոմեդիայի քաղաքային դիրիժոր: Պատերազմի տարիներին ղեկավարել է Հայաստանի սահմանապահ կայազորի երգի-պարի անսամբլը, ելույթներ ունեցել ինչպես սահմանապահների, այնպես էլ ռազմաճակատի զինվորների համար:

նվագելու առաջին շեփորի նվագաբաժինը, քանի որ ինքը և ղեկավարում էր, և մենանվագում, այդ իսկ պատճառով առաջին շեփորահարի տեղը ոչ թե թափուր էր մնում, այլ, պարզապես, չէր հասցնում և երաժիշտներին էլ հայտնի է, որ թե՛ ղեկավարել, թե՛ մենանվագել և թե՛ կատարել առաջին շեփորի նվագաբաժինը ոչ միայն դժվար է ու պատասխանատու, այլ և ֆիզիկապես անհնարին համագործակցություն է:

Մինչև այդ էլ ես նվագախմբում աշխատել էի և փորձ ունեի, թերթից վարժ կարդում էի:

Իմ նվագախմբային աշխատանքային փորձառությունն սկսվել է դեռևս Գաբրիել Մունդուկյանի անվան թատրոնի փոքր կազմի նվագախմբում, որտեղ մեկական փողային գործիք էր ընդգրկված: Եվ յուրաքանչյուրը յուրովի մենակատար էր: Այնպես որ, որոշակի փորձառություն ունեի արդեն և անսամբլի առումով, և մենակատարի առումով: Երբ Յուլակ Վարդազարյանն ինձ նվագախումբ հրավիրեց, ինքն այդ ժամանակ Գուգուշ Թառայանի հետ դասավանդում էր կոմսերվատորիայում և որոշ բաներ ցույց տվեց ինձ՝ մենանվագ կտորներ և խորհուրդներ տվեց, թե որ ստեղծագործությունն ինչպես կատարել, բացատրելով նաև գործիքի տեխնիկական հնարավորությունների իրեն հայտնի գաղտնիքները:

Ես սկսեցի աշխատել «Հայաստանի ջազ» նվագախմբում: Դա 1938 թվականն էր: 1939 թվականի հոկտեմբեր ամսին, մենք մեկնեցինք Մոսկվա՝ մասնակցելու հայ գրականության և արվեստի տասնօրյակին:

«Հայաստանի ջազ» նվագախմբի համերգները տեղի էին

¹ 1939 թվականի հոկտեմբերի 20-29, հայկական արվեստի և գրականության տասնօրյակ Մոսկվայում: Մասնակիցներ՝ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժորներ՝ Կ. Սարաջյան, Մ. Թավրիզյան, Գ. Բուդաղյան), երգչախումբ (խմբավար՝ Վ. Նիկոլսկի), Կոմիտասի անվան պետական լարային քառյակ (Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Մ. Տերյան, Ս. Ասլամազյան), հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլ (գեղարվեստական ղեկավար՝ Թ. Ալբունյան), Հայաստանի պետական ջազ-նվագախումբ (գեղարվեստական ղեկավար՝ Ա. Այվազյան), Հայկական աշուղական երգի անսամբլ (գեղարվեստական ղեկավար՝ Շ. Տալան), Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլ (ղեկավար՝ Գ. Միրզոյան), Հայկական ռադիոկոմիտեի արևելյան անսամբլ (ղեկավար՝ Ա. Մերանգուլյան), Հայֆիլիարմոնիայի և օպերային թատրոնի մեներգիչներ, մենակատարներ: Ծրագրում՝ հայ կոմպոզիտորների և ժողովրդական ստեղծագործություններ:

ունենում Արտեմի Այվազյանի՝ ղեկավարությամբ, Յուլյակ Վարդա-
զարյանի դիրիժորությամբ և մենակատարմամբ: Տասնօրյակի
ավարտից հետո Կրեմլ հրավիրված արվեստագետների թվում էր
նաև «Հայաստանի ջազ» նվագախմբի կազմը: Կառավարական
ճաշկերույթին նաև նվագում էին: Դրանով նշվում էր հայ արվեստի
մեծագույն հաղթանակը, որը տեղի ունեցավ Մոսկվայի Կրեմլի Գե-
որգիկյան դահլիճում, և ես մեծ հետաքրքրությամբ դիտում և հետ-
ևում էի Խորհրդային Միության կառավարության և կուսակցության
ղեկավարներին, ովքեր իրենց բաժակաճառերում զովաբանում և
հորդորում էին հայ արվեստը, գրականությունը և արվեստագետնե-
րին՝ երաժիշտներին, երգիչներին, կոմպոզիտորներին: Քանի որ
ընթրիքի մասնակիցները բազմաբանակ էին, հայաչքով երկար
փնտրելուց հետո նկատեցի, որ առաջին շարքում նստած էին Ստա-
լինը, Վորոշիլովը, Միկոյանը և մյուսները, և Հայաստանի կոմկուսի
Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը (Հարուք-
յունով), Հայկանուշ Դանիելյանը², ի դեպ, նա բաժակ բարձրացրեց
և փայլուն կենաչ խոսք ասաց հայ արվեստի, գրականության, երա-
ժիշտների, կոմպոզիտորների, երգիչների և, իհարկե, Սովետական
Միության կառավարության ղեկավարության և Իոսիֆ Ստալինի

¹ Այվազյան Արտեմի (Հարություն) Սերգեյի (1902-1975) - կոմպոզիտոր, թավջութակա-
հար, դիրիժոր: ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1964): Ալ. Սպենդիարյանի (ստեղծագոր-
ծություն), և Ս. Մ. Կոզոլուպովի սանը (թավջութակ): Հայաստանի պետական էտորադային
նվագախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար (1938-1956): Երևանի պետական կոն-
սերվատորիայի թավջութակի դասարանի հիմնադիր (1921) և առաջին սիմֆոնիկ նվա-
գախմբի թավջութակահարների կոմպերտմայստր: Խորհրդային Հայաստանի առաջին
օպերետների հեղինակ, որոնց թվում «Ատամնաբույժն արևելյան», (1943), երաժշտական
կոմեդիաների, ջազային ստեղծագործությունների, բազմաթիվ էստորադային երգերի հեղի-
նակ: Գրել է օպերաներ, սիմֆոնիկ ստեղծագործություններ, կինոերաժշտություն («Ինչու է
աղմկում գետը»), թավջութակի և նվագախմբի կոմպերտներ (պահպանվել է առաջին կոն-
ցերտի ձայնագրությունն իր կատարմամբ, Մ. Մալունյանի ղեկավարությամբ):

² Դանիելյան Հայկանուշ Բաղդասարի (1893-1958)- հայ մեծագույն երգչուհի (քնարա-
կան կուրդաստուրային տարածո), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1939), Ն. Ա. Իրենյկա-
յայի աշակերտը: 1922-1932 թթ. Վրացական, 1933-1948 թթ՝ Հայկական օպերային թատրոն-
ների մենեժրոուհի: Հայտագրում հատուկ տեղ էին զբաղում հայ կոմպոզիտորների, այդ
թվում Անուշի Ա. Տիգրանյանի «Անուշ», ինչպես նաև ռուս և արևմտաեվրոպայի կոմպոզի-
տորների օպերաների դերերգերը: 1943-1951 թթ. դասավանդել է Երևանի պետական կոն-
սերվատորիայում: 1949-ին՝ պրոֆեսոր, 1943-1948-ին՝ ամբիոնի վարիչ, 1948-1951-ին՝ Երևա-
նի Չայկովսկու անվան մասնագիտացված երաժշտական դպրոցի տնօրեն: ԽՍՀՄ պետա-
կան մրցանակի դափնեկիր (1946):

մասին: Փայլուն ելույթ էր: Մենք էլ հպարտությամբ էինք լսում: Քանի որ ողջ ճաշկերույթի ժամանակ մենք նվագում էինք, խնջույթի ավարտից հետո մեզ սեղանի մոտ հրավիրեցին: Երբ բոլորս դուրս էինք գալիս Գեորգիկյան դահլիճից, մի քանի հոգով վերջում էինք մնացել, ես նկատեցի, թե ինչպես երկու հոգի՝ քաղաքացիական հագուստով, բեմահարթակի երկու կողմերից գնդայիքներ էին տանում: Այդ տեսարանն անասելի, աննկարագրելի ազդել էր ինձ վրա, և երկար ժամանակ ուշքի չէի գալիս, երբ պատկերացնում էի, թե անմեղ մի պատահարի արդյունքում ինչ կպատահեր հայ արվեստի, գրականության ընտրանու հետ, այն մի քանի հարյուր գործիչների, ովքեր փայլուն դուրս եկան փորձությունից: Առաջին անգամ կազմակերպվող Սովետական Միության հանրապետություններից առաջինը փառքով ու մեծ հաջողությամբ ներկայացնելով Մոսկվայում իր ազգային արվեստն ու մշակույթը, գրականությունը ներկայացրած հայ գրականության և մշակույթի գործիչների հետ ինչ ողբերգություն կարող էր տեղի ունենալ: Չէ՞ որ ողբերգական 37 թվականն այնքան էլ հեռու չէր:

*

* *

Մոնսերվատորիայի ռեկտոր Կոնստանտին Սարաջյանի հորդորներով ու հարկադրմամբ, որն արդեն ինձ լավ էր ճանաչում և նա էր վերը հիշատակված մրցույթի հանձնախմբի նախագահը և շատ լավ կարծիք ուներ իմ մասին, 1940 թվականի օգոստոսին ասաց. «Դու Երևանում արդեն անելիք չունես, պետք է մեկնես Մոսկվա, այնտեղ կոնսերվատորիայում կկատարելագործվես, լավ գիտելիքների տեր կդառնաս, բարձր մակարդակի կհասնես աշխարհահռչակ շեփորահար և մանկավարժ Միխայիլ Տարակովի ղեկավարությամբ: Ես քեզ նրա անունով նամակ կտամ, և նա բոլոր հարցերում կընդառաջի: Սակայն դու ոչ մի միջամտության կարիք չունես: Բո կատարողական մակարդակն արդեն իսկ մոսկովյան է»:

Իմ Մոսկվա մեկնելու գաղափարն իրագործելու համար նա՝ իմ

սիրելի ռեկտորը, գործուղում ձևակերպեց. քաջատեղյակ էր, որ ընտանիքի կերակրողը ես էի: Այո, այդ մեծ սրտի և հոգու տեր անձնավորությունն ամեն ինչի մասին մտածում էր, և ես բացառություն չէի: Գործուղումը ձևակերպել տվեց երկու շաբաթով, վճարելով և՛ ճանապարհածախսը, և՛ օրապահիկը, և՛ հյուրանոցը: Իսկ երկու շաբաթվա մոսկովյան գործուղումն այն ժամանակ հեշտ բան չէր:

...Մոսկվա: Այն էլ 1940-ական թվականների... Քիչ թե շատ տեղյակ մարդուն պարզ ու հասկանալի է, թե զավառից եկած պատանու վրա ինչ տպավորություն կթողներ աշխարհի մեկ վեյերոքոդ մասը կազմող անծայրածիր մի երկրի մայրաքաղաքը: Ոչ միայն երկրի, այլև խոշոր մի կենտրոն՝ իր յուրահատուկ մշակութային կյանքով, նիստուկացով, մարդկային հարաբերություններով ու կենցաղով, թատրոններով ու համերգասրահներով և, անշուշտ, ուսանողներով:

...Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան կոնսերվատորիայի փողային ամբիոնի հեղինակավոր հանձնախմբի առջև պետք է նվագելի Վասիլի (Կարլ Վիլիելմ) Գեորգիի Բրանդտի՝ Առաջին «Կոնցերտչույուկը»: Շեփորի գրականության լավագույն նմուշներից է և աչքի է ընկնում տեխնիկական հնարանքներով, ընդարձակ ձայնատարությամբ, զեղեչիկ մեղեդային կտորներով՝ վիրտուոզ ստեղծագործություն է: Նվագելիս աչքի տակով նայում էի հանձնախմբի անդամների դեմքերին:

Հայտնի է, որ ցանկացած երաժիշտ, ցանկացած երկ կատարելիս, ակնթարթային հայացքով անգամ կարող է որոշել, թե դիմացինի վրա ինչպիսի տպավորություն է թողնում իր նվագը, առավել ևս՝ քննական հանձնախմբի անդամների: Իսկ ես առաջին տակտերից հետո կարծես թե հանգստացա, ավելի վստահ շարունակեցի նվագել, այն աստիճան, որ երբ ավարտեցի, մի քանի ակնթարթ դեռ իմ պատկերացումներով էի՝ մտքով տուն էի գնացել, հանդիպել իմ մեծ բարեկամ Կոնստանտին Սարաջյանին և այնպիսի երախտապարտությամբ ու ինքնավստահ էի մտքով նրան պատկերացնում, որ

¹ Բրանդտ Վասիլի Գեորգիի (Կարլ Վիլիելմ, 1869-1923) - ազգությամբ գերմանացի, խորհրդային շեփորահար, մանկավարժ, 1890-1909 թթ. աշխատել է Մեծ թատրոնի սիմֆոնիկ նվագախմբում (1895 թ. մենակատար): 1900 թ. դասավանդել է Մոսկվայում, 1912-1923 թթ.՝ Սարատովի կոնսերվատորիայում: Շեփորի հանրաճանաչ ստեղծագործությունների հեղինակ (վարժություններ, մանրանվագներ, կոնցերտներ և այլն):

նույնիսկ ինքս զարմայա, երբ զգայի, թե որտեղ եմ և ինչու եմ այստեղ: Այս մտորումներով էի, երբ հանձնախմբի նախագահը պահանջեց էտյուդը նվագել, ու դեռ ավարտին չհասարած՝ Միխայիլ Տաբակովը՝ տեղից կանչեց:

- Նվագեցեք, խնդրեմ, ռե բեմոլ մասժոռ գամման երկու օկտավ:

Հանգիստ նվագեցի և քանի որ շուրթերս թարմ վիճակում էին, չէին հոգնել, մանավանդ «Կոնցերտշտյուկից» և վարժությունից հետո, նվագեցի պահանջված գամման, իր շրջվածքներով: Ավարտեցի նվագելն ու իջա բեմահարթակից, դուրս եկա միջանցք ու, մի կողմ

¹ Տաբակով Միխայիլ Ինդեկնտիկիչ (1877-1956) - խորհրդային շեփոքահար, մանկավարժ: Ռ.Ն.Ֆ.ՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), արվեստագիտության դոկտոր (1940): 1892 թ. ավարտել է Օդեսայի երաժշտական ուսումնարանի նվագախմբային ֆակուլտետը, ավելի ուշ կատարելագործվել է Կ.-Վ. Գ. Բրանդտի (շեփոք) և Ֆ. Փոլքամերի (գործիքավորում) մոտ: 1891-1895 թթ. նվագել է երկրի տարբեր քաղաքների՝ Օդեսա, Յալթա, Սևաստոպոլ, Խարկով, Կիև, Թբիլիսի, Դոնի Ռոստով սինֆոնիկ և օպերային նվագախմբերում, 1896 թ. Մոսկվայի մասնավոր ուսակական օպերային քատրոնում: 1898-1938 թթ. (ընդմիջումներով) Մեծ թատրոնի նվագախմբի արտիստ, միաժամանակ 1922-1932 թ.՝ Պերսիմ-Ֆանսի (հիմնադիրներից մեկը): Պարբերաբար աշխատել է Ս. Ա. Կուսնիցկու ղեկավարած նվագախմբում (1911-ից սկսած): 1920-ից եղել է և Ռուսաստանի հեղափոխական զինվորական խորհրդի ցույցողական նվագախմբի արտիստ, հանդես է եկել մենահամերգներով: Տաբակովը եղել է վիրտուոզ շեփոքահար, նրա նվագը գերել է ձայնի անսովոր գեղեցկությամբ՝ հզոր, պայծառ և միևնույն ժամանակ նուրբ, նրա «երգող» ձայնը լսելի է եղել նվագախմբի ցանկալիքով fortissimo-ի ժամանակ: Տաբակովը համարվել է Ռիխարդ Վագների («Աստվածների կործանումը») և Սելբսանդր Սկրյաբինի («Էքստազ պոեմի») շեփոքի նվագաբաժնի լավագույն կատարողը: 1902-1914 թթ. դասավանդել է Ս. Ն. Լեոնտովյան-Տենենտկյան երաժշտական դասընթացներում, 1914-1919՝ Մոսկվայի ֆիլիարմոնիկ ընկերության երաժշտաթատերական ուսումնարանում, 1915-ից՝ Մոսկվայի կոնսերվատորիայում (որ տեղափոխվել է ուսումնարանի իր դասարանի հետ միասին, պրոֆեսոր՝ 1923 թ.): 1928 թ. կոնսերվատորիայում վարել է զինվորական կապելմայստրների դասարանը, 1944-ից՝ զինվորական դիրիժորական ֆակուլտետի փողային գործիքների ամբիոնի վարիչ: Հարակից 1929-1943 թթ. դասավանդել է Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանում, 1944-1954 թթ.՝ Գնեսինների անվան երաժշտամանկավարժական ինստիտուտում (փողային գործիքների ամբիոնի վարիչ): Շեփոքահարների հայրենական դպրոցի հիմնադիրն է: Տաբակովն իր մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում դաստիարակել է շատ երաժիշտներ, որոնց բնում անվանի մանկավարժներ և կատարողներ Գ. Ա. Օրվիլ, Տ. Ա. Դոկչիյեր, Մ. Վ. Խաչատրյան, Ա. Ն. Երլոմին, Լ. Գ. Յուրև, Ն. Է. Պոլոնսկի, Վ. Ի. Շչուրկով, Հ. Կ. Մեսիայան, Ա. Մ. Կարապետյան, Ա. Ղ. Գրիգորյան և այլն: Հեղինակել է «Շեփոքի սկզբնական առաջադեմ ձեռնարկ» (1946-1953, 1-4-րդ մասեր) մեթոդական ձեռնարկը, ինչպես նաև ուսումնամեթոդական «Շեփոքի ամենօրյա վարժություններ» (1952) ձեռնարկը և «Շեփոքի և դաշամուրի մանրանվագներ», «Շեփոքի մանրանվագներ, դաշամուրի ընկերակցությամբ (Օրվիլի հետ համատեղ, 1948): Տաբակովի խմբագրությամբ լույս են տեսել Վ. Վուրմի «Շեփոքի ընտրանի էտյուդները (62): Նրան են պատկանում շեփոքի համար բազմաթիվ ստեղծագործությունների փոխադրություններ:

քաշված, սկսեցի սպասել: Հետո պետք է գիտակցեի, թե ինչ է տեղի ունենում, ինչ է կատարվում իմ ճակատագրի հետ, ինչպես է որոշվում իմ հետագա գործունեությունն ու ապագան:

Զննությունը դեռ շարունակվում էր, երկրի ամեն ծայրից եկել էին տարբեր գործիքներ նվագողներ, բայց մեծ թիվ էին կազմում մոսկվայիները, որոնք խեթ հայապքով էին մայում մեզ՝ զավառացիներիս վրա: Լեմինգրադյիներ, կիևյիներ, որոնք իրենց վեհանձն կեցվածքով մոսկվայիներից ետ չէին մնում:

Դե, միտք է, վայրկյանի հարյուրերորդականի ընթացքում աշխարհներ կարող է շրջել: Սպասողական ծանր վիճակը ավելի դժվարացավ, երբ վերջին երաժիշտը նվագեց, ու դրանից հետո սկսվեց քննարկումը, որի ավարտից հետո դուրս եկավ Սերգեյ Երյոմինը՝ Տաբակովի նախկին ուսանողը, որը փողային բաժնի ամբիոնի վարիչն էր ու սկսեց ընթերցել, թե ով ինչ գնահատական է ստացել: Եվ վերջապես հերթն ինձ հասավ:

- Խաչատրյան, մենք ձեզ գերազանց ենք նշանակել և որոշել ենք ձեզ միանգամից երկրորդ կուրս ընդունել, պայմանով, որ մինչև 1941թ. հունվարի 1-ը պարտադիր պետք է հանձնեք առաջին կուրսի քննություններն ու ստուգարքները:

Պատկերացնո՞ւմ եք իմ վիճակը: Ի՞նչ էր կատարվում ինձ հետ, ի՞նչ էր կատարվում իմ ներսում: Կարկամել էի և ոչ մի բան չէի կարողանում արտաբերել:

Ահա այսպես ես դարձա Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի փողային բաժնի շեփորի դասարանի ուսանող:

Այդ տարի ինձ հետ Մոսկվայի կոնսերվատորիա ընդունվող հայագոյի երաժիշտ չկար: Հետագայում եկավ Աշոտ Կարապետյանը, որը Երևանում Յուլյա Վարդազարյանի աշակերտն էր, իսկ Հայկազ Մեսիայանը Մոսկվայի կոնսերվատորիայի երրորդ կուրսեցի:

¹ Երյոմին Սերգեյ Նիկոլայի (1903-1975) - շեփորահար, մանկավարժ: ՌԽՖՍՀ վասակավոր արտիստ (1936), Մ. Ի. Տաբակովի աշակերտը: 1928-1935 թթ. Մոսկվայի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ, 1929-1947 թթ. միաժամանակ և Մեծ թատրոնի նվագախմբերի մենակատար: 1935 թ. երաժիշտ-կատարողների համամիութենական մրցույթի երկրորդ մրցանակակիր: Աշակերտներից է Յու. Ուսովը՝ մեթոդական ձեռնարկների, մի շարք փոխադրությունների հեղինակ:

եր: Մինչ այդ ավարտել էր կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարանը, ապա ընդունվել կոնսերվատորիա:

Ուսումնառության առումով իմ բախտը չբերեց: Կոնսերվատորիայում ես սովորեցի երեք տարի: Ընդունվեցի երկրորդ կուրս, և երբ երրորդ կուրսի ավարտական քննությունը նվազեցի, նվազախմբային ֆակուլտետի ղեկամն էր հայտնի քալջութակահար, Սլավա (Մստիսլավ) Ռոստրոպովիչի պրոֆեսոր Սեմեոն Կոզլուպովը՝ քննության արդյունքները հայտարարելով, իմ ազգանվանը հասնելով ասաց.

- Խաչատրյան, 5-ին գումարած, և մենք որոշեցինք ձեզ փոխադրել հինգերորդ կուրս:

Արդեն Մոսկվայում բնակվող ուսանող, համարձակություն էի ձեռք բերել և համարձակվեցի միջամտել, թե ես ղեռ պետք է սովորեմ և համաձայն չեմ այդպիսի որոշման հետ: Սեմեոն Կոզլուպովը շրջվեց ղեպի ինձ և մի քիչ կռախտ տոնով նշեց.

- Որոշողը մենք ենք: Չեզ չենք հարցնում:

Պարզ է, էլ ոչինչ չէի կարող ասել, առավել ևս՝ հակաճառել: Միայն երբ Տաբակովը դուրս եկավ, բացատրեց, որ բնական հանձնախմբի միաձայն քվեարկությամբ է կայացվել այդ որոշումը, այնպես որ, մի հուզվիր, ամեն ինչ լավ կլինի:

Կատարվածն այնպիսի անակնկալ էր, որ երկար ժամանակ խեթի չէի գալիս և ոչինչ չէի կարողանում պատասխանել:

Ինձ հաջողվեց Դմիտրովյան նրբանցքում, Մոսկվայի կենտրոնում գտնվող հանրակացարանում տեղավորվել (Պետրովկա և Պուշկինի փողոցների արանքում, ՄԳԱԹ-ից ոչ հեռու): Այնպես որ, կոնսերվատորիա ուղքով 10-15 րոպեում էի հասնում:

¹ Կոզլուպովներ՝ խորհրդային երաժիշտների ընտանիք Սեմեոն Մստիսլայի Կոզլուպովը (1884-1961), քալջութակահար, մանկավարժ, Ռ-ԽՖՍՀ ժողովրդական արտիստ (1946), արվեստագիտության դոկտոր (1941): Ա. Վ. Վերքիլովիչի և Ի. Ի. Ջայֆերաի աշակերտը: Խորհրդային քալջութակային դպրոցի հիմնադիրներից մեկը: Հանդես է եկել որպես մենակատար և անամբիխտ Ս. Ի. Տանեևի, Կ. Ն. Իգումնովի, Ա. Բ. Գորդենկովսկիի և այլոց հետ: 1908-1931 (ընդմիջումներով) Մեծ քաղաքի նվազախմբի մենակատար Մոսկվայի Ռ-ՄՕ-ի բաժանմունքի 50-ամյակի պատվին կայացած քալջութակահարների մրցույթի առաջին մրցանակակիր (1911): 1912 թ. դասավանդել է այդ քվում 1922-1961՝ պրոֆեսոր, Մոսկվայի կոնսերվատորիայում (1936-1954 թթ. քալջութակի և կոնտրաբասի ամբիոնի վարիչ): Աշակերտներից են՝ Մ. Լ. Ռոստրոպովիչը, Վ. Յա. Ֆեյդինը, Ն. Ն. Շախովսկայան:

Մշտական աշխատանք չգտա և ապրում էի իմ ոչ բարձր կրթա-
քոշակով, բայց շատ հաջող պարապում էի: Պրոֆեսորս անհրա-
ժեշտ համարեց ինձ հանձնարարել դասականների գործերը. Բախ-
Մեներգ, Հենդել՝ ջութակի թիվ 6 Սոնատը, շեփորի Կոնյերտը, Մո-
ցարտ՝ Մեներգ և այլ ստեղծագործություններ, որոնք ես նվագեցի
1940-1941 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում:
Երանք ինձ օգնեցին կատարելագործելու կատարողական շնչառու-
թյունս, ընդլայնելու ձայնատարողությունս, ձայնաշարի ողջ տա-
րածքում հավասար հնչողության հասնելուն, գեղեցիկ հնչողություն
և, իհարկե, դասականների ոճին տիրապետելու, որն ինձ շատ օգնեց
իմ հետագա կատարողական և մանկավարժական գործունեության
ընթացքում:

Երբեք չեմ մոռանա այն դեպքը, երբ Կ. Ս. Սարաջյանն այն
ձմռանը Մոսկվայում գտնվելիս այցելել էր Տաբակովի դասարան
ինձ լսելու: Նա շատ գոհ էր իմ հաջողություններից և օգտակար մի
քանի խորհուրդ տվեց:

Այսպես, ջանադիր պարապելով մինչև տարվա վերջ, հանձնեցի
առաջին և երկրորդ կուրսերի բոլոր քննությունները: Բայց ահա մի
կիրակի, առավոտյան ժամը 6-ին, հանրակայարան մտան զինկոմի-
սարիատի աշխատակիցներ, արթնացրեցին բոլոր տղաներին և
հայտարարեցին, որ Գերմանիայի հետ պատերազմ է սկսվել, մենք
պետք է գնանք զինկոմիսարիատ և զորակոչի ծանուցագրեր տարա-
ծենք: Դա 1941 թվականի հունիսի 22-ն էր: Անտանելի օրեր սկսվե-
ցին, զիշերային հերթապահություն հանրակայարանի տանիքում,
դժվարություններ մթերքի հայթայթման գործում և այլն:

Որոշ ժամանակ անց մայրիկիցս նամակ ստացա: Նա գրում էր,
որ ավագ եղբորս՝ Սաշային էլ են զորակոչել (կրտսեր եղբայրս՝ Վա-
հանը, 1939-ից ծառայում էր Կիևում և արդեն մասնակցել էր ֆիննա-
կան պատերազմին), և խնդրում էր Երևան վերադառնալ, քանի որ
ինքն էլ հիվանդ էր: Հարկադրված էի գնալ զինկոմիսարիատ, ամեն
ինչ բացատրել և Երևան մեկնելու իրավունք ստանալ:

Զինկոմիսարիատից թույլտվություն ստանալով՝ ես մեծ դժվա-
րությամբ Մոսկվա-Երևան գնացքի տոմս ձեռք բերեցի և հաջորդ օրը
Մոսկվայից մեկնեցի: Գնացքը լեփ-լեցուն էր, քնելու մասին խոսք

լինել չէր կարող, և ես հարկադրված չորս օր նստած վիճակում հասա Երևան:

Աշխատանքի անցա Հայֆիլիարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբում, և մենք, չնայած ամենաանհրաժեշտի բացակայությանը, քեք-կայանք: Մի քանի ամիս անց մեր հին տուն եկավ մի կին, ասաց, որ լենինգրադցի է, դաշնակահարուհի, ցանկություն ունի նվագախմբի հետ կատարել Դ. Դ. Շոտսկոպիչի դաշնամուրի և շեփորի թիվ մեկ Կոնցերտը, և որ Ցոլակ Վարդապարյանն իրեն խորհուրդ է տվել ինձ դիմելու: Ես հաճույքով համաձայնեցի և ծանոթանալու համար նա ինձ մոտ թողեց Կոնցերտի շեփորի նվագաբաժինը: Երկու օր անց սկսվեցին փորձերը սիմֆոնիկ նվագախմբի հետ, համերգը տեղի ունեցավ շաբաթվա վերջին: Հաջողությունը մեծ էր, երկար ժամանակ մեզ ծափահարում էին: Ծանոթ-անծանոթ մեզ ջերմորեն շնորհավորում էին, ինձ հատկապես մենամնագ կտորների համար:

Ընդհանրապես, պատերազմի տարիներին Երևան ժամանեցին հայտնի շատ մարդիկ՝ ակադեմիկոսներ, մեծ երաժիշտներ (Իգումնով և այլք), և հատկապես երաժշտական կյանքը ծաղկում էր ապրում և՛ ֆիլիարմոնիայում, և՛ օպերային թատրոնում: Լեվի-լեյուն դահլիճներ, հետաքրքրական բեմադրություններ և համերգային ծրագրեր, աշխարհահռչակ երաժիշտներ, դիրիժորներ, երգիչներ էին գալիս Երևան հյուրախաղերի:

1942 թ. Մ.Ա. Թավրիզյանն ինձ հրավիրեց օպերային թատրոն: Աշխատանքային պայմաններն այստեղ ավելի լավ էին, և ես համաձայնեցի: Այն տարիներին օպերային թատրոնում շատ էին հայ, ռուս, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների նոր, հետաքրքիր օպերաների և բալետների ներկայացումները, հրավիրվում էին հայտնի երգիչներ, մենապարողներ, բեմադրիչներ: Դահլիճը միշտ լեվի-լեյուն էր հանդիսականներով, և մենք էլ հետաքրքրությամբ աշխատում էինք:

1943 թ. Մ. Թավրիզյանը բեմադրեց Ջակոմո Մայերբերի՝ «Հու-

¹ Մայերբեր Ջակոմո (Յակոբ Լիբման Բերո Բիր, 1791-1864 Փարիզ)- ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր, ֆրանսիական «Մեծ օպերայի» վառ ներկայացուցիչ: Պարապել է Մ. Կլեմենտիի մոտ (դաշնամուր), Կ. Յ. Յելտրբի, Բ. Ա. Վեբերի և Հ. Յ. Ֆոհլերի մոտ (երաժշտական տեսություն և ստեղծագործություն): 1811-ից Դարնշտադտում պալատական երաժիշտ: 1816-1824 թթ. ապրել է Իտալիայում: 1824 թ. Փարիզում նրա գրած իտալական օպերաներից առանձնահմում է «Խաչակիրը Եգիպտոսում» (1824): 1827-1842 թթ. և 1846-ից՝ Փարիզում քազալորական գվարճանքի թատրոնի գլխավոր տնօրեն:

զընոտներ» օպերան: Առաջին շեփորի նվագաբաժինն այս օպերա-
յուն շատ դժվարին է, հետաքրքիր և մասնավորապես նշեմ մեծ մե-
նանվագը («գնչուական պար»), փայլուն տեխնիկա պետք է ունե-
նալ այն կատարելու համար: Գլխավոր փորձին իմ մենանվագի
կատարումից հետո նվագախմբի կոնցերտմայստր Սահակ Արտեմի
Խորոզյանը ոտքի կանգնեց՝ «բռավո» քայականչելով, նրան հետ-
ևեց ողջ նվագախումբը և սկսեց ծափահարել ինձ:

Շատ հաճելի էր, չէ՞ որ այդպես հազվադեպ է լինում, որ նվագա-
խումբն իր գործընկերոջը բարձր գնահատի: Հետագայում այդպիսի
դեպքեր էլի են եղել, սակայն դրանց մասին՝ հետո:

Ցավալի է, բայց Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան կոն-
սերվատորիան ես ավարտեցի երեք ուսումնական տարում: Պարզ է,
որ ուսումնառության տարիներին ուսանողական բոլոր երեկոներին,
համերգներին, միջոցառումներին մասնակցում էի, և անվերապահո-
րեն վերջում էին թողնում ինձ, այսինքն՝ համերգները, երեկոները
եզրափակելու: Եվ միշտ աչքս, նվագելու ժամանակ, Միխայիլ Տա-
բակովի վրա էր, որ ինքնագոհ ժպիտը դեմքին շուրջն էր նայում: Եվ
պատահական չէր, որ երբ նշվում էր Մոսկվայի կոնսերվատորիայի
հիմնադրման 80-ամյա հոբելյանը, կոնսերվատորիայի բոլոր ֆա-
կուլտետներում մրցույթներ հայտարարվեցին: Սակայն, քանի որ ես
աշխատում էի Ն. Գոլովանովի՝ մոտ՝ սիմֆոնիկ մեծ նվագախմբում
և Մոսկվայի կոնսերվատորիայի ավագ արտադրական սիմֆոնիկ
նվագախմբում, որին անդամագրվում էին չորրորդ, հինգերորդ կուր-
սի գրեթե բոլոր ուսանողները, միջազգային մրցույթների դափնեկիր-

¹ Գոլովանով Նիկոլայ Սեմեոնի (1871-1953) - խորհրդային դիրիժոր, դաշնակահար, կոնպոզիտոր, մանկավարժ: Խորհրդային Միության ժողովրդական արտիստ (1948): Վ. Ս. Օռլովի և Ա. Դ. Կաստալսկու սանը (դիրիժորություն): Խորհրդային Միության խոշորագույն դիրիժորներից մեկը: 1909 թ. հանդես է եկել որպես խմբավար, իսկ 1915 թ., Մեծ թատրոնի նվագախմբի դիրիժոր, խմբավարի օգնական, իսկ 1909-ից գլխավոր դիրիժոր: 1919 թ. գործուն մասնակցել է Կ. Ս. Ստանիսլավսկու հիմնած Մեծ թատրոնի օպերային ստուդիայի աշխատանքներին (1926-ից օպերային ստուդիա-թատրոն, 1929-ից՝ Մ. Ս. Ստանիսլավսկու անվան օպերային թատրոն, 1938-ից թատրոնի երաժշտական ղեկավար: Հանդես գալով որպես հիմնադիր դիրիժոր, 1937-ից Համամիութենական ռադիոյի սիմֆոնիկ մեծ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, խորհրդային շատ կոնպոզիտորների ստեղծագործությունների առաջին կատարողը: Բեմադրություններից են «Բորիս Գոդունով» (1948), «Սադկո» (1949), «Խոլանշչինա» (1950): 1907-ից մանկավարժ (1925-1948) Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր: 1916-1943 թթ. Ա. Վ. Նեժդանովայի կոնցերտմայստր: ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր (1946, 1949, 1950, 1951):

ներ, արդեն հայտնի շատ երաժիշտներ: Եվ քանի որ երկու խմբում էլ առաջին շեփորի նվագաբաժինն էի կատարում, ապա խնդրեցի իմ պրոֆեսոր Տաբակովին՝ ինձ թույլ տա չմասնակցել այդ մրցույթին, չնայած գայթակղությունը շատ մեծ էր: Սկզբում կարծես թե համաձայնեց և ոչինչ չասաց, բայց մրցույթից ընդամենը մեկ օր առաջ հանդիպեցինք կոնսերվատորիայում և նա ասաց.

- Ի՞նչ լավ է Ձեզ հանդիպեցի, թե չէ հանրակացարան պիտի գանգահարեի: Հենց նոր ավարտվեց ամբիոնի նիստը, և որոշեցին, որ դուք (ինձ միշտ «դուք»-ով էր դիմում) պետք է մասնակցեք միջ-կոնսերվատորիական մրցույթին:

Ես հարցրի, թե ի՞նչ պետք է նվագեմ, պատասխանեց, թե այն, ինչ դասարանում եք նվագում:

- Ամեն ինչ ձեզ մոտ լավ է ստացվում, առավել ևս Շչոլովովի՝ «Սկերպոն»: Այն եռամսա ստեղծագործություն է: Այս բոլորը տեղի էր ունենում դեկտեմբեր ամսին, իսկ ձմեռները Մոսկվայում ցուրտ են լինում: Միակ բանը, որ ինձ անհանգստացնում էր, այն էր, որ մարդավայել նվագեմ և արժանապատվորեն դուրս գամ այդ փորձությունից, որովհետև լավ կարծիք ունեին իմ մասին կոնսերվատորիայի հեղինակավոր պրոֆեսորները, սա ես պետք է խոստովանեմ: Եվ չէի կարող իմ պրոֆեսորի վստահությունը անկատար թողնել: Կատարվելիք ստեղծագործությունը նրա դեկավարությամբ՝ մշակել էինք պարբերություն առ պարբերություն: Միամաս գործն իր մեջ ներառում էր եռամսա կառույվածք, ունենալով և տեխնիկական, և երգային մասեր, որոնք ես անգիր գիտեի, սակայն կարևորը վաղվա օրն էր: Այդ իսկ պատճառով վաղ գնացի հանրակացարան, որը գտնվում էր Դմիտրովյան նրբանցքում և վաղ պառկեցի, առավոտյան թարմ արթնանալու համար: Առավոտյան վարժանքները 10-15

¹ Շչոլովով Վյաչեսլավ Իվանի (1904-1975) - խորհրդային կոմպոզիտոր և շեփորահարմանկավարժ: 1931թ. ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան, Մ. Տաբակովի դասարանը, ստեղծագործականը՝ Ա. Վ. Ալեքսանդրովի և Ան. Ն. Ալեքսանդրովի ղեկավարությամբ: 1939-1943 թթ. Սվերդլովսկի պատանի հանդիսատեսի թատրոնի երաժշտական մասի ղեկավար, այդ ընթացքում գրել է շուրջ 20 ներկայացման երաժշտություն: 1931 թ. դասավանդել է Սվերդլովսկի Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական ուսումնարանում, 1936-1975 թթ. Ուրալի կոնսերվատորիայում (պրոֆեսոր՝ 1947 թ.), ռեկտոր՝ 1951-1953 թթ., 1954թ.-ին՝ փողային գործիքների ամբիոնի վարիչ: 1948-1952 թթ. ՌուՖՅՍՀ կոմպոզիտորների միության Սվերդլովսկի բաժանմունքի նախագահ:

րոպէ կատարելույ հետո, մեկ անգամ էլ նվագելով վերհիշեցի Շչո-
լոկովի «Սկերպոն» և ոտքով հանգիստ գնացի կոնսերվատորիա:
Գեղարվեստական անցուղի, Գորկու և հետո Գերպենի փողոց և կոն-
սերվատորիա. այնքան հարազատ ու մոտ երթուղի, որ օրը մի քանի
անգամ էինք անցնում: Սակայն դեկտեմբերյան այդ օրն այնպիսի
սառնամանիք էր, որ այս հարազատ երթուղին տասնյակ կիլոմետր-
ների տարածություն թվայ: Համակուրսեցիներս ու մյուս ուսանող-
ներն արդեն հավաքված էին, և մտածեցի մի քիչ ուշքի գամ, տաքա-
նամ և հետո միայն գործիքը հանեմ: Սակայն չէի հասցրել այդ
մտածել, երբ դեկանի տեղակալը դուրս եկավ, թե Խաչատրյանն
այստե՞ղ է: Այստեղ է՝ եղավ պատասխանը:

- Եկեք:

Կոնսերվատորիայի հանրահայտ 47-րդ լսարանում էին տեղի
ունենում նվագախմբային ֆակուլտետի բոլոր միջոցառումները՝ հա-
մերգներ, բայ և փակ երեկոներ, հանդիպումներ, քննություններ և
այլն: Ներս մտա և, անցնելով հանձնախմբի անդամների կողքով,
տեսա ինձ հարազատ պրոֆեսորների բարյայական, ժպտալու
դեմքերը, ավելի սրտապնդեցի և բարձրացա բեմահարթակ: Հետո
իմացա, որ մինչ այդ Հայկազն արդեն նվագել էր, իսկ ես տեղեկու-
թյուն չունեի, և նվագակցող դաշնակահարուհին հրավիրեց Հայկա-
զին թերթելու նոտաները նվագելու ժամանակ:

Լարեցի գործիքը, սկսեցի նվագել: Ինձ մոտ սովորություն էր
դարձել արդեն՝ նվագելու ժամանակ հետևել Տաբակովի դեմքի ար-
տահայտությանը, որի մկանների մշանակությունն անզոր գիտեի:
Ավելի վստահ շարունակեցի ու ինձ թվայ, որ լավ ավարտեցի, հան-
գիստ իջա բեմահարթակից ու դուրս եկա: Գործիքը հավաքեցի,
գնացի հանրակացարան, մտածելով, որ ժամը երկուսին մասնագի-
տության դասի պետք է գնամ, կհանգստանամ, ուժերս ի մի կրերեմ
և երբ գնամ դասի, Տաբակովից էլ կիմանամ և՛ արդյունքների, և՛ դի-
տողությունների մասին: Չնայած, վաղույ արդեն գիտեի, եթե նվա-
գելու պահին նա մեղմ ժպիտով գլուխը տարուբերում էր, ուրեմն
ամեն ինչ կարգին է, և ինքն էլ գոհ է լինում կատարումից: Եվ երբ
հանձնախմբի անդամների կողքով էի անցնում, իմ հասցեին արված
այսպիսի արտահայտություն լսեցի.

- Ա՛յ քեզ շեփորահար:

Հանրակապարանում հանգստանում էի, երբ ներս մտավ իմ բա-
րեկամ-ընկերներից մեկը, որն ինձ հետ միևնույն սենյակում էր ապ-
րում, մրցույթի մասնակից ֆլեյտահար Վենյկովսկին և ասաց.

- Շնորհավորում եմ: Բոլոր հինգ շեփորահարներից դու միակն
էիր, որ անցար երկրորդ փուլ:

Ապշեցի և ասացի, թե չի կարող պատահել, հինգ շեփորահար,
արդեն երեք ամիս նախապատրաստվում էին ու հանկարծ ե՞ս ան-
ցա, ականջներիս չէի հավատում:

- Դե, եթե չես հավատում, այսօր մասնագիտության դաս ունես,
կզմաս, կիմանաս:

Արդեն սկսեցի ընկերոջս ասածներին հավատալ ու անհամբեր
սպասում էի ժամը երկուսին:

Գնացի կոնսերվատորիա, արդեն ցուրտն ու ճանապարհն ինձ
վրա ազդեցություն չունեին: Բացեցի դուռը, ներս մտա, Տաբակովն
իր սիրելի բազկաթոռին նստած սեղանի առջև, ինձ տեսնելով վեր
կացավ տեղից և ընդառաջ գալով սեղմեց ձեռքս ու ասաց.

- Շնորհավորում եմ, բոլոր շեփորահարներից միայն դուք ան-
ցաք երկրորդ փուլ:

Մտածեցի՝ ընկերս ճշմարտություն էր ասում: Իսկ մեր դասարա-
նում էին շեփորահար իմ դասընկերները, որոնց թվում և Հայկազ Մե-
սիայանը:

Տաբակովը խոսքը շարունակելով ավելացրեց. «Այսօր դուք
նվագելու պետք չունեք, հանգստացեք և նախապատրաստվեք
մրցույթի երկրորդ փուլին»:

Ինչպես և դրսում բոլոր հայերը միմյանց հարազատանում կամ
բարեկամներ են դառնում, մենք էլ Հայկազի հետ կարծես թե ջերմ
էինք և ես նրան դառնալով ասացի. «Հայկազ, տուն գալի՞ս ես»: Նա
շրջեց դեմքը և հեռացավ ինձանից մի կողմ՝ ցուցադրելով, որ նեղա-
ցել է: Ես էլ մտածեցի. «Ինչպես կուզես, ես քեզ հետ մարդավարի,
խսկ դու»... Այդ օրից էլ նա իր գայրույթն ու նախանձը մինչև օրս պա-
հում է իմ հանդեպ:

Միջկոնսերվատորիական մրցույթի երկրորդ փուլը, նվիրված էր
Պյոտր Չայկովսկու անվան կոնսերվատորիայի հիմնադրման

(1866 թ.) 80-ամյակին, շատ հաջող անցավ, անցա երրորդ փուլ, գովեստի շատ խոսքեր ասասյին իմ հասցեին թե հանձնախմբի անդամները, թե՛ հանդիսականները:

1946 թվականի դեկտեմբերի 18-ին երջանկության զգացումով նվազեցի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, պատասխանատվության զգացումը մեծ էր, և ես պատվով կատարեցի իմ առջև դրված խնդիրը, արժանանալով բուռն ծափողջույնների:

Ի դեպ, մեկ անգամ համարձակվելով դիմեցի Միխայիլ Տաբակովին.

- Միխայիլ Ինոկենտիկիչ, ինչո՞ր բոլորին դու եք դիմում, իսկ ինձ՝ Դուք:

- Չէ՞ որ Դուք եվրոպացի եք,- ստացա պատասխանը: Իսկ մյուսները...

Ծիծաղելի է ինձ համար, բայց այդ լուրը շատ արագ տարածվեց շրջապատում, և տղաներն էլ միառժամանակ ինձ «եվրոպացի» էին կանչում:

Ահա այդպիսի բաներ:

Մոսկվայի կոնսերվատորիայի ցանկացած ուսանողի համար մեծագույն երջանկություն է կոնսերվատորիայի Մեծ դահլիճում նվազելը, որը հայտնի է ամբողջ աշխարհում: Աշխարհի հայտնի շատ երաժիշտներ Մոսկվա հյուրախաղերի գալիս մեծագույն պատիվ են համարում այդ դահլիճում հանդես գալը, որը հիանալի հնչեղություն ունի և միշտ ընտրյալ հանդիսատես:

Երջանիկ բախտ վիճակվեց ինձ կես տարվա ընթացքում, դեկտեմբերի վերջից մինչև հուլիսի 1-ը, երկու անգամ նվազել Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան կոնսերվատորիայի Մեծ դահլիճում: Այլևս չեմ խոսում այն մասին, որ Մեծ դահլիճի բեմահարթակում հանդես էի գալիս կոնսերվատորիայի ավագ կուրսերի ուսանողներից կազմված արտադրական սիմֆոնիկ նվագախմբի կազմում, կատարելով առաջին շեփոթի նվագաբաժինը: Դա ինձ համար շատ սովորական էր թվում: Ուրիշ բան է այդ անվանի, հանրահայտ դահլիճում մենակատարել: Այդ պահին թեզ պատած զգացումը ոչ մի բանի հետ համեմատելի չէ և աննկարագրելի: Եվ երբ նվազեցի ավարտական պետական քննական ծրագիրը, որը համընկավ 13

Քվի հետ, պատկերացնում եք՝ հունիսի 13-ին, ինձ համար երջանկություն էր: Հետո պարզվեց՝ ինձ լսելու էր եկել իմ բարեկամ, անվանի շեփորահար, Մեծ թատրոնի մենակատար Տիմոֆեյ Դոկչիցերը, դա քիչ է, իր հետ բերել էր նաև թատրոնի նվագախմբի տնօրենին: Բնական ծրագիրն ավարտելուց հետո, համաձայն իմ սովորության, իջա երկրորդ հարկ, որտեղ հանդերձարանն էր, և սպասում էի իմ պրոֆեսորին:

Տեսնեմ՝ առաջինն իջնում է Տիմոֆեյ Դոկչիցերն ու դեռ հեռվից. «Ինչպես միշտ, քո համեստությունն ես դրսևորում, դահլիճում չես սպասում, որ շնորհավորենք», իր գիրկն առավ ինձ և համբուրելով ավելայցրեց. «Ես քեզ սրտանց շնորհավորում եմ, կեցցես, հրաշալի նվագեցիր»: Բնական իմ ծրագրում ներառել էի Պեսկինի առաջին Կոնցերտը, որի առաջին կատարողն իմ մտերիմ բարեկամն էր և որ մեր միջև մասնագիտական նախանձի նշույլ անգամ չկար: Ես հպարտանում եմ այդ բարեկամությամբ, որը մինչև օրս շարունակվում է: Կոնցերտ, որը ի հայտ է բերում շեփորի տեխնիկական, ձայնային, ձայնածավալային բոլոր հնարավորությունները:

Հետո եկան Մ. Ի. Տաբակովը և Ա. Ֆ. Գեդիկեն: Վերջինս պետական քննական հանձնաժողովի նախագահն էր: Ալեքսանդր Գեդիկեն մոտեցավ, գրկեց, համբուրեց, ջերմ շնորհավորեց, նույնը և Մ. Ի. Տաբակովը: Երկուսով էլ հուզվեցինք, մի պահ մնացինք գրկախառնված: Բոլորի ներկայությամբ իմ պրոֆեսորն ասաց. «Առանց մրցույթի և այլևայլի Չեզ հրավիրում են աշխատելու Մեծ թատրոնի նվագախմբում, որպես առաջին շեփորահար»:

Առաջարկությունն, անշուշտ, պատվաբեր էր ու անչափ գայթակղիչ. ցանկացած երաժշտի համար Մեծ թատրոնում աշխատելը մեծագույն հպարտություն է, նաև երջանկություն: Սակայն, ես պարտական էի Կոնստանտին Սարաջյանին: Հիշո՞ւմ եք, նրա հորդորներով ես Մոսկվա մեկնեցի սովորելու: Ուսումնառության տարիներին նրանից նամակներ ու գրություններ էի ստանում, նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում իմ առաջխաղացման, հաջողությունների նկատմամբ և անկեղծ ուրախանում:

Ընկա տարակուսանքի և մտատանջության մեջ, որոնց մասին ասացի իմ պրոֆեսորին: Երկար խորհելուց հետո նա ասաց. «Գի-

տեք, իհարկե այստեղ՝ Մոսկվայում, դուք երրորդը կլինեք, իսկ Երևանում՝ առաջինը և՛ նվազախմբում, և՛ կոմսերվատորիայում, որպես մանկավարժ: Այստեղ՝ կոմսերվատորիայում դասավանդելու հնարավորություն դեռևս չէք կարող հույս ունենալ, այնպես որ, մտածեք ու որոշեք»: Ես իրեն պատմել էի այդ մեծ Մարդու՝ Կոմստանտին Մարաջյանի իմ նկատմամբ ունեցած բարյալակամության և հայրական վերաբերմունքի մասին, մի խոսքով, ամեն ինչից քաջատեղյակ և իրազեկ էր: Եվ երբեք չեմ մոռանում, որ մեկ անգամ գործուղման էր Մոսկվայում, ու եկել էր մեր դասարան ինձ լսելու համար և որպես երաժիշտ նաև ջերմ հարաբերությունների մեջ էր Մ. Տաբակովի հետ: Նրանից էր հետաքրքրվել, իմացել իմ դասաժամերի մասին և երբ լսարան մտա, ապշեցի՝ իրեն տեսնելով, անսպասելի հանդիպում էր. «Այո, եկել եմ քեզ լսելու, գիտեմ հաջողություններիդ մասին»: Արդարացուցիչ հանգամանքներ միշտ էլ կարելի է գտնել, բայց իմ ներքին «ես»-ը ինձ կտանջեր ամբողջ կյանքում, եթե ես նրան տրված խոստումն դրժեի ու մնայի Մոսկվայում և որի համար դյուղն անգամ էլ չեմ ավառսում:

Պատերազմի տարիներին, երբ ընդհատվեց իմ ուսումնառությունը հայտնի պատճառներով՝ եղբայրներիս էին զորակոչել, մայրս էր հիվանդ, ես վերադարձա Երևան: Միմֆոնիկ նվազախմբում և օպերային թատրոնում աշխատելու հետ նաև դասավանդում էի երաժշտական ուսումնարանում և տասնամյա մասնագիտական երաժշտական դպրոցում: Երկու տեղում էլ աշակերտներ ունեի, լավերը և՛ այստեղ, և՛ այնտեղ կային: Տասնամյակը 1944 թվականին ավարտեց Անուշավան Գրիգորյանը, իսկ Միմիկը՝ ուսումնարանը: Մարաջյանը և պրոռեկտոր Կարպ Դոմբայանը ինձ աշխատանքի հրավիրեցին կոմսերվատորիա, մինչև կրկին Մոսկվա մեկնելս՝ ուսումնա շարունակելու:՝ Վերը հիշատակված տղաները խնդրում էին իրենց Մոսկվա տանելու մասին: Եվ այստեղ էլ ես խոստումս կատարեցի՝ Տաբակովին պատմեցի նրանց մասին: Նրանք եկան Մոսկվա, ներկայացան. նվազեցին և իմ պրոֆեսորը նրանց ընդառաջեց: Նրանք դարձան իր ուսանողները:

1944 թվականին, երբ աշխատում էի օպերային թատրոնի նվա-

¹ Այս մասին գրքի ռուսերեն տարբերակում ավելի մանրամասն է նկարագրված:

գախմբում, որի գլխավոր դիրիժորը Միքայել Թավրիգյանն էր, Թբիլիսիում կազմակերպվեց Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտության տասնօրյակ, որին պետք է նվագեինք Ա. Խաչատրյանի, Հ. Ստեփանյանի, Կ. Չաքարյանի և ուրիշների ստեղծագործությունները: Դե, իհարկե, հատկապես Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, որը նաև «Չանգերով» է կոչվում: Բոլոր ստեղծագործություններն էլ մեծ հաջողություն ունեցան, անհամեստ չքվամ, գերազանց կատարեցինք հայ կոմպոզիտորների երկերը և հատկապես հայ սիմֆոնիկ երաժշտության անհապետի՝ Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, որը հայ երաժշտության պատմության մեջ իմ կարծիքով անգերազանցելի է մինչև այժմ:

Բուռն ծափահարություններով ավարտվեցին մեր ելույթները և երբ համերգն ավարտվեց, կանգնած էինք երաժիշտներով Միքայել Թավրիգյանի հետ, մեզ մոտեցավ այսօր հայտնի թավջութակահար Ալեքսանդր Չաուշյանը, որը Թբիլիսիի կոնսերվատորիայի ուսանող էր և ասաց. «Միխայիլ Արսենիչ, մեր բոլոր երաժիշտները (Թբիլիսի), նաև Բաքվի նվագախումբը, բոլորն ասում են, որ Ձեր նվագախմբի երաժիշտները պետք է ծնկի գան առաջին շեփորահարի առաջ», որն, իհարկե, ես կատակի տեղ ընդունեցի: Իսկ երբ 1945-ին նորից Մոսկվայում էի արդեն, Երևանից հրավիրեցին Արամ Խաչատրյանի սիմֆոնիայի կատարմանը մասնակցելու, որը նվիրված էր Խորհրդային Հայաստանի 25-ամյակին:

Մոսկվայի կոնսերվատորիայի ռեկտորի անունով նամակ էր ստացվել, որ ինձ թույլատրեն Երևան գալու հորեյլանական համերգներին մասնակցելու համար:

*

* *

Մոսկվայի կոնսերվատորիայի 80-ամյակին նվիրված հոբելյանական շաբաթն ավարտեց կոնսերվատորիայի ավագ նվագախումբը, որի կազմում ես նվագում էի առաջին շեփորի նվագաբաժինը: Համերգը, որը ղեկավարում էր Նիկոլայ Անոսովը¹, պրոֆեսիոնալ բարձր մակարդակով անցավ:

Որոշ ժամանակ անց, մոտավորապես 1947 թվականի հունվարի կեսերին, աշխատանքիս ուշ երեկոյան հանրակացարան վերադառնալով տեղեկացա, որ իմ ընկերներ Հայկազ Մեսիայանն ու Աշոտ Կարապետյանը կոիվ են գցել օսեթիայի ստուդիայի ուսանողների հետ (կոնսերվատորիային կից գործում էր ստուդիա, որի ուսանողները նույնպես ապրում էին մեր հանրակացարանում): Մեծ աղմուկ է բարձրացել, և բոլորն էլ մեղադրում էին իմ ընկերներին: Հաջորդ առավոտյան կոնսերվատորիայի ռեկտորի հրամանով իմ երկու ընկերներն էլ հեռացվեցին կոնսերվատորիայից և պետք է ազատեին հանրակացարանի իրենց զբաղեցրած սենյակները:

Կոնսերվատորիայի բոլոր հայ ուսանողների համար դա մեծ խայտառակություն էր: Բոլորս շատ ապրումներ ունեինք այդ կապակցությամբ: Իմանալով, որ Արամ Խաչատրյանի հետ լավ հարաբերությունների մեջ եմ, Աշոտ Կարապետյանն աղաչում էր ինձ զանգահարել մեծանուն կոմպոզիտորին, որպեսզի նա օգնի վերականգնելու ուսանողի իր իրավունքները, որովհետև տուժել է Հայկազի պատճառով և ինքը մեղք չունի:

Դեռևս Երևանում 1945 թվականի նոյեմբերին հոբելյանական համերգների օրերին Երկրորդ սիմֆոնիայի վայլուն կատարումից հետո Ա. Խաչատրյանն ինձ տվեց մոսկվյան բնակարանի իր հեռախոսի համարը և ասաց. «Եթե Մոսկվայում իմ օգնության կարիքն ունենաս, անպայման զանգահարիր ինձ»:

¹ Նիկոլայ Պ. Անոսով (1900-1962) - խորհրդային դիրիժոր, մանկավարժ: Ռուսաստանյան Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ (1951): 1930-ից դիրիժորական գործունեություն է ծավալել, այդ թվում 1943-1948 թթ. Մոսկվայի ֆիլհարմոնիայում: 1940-ից Մոսկվայի կոնսերվատորիայի օպերային ստուդիայի դիրիժոր և մանկավարժ (1950 թ.՝ պրոֆեսոր, 1945-ից օպերային-սիմֆոնիկ դիրիժորության ամբիոնի վարիչ, նրան աշակերտել են Գ. Ն. Ռոժդեստովենկին, Մ. Ժյուրալսիսը: Համերգներ է ունեցել արտասահմանում:

Երեկոյան առանց հապաղելու հենց հանրակայարանից Աշոտի ներկայութեամբ զանգահարեցի իմ սիրելի կոմպոզիտորին և խնդրեցի օգնել: Սակայն, չգիտեմ ինչու, նա ասաց. «Մեսիայանն իսկական խուլիզան է, իսկ իրենից ի՞նչ է ներկայացնում Կարապետյանը»: Ես, իհարկէ, ամեն կերպ զովարանում, արդարացնում էի Աշոտին ու Արամ Իլիչն ասաց. «Կիրակի Վիսարիոն Յակովլևիչն՝ ինձ մոտ ճաշի է, ես կաշխատեմ օգնել»:

Կիրակի երեկոյան ես նորից զանգահարեցի Արամ Խաչատրյանին և նա ուրախացրեց ինձ՝ ասելով, որ ամեն ինչ կարգին է, վաղը վերականգնման հրամանը կախված կլինի:

Եվ իրոք, երկուշաբթի առավոտյան անհամբերութեամբ կոնսերվատորիա գալով՝ տեսանք միայն Աշոտ Կարապետյանին վերականգնելու հրամանը, իսկ Հայկազ Մեսիայանը ստիպված վերադարձավ Երևան և աշխատանքի տեղավորվեց օպերային թատրոնի նվագախմբում:

*

* *

Ե կավ պետական բնութայուններին նախապատրաստվելու ժամանակը: Մոտավորապէս 1947 թվականի փետրվարի կեսերին ես սկսեցի Տաբակովի հանձնարարած ծրագիրը սովորել: Յո. Ս. Բախի սի բեմով մինոր «Պրելյուդը», այս ստեղծագործության

¹ Շերալին Վիսարիոն Յակովի (1902-1963) - խորհրդային կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ, Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ (1947): Արվեստագիտության դոկտոր (1941): Ն. Յա. Մյասկովկսու աշակերտներից ԿՄ մուկոլյան բաժանմունքի նախագահ, 1941-1942: Շերալինն իր ստեղծագործության մեջ զարգացրել է ռուսական դասական երաժշտության ավանդույթները: Մեծ տարածում ունի նրա «Կամակոր կնոջ սանձահարումը» օպերան: Ավարտել ու խմբագրել է Մոստորգսկու «Մորոչիյան տոնավաճառը», Գուլակ Արտեմովսկու «Չապրոթցին Դանուքի այն կողմում» օպերաները, Գլինկայի «Ռուսական երկու րեմայով սիֆոնմիան»: 1928 (ընդմիջումով) դասավանդել է Մոսկվայի կոնսերվատորիայում (1935 պրոֆեսոր, 1940-1941 թթ. ստեղծագործական բաժնի ամբիոնի վարիչ, 1942-1948 թթ՝ ուսկտոր): Աշակերտներից են Յու. Մ. Ալեքսանդրովը, Լ. Աուստերը, Ս. Ա. Գուբայդուլինան, Կ. Վ. Դեմիսովը, Ն. Ն. Կառետնիկովը, Բ. Ի. Կորգանովը, Վ. Կուչերան (Չեխիա), Ա. Ա. Նիկոլսևը, Ա. Ն. Պախմուտովան, Վ. Թորմիսը, Տ. Ն. Խրեննիկովը, Կ. Ս. Խաչատրյանը: ԽՍՀՄ պետական մրցանակակիր (1943, 1947):

փոխադրությունը հրատարակվել էր դեռևս հեղափոխությունից առաջ, պետք է կատարեի նաև Պեսկինի նոր ավարտած, շատ բարդ և դժվարին կոմպերտը: Այն փայլուն կատարել էր միայն Տիմոֆեյ Դոկշիցերը և որը ես նույնպես արդեն կատարել էի և նաև Շչոլոկովի «Սկեպոն»։ Ծավալուն մի ծրագիր, որի պատրաստման համար բավականին ժամանակ ունեի, առավել ևս, որ աշխատում էի ամիսը 12-13 օր, երեկոյան ժամը 6-ից: Ես հանգիստ սկսեցի մշակել իմ պրոֆեսորի առաջադրած ստեղծագործություններն ամենայն մանրամասնորեն և պատասխանատվության մեծ զգայունով:

Շուտով հայտնի դարձավ, որ մասնագիտության ավարտական պետական քննության օրը նշանակված է հունիսի 13-ին (13 թիվն ինձ դուր չէր գալիս, բայց ինչ կարող ես անել): Պետական քննական հանձնախմբի նախագահին էր հանրահայտ երգեհոնահար, կոմպոզիտոր Ալեքսանդր Ֆյոդորի Գեդիկեն: Քննությունը տեղի էր ունենում կոմսերվատորիայի Փոքր դահլիճում:

Վերջապես եկավ քննության օրը, այս անգամ ինձ երջանկություն պարգևող 13 ամսաթիվը: Բարձրացա Փոքր դահլիճի բեմահարթակ, նվագեցի Յո. Ս. Բախի «Պրելյուդը», Պեսկինի եռամաս կոմպերտը և Գեդիկեն տեղից կանչեց. «Շնորհակալություն, բավական է»: Դուրս եկա դահլիճից, իջա երկրորդ հարկ և սպասեցի արդյունքներին: Այդ մասին առաջ անցնելով պատմեցի վերևում:

*

* *

աշվի առնելով բոլոր հանգամանքները, և՛ Կ. Սարաջյաննի տված իմ խոստումը, և՛ ֆիլիարմոնիայի տնօրեն Գրիգոր Դոմբաևի հորդորները, և՛ հարագատներին, որոնք սպասում էին ինձ, կշռադատելով բոլոր հանգամանքները և իմ պրոֆեսորի ասածը, որը վերը նշեցի, բայց ուզում եմ մեջբերել իր խոսքերը. «Իհարկե, Մեծ թատրոնում դուք Պոլոնսկույ (Տաբակովի աշակերտներից), Տիմոֆեյ Դոբշիցերից հետո կլինեք երրորդը, հազիվ թե Մոսկվայի կոմսերվատորիայում հաջողվի ձեզ դասավանդել: Երևանում դուք

առաջինը կլինեք և՛ նվազախմբում, և՛ կոնսերվատորիայում, որովհետև Հայկազը ձեզ մրցակից չէ, նա շեփորահար չէ, այլ կոռնետահար, բոլոր շեփորին չկաչի»:

Հարցը որոշված էր, և ես հեռագրեցի Երևան, Կոնստանտին Սարաջյանին, որ Երևանում կլինեմ հուլիսի սկզբին:

Պետական քննությունից մի քանի օր անց հայտնի դարձավ, որ իմ առիթով պետական հանձնախումբը երեք առաջարկություն է արել ռեկտորատին: Առաջին՝ ազգանունս մարմարե տախտակին գրել, երկրորդ՝ իմ մասնակցությունը Պրահայի միջազգային փառատոնին և երրորդ՝ հունիսի 30-ին Մեծ դահլիճում ավարտական համերգին մասնակցելը:

Առաջին առաջարկությունն անհնարին էր իրագործել, որովհետև ստուգումներից պարզվեց, որ ես երկու «բավարար» գնահատական ունեմ՝ դեռ առաջին կուրսում՝ հարմոնիայի և երրորդ կուրսում գերմաներենից: Երկրորդը նույնպես անընդունելի էր, որովհետև միջազգային փառատոններին մասնակցում եմ մինչև 30 տարեկան երիտասարդ երաժիշտները, իսկ ես 32-ի մեջ էի արդեն:

Մնում էր միայն երրորդը՝ Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հանդիսավոր երեկոյին իմ մասնակցությունը:

Անսամբլի և ՍՄԿԿ պատմությունից պետական քննությունները գերազանց հանձնելուց հետո ես սկսեցի հանդիսավոր համերգի համար նախապատրաստել Պետկինի կոնցերտի առաջին մասը, դաշնակահարի ընկերակցությամբ:

Վերջապես եկավ 1947 թվականի հուլիսի 1-ի երեկոն, Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճը լեվի-լեյուն էր լավագույն երաժիշտներով, կատարողական արվեստի գնահատողներով, պրոֆեսորներով, կոնսերվատորիայի ուսանողներով:

Անչափ ազդեցիկ էր հանդիսավոր մասը, ռեկտոր Վիսարիոն Շերալինը համերգի մասնակից շրջանավարտներին հանձնեց ավարտական դիպլոմները, և ես այն երջանիկների թվում էի, որոնց շնորհիվ Մոսկվայի կոնսերվատորիայի ավարտական դիպլոմը:

Սկսվեց համերգը: Հանդես էին գալիս լավագույն շրջանավարտները՝ ջութակահարներ, մեներգիչներ, այլ կատարողներ: Հերթն ինձ հասավ, և ես մեծ հուզմունքով, կես տարվա ընթացքում

արդեն երկրորդ անգամ Մեծ դահլիճի բեմահարթակ բարձրացաւ:

Չնայած ինձ պատած մեծ հուզմունքին, հաջող նվագեցի: Ձերն ծափերով ողջունեցին իմ կատարումը հանդիսականները, համերգից հետո շատերը՝ և ծանոթ-բարեկամ, և՛ անծանոթ, սրտանց շնորհավորում և դրվատանքի խոսքեր էին ասում, սակայն ես, իհարկէ, հասկանում էի, որ հուզմունքի պատճառով դժվարին պասաժներից մի քանիսում պատահականություններ եղան:

Այդ հանդիսավոր երեկոյով էլ եզրափակվեց Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան կոնսերվատորիայում իմ ուսումնառությունը (յավոք՝ կարճատև):

Հաջորդ օրն առավոտյան՝ 1947 թվականի հուլիսի երկուսին ինքնաթիռով ես մեկնեցի Երևան:

*

* *

Այդ օրվանից էլ սկսվեց երկարամյա իմ աշխատանքային գործունեությունը Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, Հայֆիլհարմոնիայի պետական սիմֆոնիկ նվագախմբում, ապա օպերային թատրոնում, ավելի ուշ՝ Երևանի Չայկովսկու անվան երաժշտական տասնամյակում, զինվորական-երաժշտական գիշերօթիկ դպրոցում:

Մոսկվայից վերադառնալուց մի քանի օր անց ֆիլհարմոնիայում ես հանդիպեցի իմ ծանոթներից Մարգո Բրուտյանին, որն ինձ հայտնեց, թե «Սովետական կուլտուրա» թերթն է ստացել, որտեղ ընդարձակ գրախոսական է գետեղված Մոսկվայի կոնսերվատորիայի ավարտական հանդիսավոր երեկոյի մասին, և որ իմ մասին էլ որոշ քաներ են գրել:

Թերթը ձեռքս առնելով՝ իմ մասին ընթերցեցի հետևյալ տողերը. «Նվագախմբային մասնագիտություններից լավագույն ներկայացուցիչներ էին շեփորահար Մ. Խաչատրյանը և ջութակահար Էմին Լեյվանդը: Խաչատրյանը, ինչպես յուրահատուկ է հեղինակավոր արտֆեստր Մ. Տաբակովի ուսանողների մեծամասնությանը,

գործիքի գեղեսիկ երգող ձայնի է տիրապետում և երաժշտական ֆրազի հիանալի զգայողություն ունի»։¹

1947 թվականի ամռան մի օր, «Ֆլորա» այգում գտնվող Հալֆիլհարմոնիայի ամառային դահլիճում փորձում էին Արամ Խաչատրյանի դաշնամուրի և նվագախմբի կոմպերտը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Մեծակատարն էր կոմսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի շրջանավարտներից Մարիաննա Հարությունյանը: Ինձ շատ դուր եկավ նրա կատարողական արվեստը, և ընդմիջմանը մենք դեմ-դիմաց դուրս եկանք այգու ծառուղիներից մեկում, ես անկեղծորեն նրան շնորհավորեցի լավ կատարման համար:

Մի քանի օր անց մենք պատահաբար հանդիպեցինք Արոլյան փողոցում և նրա ընկերուհին, որ ինձ ծանոթ էր, մեզ ծանոթացրեց:

Այդ ժամանակ կոմսերվատորիայում դեռևս պետական քննություններ, հաշվետու համերգներ, տարբեր երեկոներ, նույնիսկ դիմակահանդեսներ էին տեղի ունենում, որոնց ժամանակ մենք Մարիաննայի հետ հաճախ էինք հանդիպում և ավելի մոտից ճանաչեցինք միմյանց: Մեր զգայմունքները միմյանց նկատմամբ աստիճանաբար աճում էին... Բայց այդ մասին հետո...

Իմ երաժշտական կյանքի ասպարեզում, հաջողությունների մեջ յուրահատուկ, առանձնակի դեր է խաղացել Երևանի Կոմիտասի անվան կոմսերվատորիայի ռեկտոր Կոնստանտին Սարաջյանը:

Արտակարգ երաժիշտ, դիրիժորը ժամանակ էր գտնում ներկա գտնվելու բոլոր քննություններին, դաշնակահարների, լարային, փողային գործիքների, մեներգիչների բոլոր փակ երեկոներին անխտիր, մասնակցում էր ետքնական և փակ երեկոների քննարկումներին, անում արժեքավոր դիտողություններ: Եվ պատահական չէր, որ մենք քննություններին, ստուգարքներին նախապատրաստվում էինք մանրակրկիտ, ամենայն խստագույն պատասխանատվությամբ: Ինձ նա վերաբերվում էր առանձնահատուկ ուշադրությամբ, բարձր էր գնահատում և որպես կատարող (նրա ղեկավարությամբ հաճախ էինք

¹ «Սովետական կուլտուրա» թերթի 1947 թ. հուլիսի համարներից, գրախոս՝ Ի. Պոպով: Թերթի այս համարի բնագիրը գտնվում է Երևանի կոմսերվատորիայի արխիվում, Մ. Խաչատրյանի այլոս:

մենք օպերային թատրոնի և պետական սիմֆոնիկ նվագախմբերով հետաքրքիր սիմֆոնիկ ծրագրեր կատարում), և որպես մանկավարժ, որովհետև շատ հաճախ լսում էր իմ դասարանի աշակերտ-ուսանողներին: Եվ պատահական չէր, որ կոնսերվատորիայում իմ մանկավարժական գործունեության յոթերորդ տարում (1947-1954 թթ.) ես արժանացա դոցենտի գիտական աստիճանի: Ինձ այդպիսի գնահատանքի էր արժանացնում նաև իմ ուսուցիչը, պրոֆեսոր Միխայիլ Տաբակովը, որի մասին վերը պատմեցի որոշ քաներ: Երբ ավարտեցի Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիան, նա ինձ նվիրեց իր լուսանկարը հետևյալ մակագրությամբ. «Միքայել Խաչատրյան տաղանդավոր շեփոքահարին, ի հիշատակ Մոսկվայի կոնսերվատորիան փայլուն ավարտելու Պրոֆ. Մ. Տաբակով»:

Առաջ անցնելով հատկապես ուզում եմ նշել, որ մի քանի տարի անց, երբ ես իմ ուսանողներից մի քանիսին տարա Մոսկվա և կոնսերվատորիայի նրա դասարանում ցույադրեցի նրան իմ կատարած աշխատանքը սաներիս հետ, նրան շատ դուր եկավ և նա հիացական հրաշալի բնութագրեց իմ աշխատանքը. «Գործիքի հիանալի հնչյուն ունեցող, արտակարգ տաղանդավոր շեփոքահար, իրեն դրսևորել է ամենալավագույն կողմերով: Նրա աշխատանքը աշակերտների հետ փայլուն արդյունքներ է տվել՝ նա գերազանց տվյալների տեր մանկավարժ է: Մ. ՏԱԲԱԿՈՎ»:

Կոնսերվատորիայում աշխատանքային գործունեությունս սկսելուց մեկ տարի անց՝ 1948 թ. իմ ավագ գործընկերները համոզեցին ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության շարքերն անցնել: Երկար-բարակ մտածում էի, առավել ևս, որ ես ոչ պիտներ էի եղել, ոչ էլ կոմերիտական: Իմ ծանր մանկությունն ու պատանեկությունը դրան չէին համապատասխանում, առավել ևս՝ մղում: Սակայն, ի վերջո, ես համաձայնեցի, քանի որ նաև այդ իրադարձությանը շատ կողմ էր Մարիաննան, իսկ նա արդեն Սովետական Միության կոմունիստական կուսակցության անդամ էր: Ես դիմում գրեցի, իսկ երաշխավորեցին Ելենա Մատվեևան (կուսբյուրոյի քարտուղարը) և էլի երկու ավագ գործընկեր, և ինձ ընդունեցին Սովետական Միության կոմունիստական կուսակցության շարքերը, որպես անդամության թեկնածու, իսկ մեկ տարի անց արդեն անդամ:

Այդ ժամանակաընթացքում Մարիաննայի հետ մեր փոխադարձ համակրանքը վերաճեց սիրո զգայունքի, և մենք որոշեցինք մեր ճակատագրերը խաչաձևելով՝ ամուսնանալ:

1949 թվականի դեկտեմբերի 12-ի ցերեկը մենք Մարիաննայի հետ պաշտոնապես ձևակերպեցինք մեր ամուսնությունը, նրան պաշտոնական բնույթ տալով, իսկ երեկոյան նրա ծննդյան տոնակատարության մասնակիցներին հայտնեցինք մեր ամուսնության մասին:

Այսպես սկսվեց Մարիաննայի և իմ համատեղ կյանքը:

*

* *

Յուրաքանչյուր ծնող յուրովի է ընդունում իր առաջնեկի ծնունդը: Ինձ համար ցնցող իրադարձություն էր պաշտելի առաջին զավակիս ծնունդը, որը տեղի ունեցավ 1950 թվականի հոտեմբերի 5-ին, նրան կոչեցինք անմման տատիկի, հրաշալի անձնավորության ու մարդու, Հայկանուշ Դանիելյանի՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի իր սիրելի պրոֆեսորի անունով՝ Նատաշա:

Իսկ երկրորդ դուստրս ծնվեց ժամանակային բավականին տարբերությամբ, 1963 թվականի փետրվարի 9-ին: Նուրբ, սպիտակամորթ, գեղեցիկ, անօգնական: Երեխաների համար խելագարվում էի, ոչ մի բանում ես նրանց չեմ սահմանափակում, քանի որ բարձր աշխատավարձ էի ստանում և երբ 1976 թվականի մայիսին պրոֆեսորի կոչման արժանացա, այդ ժամանակից սկսած որպես պրոֆեսոր ստանում էի 500 ռուբլի և 200 ռուբլի՝ կես դրույք որպես պրոֆեսոր: Ես ի վիճակի էի (նույնիսկ ավելին) ֆինանսական ամեն տեսակի խնդիրներ լուծել:

Երբ ես 1947 թվականին սկսեցի աշխատանքային գործունեությունս Երևանում, Մոսկվայից վերադառնալուց հետո, Մարիաննան աշխատում էր արդեն որպես նվագակցող իմ դասարանում՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, այնպես որ, մեր ստեղծագործական համագործակցությունն սկսվել է առաջին իսկ օրից: Հետո

նա մեներգեցողութեամբ տարվեց (լավ ձայն ուներ՝ սուպրանո), երգում էր «Սևիլայի սափրիչում», հետո Անուշի դերերգը երգեց:

Մակայն օպերային թատրոնում գտնվեցին մարդիկ, ովքեր ջանքեր չխնայեցին, որպեսզի Մարիաննան հեռանա թատրոնից: Մանրամասներին չեմ անդրադառնում: Եվ այսօր էլ Մարիաննան և նաև ես դուրս անգամ չենք ավստում: Պրոֆեսիոնալ նվագակցությամբ զբաղվելը, դաշնակահարի համար, նվիրական և մենակատարի գործունեությունից չտարբերվող, նրան համազոր ոլորտ է, և այն բարձունքներին, որ հասել է դաշնակահարուհի Մարիաննա Հարությունյանը և՛ որպես նվագակցող, և՛ որպես մանկավարժ (վոկալ), ոչնչով չի զիջում մեներգչի կամ մենակատարի գործունեությանը: Այս ասպարեզում նա հիանալի սերունդներ է դաստիարակել և նրա սաները, մասնավորապես երգիչները իրենց երգչական արվեստը ցուցադրում են աշխարհի հայտնի օպերային թատրոններում՝ Ջուլիետա Գալստյան, Սուրեն Շահիջանյան, Անահիտ Ներսիսյան, Հասմիկ Միմոնյան և ուրիշներ:

Աշխատավայրից ինձ մեկ սենյականոց բնակարան հատկացրեցին արվեստի աշխատողների բնակելի շենքից, որտեղ ապրում էինք Մարիաննայի հետ, իսկ երեկոներն անց էինք կացնում երեխաներիս սիրելի տատիկի և իմ սիրելի գոքանչ մայրիկի՝ Հայկանուշ Դանիելյանի հարկի տակ:

Հայկանուշ Դանիելյանը խելացի, ամեն ինչ կշռադատող, սքափ մտքով, գործունյա ու բարի, ամենքին օգնության ձեռք մեկնող, էլ չեմ ասում՝ անգերազանցելի երգչուհի և արվեստագետ, մի անգամ ասաց. «Միշտ, ինչ միտք ունի ձեր այդ բնակարանում ապրելը, իմ տունը վաղը աղջկանս է պատկանելու, դուք ապրում եք մեկ սենյականոց բնակարանում, իսկ ես այստեղ միայնակ, մանավանդ երեկոյան ձեր գնալուց հետո անտանելի դատարկություն և տաղտուկ եմ զգում առանց ձեզ, խնդրում եմ, առանց քաշվելու և վատ զգալու տեղափոխվեք այստեղ ապրելու»: Այստեղ էին ապրում իր մորաքույրը և եղբայրը՝ Արմենակը, բայց նա այնպիսի թախանձանքով էր խնդրում, որպեսզի մենք Մարիաննայի հետ տեղափոխվե՞նք, որ սիրտս ճնվում էր: Եվ մերժել այնպիսի մի կնոջ, ինչպիսին Հայկանուշ Դանիելյանն էր, մեղմ ասած, անհնարին էր: Երկար մտո-

րումներից, ծանր ու թեթև անելույց հետո համաձայնեցինք: Եվ իրոք, գիշերում էինք մեր մեկ սենյականոց բնակարանում, գնում աշխատանքի, որից հետո գալիս Հայկանուշ Բաղդասարովնայի մոտ ճաշելու և երեկոն անցկացնելու... և այսպես շարունակ: Հաջորդ օրը զնայի մշակույթի նախարարության արվեստի վարչություն, որի պետն այն ժամանակ Գուրգեն Բորյանն էր և հայտնեցի, թե ուզում են ինձ պատկանող մեկ սենյականոց բնակարանը հանձնել: Նա քարացավ տեղում և ուշքի գալով ասաց. «Ուրիշները ջանք չեն խնայում, երազում են մի բան պոկելու, դուք ձեր հասանելի²քն եք հանձնում»: Բացատրեցի եղելությունն ու իրականությունը, և այդ օրվանից ապրում ենք այստեղ:

Անաչառ, բարի ու հասնող, անարդարության, ստի ու կեղծիքի դեմ պայքարող, լավն ու բարին գնահատող, գործընկերների ու ընդհանրապես մարդկանց մեջ լավը տեսնող, ամենքին մեցուկ էր անվանի երգչուհի, հայրենասեր ու ճշմարտախոս, ճշտապահ ու պարկեշտ, կենսախիճ, հայ մշակույթի նվիրյալ, սերունդներ դաստիարակած Հայկանուշ Դանիելյանը: Անչափ զարգացած և կրթված անձնավորություն, որն ուսումնասիրել էր հին հունական փիլիսոփայությունը, հրաշալի գիտեր գերմանացի փիլիսոփաներին ու նրանց ստեղծագործությունները: Նրա հետ զրույցելը մեծ հաճույք էր: Մեծ հումորի տեր անձնավորություն էր և հաճախ էր ինձ ասում. «Միշա, ստամոքսիս քաղանքը գինի է պահանջում»: Նույն պահին վագում էի խանութ, ամենալավ գինին բերում և նա գերագույն հաճույքով կում-կում խմում էր: Սթափ մտքի տեր, խելացի էր: Եվ երբ հիվանդացավ, իսկ դրա պատճառը 1948 թվականի կոմկուսի հայտնի պլենումի արվեստի գործիչներին նվիրված հայտնի որոշումներն էին: Այն իր որոշման կետերում խստագույնս ներառել էր և երաժշտական ուսումնական ֆակուլտետների ամբիոնի վարիչներին ու նրանց գործունեությունը: Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Լվովի, Խարկովի... և այդ շարքին Երևանի պետական կոմսերվատորիայի վոկալ ֆակուլտետի ամբիոնների վարիչներին հանեցին աշխատանքից՝ մեղադրելով գոյություն չունեցող քաղաքական-գաղափարական հանցանքներում:

Ճշմարտության առջև չմեղանչելով պետք է նշեմ, որ չար ու մա-

խանձներ ամեն տեղ գոյություն ունեն, որոնց մեղքով շատ ու շատ գործիչներ են տուժել (մեղմ ասած՝ եթե չասենք զոհ են գնացել) այդ մարդկանց ձեռքով:

Շատ ազնիվ մարդիկ էլ տխրել ու պարզապես ողբերգություն էին ապրում տեղի ունեցող անարդարություններից: Արվեստի, մասնավորապես, երաժշտարվեստի համար դա հետ քայլ էր:

Կարճ ասած՝ Հայկանուշ Դանիելյանը դա շատ ծանր էր տանում, մեծ ապրումներ ուներ: Հետո նրան առաջարկեցին ղեկավարելու Չայկովսկու անվան երաժշտական-մասնագիտացված տասնամյա դպրոցը:

Ղեկավարեց այդ դպրոցն ընդամենը երեք տարի՝ անբասիր, անաչառ ու աշակերտների ու մանկավարժների նկատմամբ անհուն սիրով գործունեություն ծավալած Հայկանուշ Դանիելյանին ծանր ապրումները չլքեցին և թողեց աշխատանքը ու տնից դուրս չէր գալիս: Ավելի շատ անկողնում էր անցկացնում:

Այդ ընթացքում ես մեքենա գնեցի: Լավ իմանալով, որ գոքանչ մայրիկս սիրում է բնության գրկում լինել, հրապուրվել իր շատ սիրելի հայրենիքի բնության տեսարաններով ու կառույցներով, տեսնել քչքչան առվակներն ու գետերը, մարգագետիններն ու անտառները և հատկապես Չանգուն: Մոտենում էինք գետի ափին, ես նրան ձեռքիս վրա էի առնում (հիվանդությունը շատ էր հյուծել նրան ու շատ թեթև էր), նստեցնում մեքենան ու շրջում հայրենի բնաշխարհում:

Նրա մահը (1958) մեծ ողբերգություն էր հայ արվեստի գնահատողների ու գործիչների, առավել ևս մեզ՝ հարազատներիս համար: Ծանր կորուստ էր: Սակայն կյանքն իրենն է վերցնում:

Երեխաներս ուսումնառությունն սկսել են երաժշտական տասնամյակում: Նատաշան դաշնամուրային բաժնում էր սովորում, սակայն, ինչպես հաճախ է պատահում, նրա մասնագիտության դասատուն անհաջող դուրս եկավ, գործիքի, երաժշտության նկատմամբ սեր արթնացնելու փոխարեն ատելություն էր սերմանում: Տասներորդ դասարանում Նատաշան ինձ խնդրեց, թե, հայրիկ, ես հետագայում երաժշտությամբ չեմ ուզում զբաղվել (դեռևս առաջին դասարանից ֆրանսերեն էր ուսումնասիրում ֆրանսիացի մի լեզվաբանի ղեկավարությամբ և կատարյալ տիրապետում էր ֆրանսերենին), ցանկություն ունեմ օտար լեզուների ինստիտուտում սովորել (Բրյուսովի անվան): Պարզ է, ես աղջիկներիս ոչ մի բանում չեմ մերժել, կատարելով նրանց ցանկությունները: Նատաշան հիանալի հանձնեց ընդունելության քննություններն ու դարձավ ուսանողուհի: Ավարտեց նաև ասպիրանտուրան, պաշտպանեց քեկնածուական թեզն ու մեծ հաջողությամբ զբաղվում է մանկավարժությամբ՝ իրեն նվիրելով սիրած գործին:

Երբ ծնվեց կրտսեր դուստրս՝ Աննան, մենք ցանկացանք նրան անվանել իր տատիկների անունով՝ Հայկանուշ, և երբ նա արդեն երկու-երեք տարեկան էր, մոտեցավ, թե, հայրիկ, ես Հայկանուշ լինել չեմ ուզում, Հայկանուշը ծեր կին է (նկատի ունեք մորս, իր տատիկին, որն այն ժամանակ ողջ էր և հաճախ էր մեզ այցելում): Հարցրի, թե հապա ի՞նչ ես ուզում: Ամփջապես պատասխանեց՝ Աննա: Այդպես էլ որոշեցինք, սակայն անձնագրում զբանցվեց Հայկանուշ՝ ի հիշատակ մեր՝ Մարիաննայի և իմ մայրիկների:

Աննան դաշնակահար դարձավ, ինչպես իր մայրը: Նրա պրոֆեսիոնալ վերաբերմունքն ու հատկանիշներն արտահայտվեցին նվագակցության ասպարեզում, որը նույնքան պատասխանատու և պատվաբեր է, որքան մենակատարությունը, և նա սիրով է այդ բանն անում և դասավանդում Կոմիտասի անվան կոնսերվատորիայում:

Հետո ծնվեց մեր բոլորի սիրելի Ջուդին՝ ավագ դստերս աղջնակը, մի առանձին ուրախություն ու ջերմություն լցվեց մեր տուն: Ընդհանրապես, ես թուլություն ունեմ փոքրիկների նկատմամբ:

Հետաքրքրականն այն է, որ ավագ և կրտսեր թոռնիկներին տարիքային տարբերությունը 20 տարի է: Սակայն նրանց նկատմամբ ունեցածս զգայնությունների մեջ տարբերություն չկա:

Ջուդին (Ջուլիետը) ծնվել է այս տանը, ինձ և Մարիանային հայրիկ-մայրիկ է կոչում, հասակ առել ու կրթվել է մեր տանը:

Ինձ համար երեխաները մեծագույն երջանկություն են եղել և կան, որոնց հաջողություններով մենք ուրախանում ենք:

*

* *

Իմ մերձավոր բարեկամներից են Արամ Շամշյանը, Հրայր Աբաջյանը, Լևոն Բրուտյանը, Առոն Բաբաջանյանը, որը նաև բարեկամ էր մեզ, Ադամ Խուդոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, մեծ բարեկամներիցս է նաև իմ գործընկեր (շեփորահար) Տիմոֆեյ Դոկչիցերը, որի հետ ստեղծագործական և բարեկամական սերտ կապը երբեք չի խախտվել: Մինչև վերջերս էլ նամակագրական կապ ունեինք իր հետ: Իմ մերձավոր բարեկամներից էր Մեծ քատրոնի մենակատար շեփորահար Նաում Պոլոնսկին: Մեկ անգամ նա ասաց. «Կան հրեաներ, որոնցից մեկը ես եմ, և կան ջհուդներ»: Շատերի հետ բարեկամներ էինք, սակայն իշխանափոխություններն ու հեղափոխությունները ամեն ինչ տակնուվրա արեցին և այդ ամենն ընդամենը հարյուր տարվա ընթացքում: Մեկ դարի ընթացքում վայրիվերումներն այնքան ցնցեցին հասարակությունն ու մարդկանց, որ ամեն ինչ տակնուվրա եղավ: Սակայն շատերը հավատարիմ իրենց հավատամքին՝ հարազատ մնացին բարեկամության ու մաքուր ընկերության իրենց սկզբունքներին:

Ես պաշտում եմ փայլուն, վիրտուոզ երաժիշտ-կատարողներին, ջութակահար, դաշնակահար թե շեփորահար, ֆլեյտահար թե մեներգիչ: Իսկ մեներգեցողությանը ես հատուկ վերաբերմունք ունեմ: Հիշատակեցի, որ դեռևս ուսումնարանի սովորողներ, օպերային քատրոնում ընկերներով անդամագրվեցինք որպես միանասներ, որպեսզի ամեն օր երգեցողություն լսեն, օպերային արվեստի հսկանե-

րի կողքին լինեն, առնչվեն նրանց հետ և հատկապես մեծն Հայկա-
նուշ Դանիելյանի երգարվեստին, երգելածին: Նրան լսելով հաս-
կանում էինք, թե ինչպես է կառուցվում երաժշտական ֆրազը, նա-
խադասությունը, պարբերությունը, շնչառության առանձնահատ-
կությունները և այդ ամենն աշխատում էինք ինքներս կիրառել:
Սրանք մեզ համար երաժշտական ակադեմիաներ էին: Ամեն ինչ
մանրուփյ է ստեղծվում, ապա ձևավորվում ուղեղում ու ամբողջա-
կանություն դառնում:

Երբեք չեմ մոռանա. 1947 թվականին, Մոսկվայի կոնսերվատոր-
իայի ավարտական կուրսում էի, երբ հանրակապարանում վեց հո-
գանոց սենյակից ինձ տեղափոխեցին երեք հոգանոց սենյակ: Ինձ
հետ մաս մի ջութակահար էր ապրում: Եվ մի անգամ, երբ մեր ռադի-
ոն միացված էր, հանկարծ հրաշալի մի ձայնագրություն սկսեցին
հաղորդել, կանաչի հրաշալի մի ձայն էր հնչում, որի մնանը երևի թե
մենք երկուսս էլ չէինք լսել: Հափշտակված լսում էինք, թե ինչպես է
երգում Ռիմսկի-Կորսակովի «Շամախանյան կայսրուհին» օպերա-
յից հայտնի մեներգը: Շատ էինք լսել, լավ զիտեինք հայտնի կատա-
րողների մեկնաբանությունները, բայց այս երգչուհու կատարմամբ
ուղղակի գերված քարայել էինք: Նա մեզ հայտնի ոչ մի մեներգչու-
հու մնան չէր և տարակուսանքի մեջ էինք, թե ո՞վ է, որտեղի՞ց, ինչ-
պե՞ս: Ընկերս ասում է. «Միգուցե արտասահմանցի՞ է»:

Ու այսպես ենթադրություններ էինք փոխանակում երբ վերջում
հայտարարեցին. «Մեներգը կատարեց ՍՍՀՄ ժողովրդական ար-
տիստ Հայկանուշ Դանիելյանը»:

Այստեղ իմ հպարտության զգացումը դուրս եկավ արիերից, թե
տես՝ ինչպիսին ենք մենք՝ հայերս...

*
* *

... Գարնանը (1950 թ.) տեղեկացա, որ իմ ուսումնառության շրջանի ավագ ընկերոջը՝ Հայկազ Մեսիայանին, օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբից հեռացրել են աշխատանքից:

Մոտավորապես այդ դեպքից մեկ ամիս անց հայտնեցին ինձ, որ օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Միքայել Թավրիզյանը խնդրում է իր մոտ անցնել: Գնացի թատրոն նրա մոտ: Պատմեց, թե ինչ «հերոսություն» է կատարել Հայկազը, ինչու են նրան հեռացրել աշխատանքից և առաջարկեց ինձ համատեղությամբ աշխատել թատրոնի նվագախմբում անչափ օգտավետ պայմաններով՝ երեք, չորս ներկայացում շաբաթվա ընթացքում, բայց կիրակի օրերից, երբ ֆիլհարմոնիայում համերգներ ունեի և լրիվ դրույք:

Մակայն ես բարեկրթորեն հրաժարվեցի, ասելով, որ եթե ես չհամաձայնեմ առաջարկությանը, միգուցե Հայկազին կվերականգնեն իր աշխատանքին: Ի պատասխան Թավրիզյանն ասաց. «Դուք շատ վեհանձն եք վարվում, բայց ես համոզված եմ, որ նա ձեր մասին այդպես չէր մտախոզվի»:

Մի երկու շաբաթ անց ֆիլհարմոնիայում նվագախմբի փորձի ընդմիջման ժամանակ ինձ մոտեցավ Հայկազը, խղճով տեսքով, չսափրված, սկսեց խնդրել, աղաչել, որպեսզի ես թողնեմ ֆիլհարմոնիայի աշխատանքը, այն նրան զիջելով, իսկ ինքս գնամ աշխատելու օպերային թատրոնում:

Բայց նա շարունակում էր աղաչել, պաղատել, երդվում էր, որ ողջ կյանքում շնորհակալ-երախտապարտ կլինի ինձ, որ նա շատ բաներով է պարտական ինձ և այլն, և այլն:

Իհարկե, շատ խղճացի նրան, անտանելի դրության մեջ էր և անշուշտ, որոշեցի տեղի տալ, օգնել նրան. համաձայնեցի տեղափոխվել աշխատելու օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախումբ, Հայֆիլհարմոնիայի նվագախմբի տնօրենին խնդրեցի Հայկազին ձևակերպել իմ փոխարեն: Որոշ ժամանակ անց ես նորից համոզվեցի, որ նա հավատարիմ է մնացել իր բնավորությանը:

Ճիշտ է, երբ ես պատասխանատու պաշտոնների էի, նա ամեն

կերպ շողոքորթում էր ինձ առերես և այլն, բայց ես հիանալի գիտեի, որ դա կեղծ է, և արդեն նրա արարքներին ուշադրություն չէի դարձնում և նշանակություն չէի տալիս:

Ընդհանրապես 1950 թվականը հարուստ էր իրադարձություններով և նրանցից շատերն առնչվում էին իմ գործունեության հետ: Այսպես, կոմսերվատորիայի կուսակցական կազմակերպության հաշվետու-ընտրական ժողովին ինձ ընտրեցին կուսբյուրոյի կազմի մեջ, հետո նաև ընտրեցին քարտուղարի առաջին տեղակալ: Ես պետք է զբաղվեի ուսանողների և մանկավարժների ուսումնադաստիարակչական աշխատանքով, իսկ 1951-ից մինչև 1957 թ. ներառյալ ես ամեն տարի կուսկազմակերպության առաջին քարտուղար էի ընտրվում և պետք է զբաղվեի անվերապահորեն բոլոր հարցերով:

Այն տարիներին ցանկացած հիմնարկության կուսկազմակերպության քարտուղարը լայն իրավասություններով էր օժտված, բայց և պատասխանատու էր ամեն ինչի համար, հիմնարկության ղեկավարին համահավասար: Կուսակցությունն էր ղեկավարում երկիրը:

Հպարտությամբ եմ վերհիշում, որ ես բոլոր հարցերի մասին խորհրդակցում էի իմ սիրելի ռեկտոր Կոնստանտին Սարաջյանի հետ և մենք միասին բոլոր հարցերին լուծում էինք տալիս հօգուտ մեր հարազատ կոմսերվատորիայի: Ինձ հաճախ էին հրավիրում Կենտկոմի մշակույթի բաժին (Ռոբերտ Խաչատրյան, Կիմ Պողոսյան)՝ և պահանջում տարբեր հարցերի պարզաբանություն: Հաճույքով եմ մտաբերում, որ ինձ հաջողվում էր տրամաբանորեն, համոզիչ ապացույեւլ մեր բոլոր որոշումների և գործողությունների ճշմարտացիությունն ու անհրաժեշտությունը:

Սակայն, բոլոր ղեպքերում կուսբյուրոյի առաջին քարտուղարի աշխատանքն ինձ մեծապես օգնեց մանրակրկիտ ուսումնասիրելու ուսումնական, գիտական կատարողական, դաստիարակչական աշխատանքները, որոնք ինձ օգնեցին իմ աշխատանքային գործունեության ընթացքում:

Ցավով պետք է նշեմ, որ 1954 թվականին վախճանվեց Կոնստանտին Սարաջյանը: Նրան փոխարինեց ուսումնական գործառ-

¹ Կոմունիստական կուսակցության Կենտկոմի արվեստի բաժնի պատասխանատուներ:

նությանը վատատեղյակ մի անձնավորություն, որը դրա հետ մեկտեղ անսկզբունքային մարդկանց ազդեցության տակ էր ընկնում: Ուսումնական գործընթացի բնագավառում շատ սխալներ էր գործում, ո՛չ ուսանողների, ո՛չ մանկավարժների համակրանքը չէր վայելում: Սկզբնական շրջանում ես ջանում էի օգնել նրան, սխալներից զերծ պահել, բարձրացնել հեղինակությունը, սակայն աստիճանաբար համոզվեցի, որ ամեն ինչ անօգուտ է:

*

* *

Մոսկվայում, 1956 թվականին, կայացավ հայ արվեստի և գրականության երկրորդ տասնօրյակը, իսկ նրա ավարտից հետո օպերային թատրոնը հրավիրվեց Լենինգրադ հյուրախաղերի: Եվ Մոսկվայում, և Լենինգրադում ծանոթ և անծանոթ երաժիշտներ ու երաժշտասերներ դրվատանքի ջերմ խոսքեր էին ասում իմ կատարողական արվեստի մասին, որը շատ հաճելի էր:

Երևան վերադառնալուց հետո էլ ես շարունակում էի օպերային թատրոնի նվագախմբում իմ աշխատանքը: Որոշ ժամանակ անց հրապարակեցին Գերագույն խորհրդի պատվավոր կոչումներ շնորհելու հրամանը, որոնց թվում էին և նվագախմբի շատ երաժիշտներ: Բայց իմ ազգանունը նորից չկար: Շատերը գիտեին, այդ թվում նաև ես, թե ով է իմ անուն-ազգանունը պարզևատրվողների ցուցակից հանում և ինչի համար: Խղճուկ մի մարդու մանր, անարժեք, անձնական վրեժն էր դա:

Այդ ամեն ինչից ձանձրացել էի և աշխատանքից ազատվելու դիմում գրեցի՝ «ինքնակամ»: Սակայն և՛ Թավրիզյանին և՛ մյուս դեկավարներին հայտնի էր իմ հեռանալու բուն պատճառը: Այդ օրվանից ես թողեցի կատարողական արվեստը, որով զբաղվում էի 21 տարի շարունակ: Դրանից հետո նվագում էի դասարանում, իմ սաների համար, շատ հնարանքներ ու միջոցներ ցուցադրում նրանց: Մեկ-մեկ էլ ձայնագրվում էի հանրապետական ռադիոյում: Այս գործընթացը լավ արդյունքներ էր տալիս և ինձ շատ էին ուրախաց-

նում իմ ուսանողներն ու աշակերտները իրենց ձեռքբերումներով և հաջողություններով ինչպես կոնսերվատորիայում, այնպես էլ երաժշտական ուսումնարանում և երաժշտագիմվորական գիշերօթիկ դպրոցում:

Հուրախություն համընդհանուրի՝ 1960 թ. գարնանը կոնսերվատորիայի ռեկտոր Գ. Եղիազարյանին ազատեցին իր գրաված պաշտոնից և նրա փոխարեն նշանակեցին Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ, կոմպոզիտոր և երաժշտահասարակական գործիչ Ղազարոս Սարյանին, որն ինձ վաղուց և լավ գիտեր:

Շուտով ինձ նշանակեցին բոլոր ֆակուլտետների ղեկան: Այդ պաշտոնում ես աշխատեցի մինչև 1967 թվականը, որից հետո ինձ նշանակեցին պաշտոնավարելու որպես Երևանի կոնսերվատորիայի գիտաուսումնական աշխատանքի պրոռեկտոր:

Դեկանի աշխատանքներն ու պարտականությունները ես հաճույքով ու լավ իմացությամբ էի կատարում: Պարբերաբար ներկա էի գտնվում ամբիոնների միատերին, քննություններին, ստուգարքներին, մասնակցում էի արդյունքների քննարկմանը, ցույաբերում էի անհրաժեշտ օգնություն և նեցուկ էի լինում բոլոր դեպքերում:

1965-ին վերջապես ըստ արժանվույն գնահատվեց իմ կատարած աշխատանքը, արժանացա «արվեստի վաստակավոր գործիչ» պատվավոր կոչման և որոշ ժամանակ անց որպես դոցենտ պաշտոնավարելուց և ի տեղի պրոֆեսորի պարտականությունները կատարելուց 11 տարի անց, 1976 թվականին, որն ընդհանրապես ոչինչ չէր տալիս, սակայն պրոֆեսորի աստիճանին հասնելու պարտադիր նախապայմանն էր, ստացա կոնսերվատորիայի պրոֆեսորի գիտական կոչում:

1967 թվականի գարնանն ինձ նշանակեցին կոնսերվատորիայի գիտական և ուսումնական գծով պրոռեկտոր: Այդ պատասխանատու աշխատանքին անցա արդեն լավ նախապատրաստված, գործին քաջածանոթ և անհրաժեշտ գիտելիքների պաշարով. իսկ ամենակարևորը՝ հարազատ կոնսերվատորիայի ողջ աշխատանքները կատարելագործելու և առաջ մղելու բոլորն ցանկությամբ՝ չխնայելով իմ բոլոր ուժերն ու ժամանակը:

Սակայն 1970 թվականի հունիսի սկզբներին մշակույթի նախա-

քար Կամո Ուղումյանի առաջարկությամբ և բուռն աջակցությամբ, Կենտրոնի քարտուղար Անտոն Քոչինյանի պահանջով, հաշվի չառնելով իմ կարծիքը, որը հրաժարվելն էր, ինձ նշանակեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար և տնօրեն:

Աշխատանքի անցնելով՝ հայտնաբերեցի, որ թատրոնն իր ծրագրում ունի ընդամենը 13 անուն օպերային և բալետային ներկայացում, որն անչափ քիչ էր շատ թե քիչ հայտնի օպերային թատրոնի ստեղծագործական կազմի համար: Իսկ ես շատ լավ էի հիշում և քաջ գիտեի այդ թատրոնի ծաղկման շրջանն ու լավ ժամանակները, երբ դիրիժորներ էին Միքայել Թավրիզյանը, Սուրեն Չարեքյանը, Գևորգ Բուդաղյանը, Ռուբեն Ստեփանյանը, բեմադրիչներն էին Արմեն Գուլակյանը, Վարդան Աճեմյանը և այլոք, որոնցից յուրաքանչյուրն անհատականություն էր:

Տասը տարիների ընթացքում օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի մենակատար լինելով. հիշողությանս մեջ թարմ էին թատրոնի հրաշալի երգիչները, հիանալի բեմադրությունները, լեփլեցուն դահլիճները, ամենօրյա ներկայացումները: Օպերային թատրոնում ստեղծագործական գեղարվեստական ղեկավարի իմ աշխատանքն սկսեցի նրանից, որ հանդիպումներ ունեցա մեներգիչների, երգչախմբի անդամների, նվագախմբի և բալետի արտիստների, բեմադրական մասի աշխատողների և թատրոնի ողջ կազմի հետ մանրամասն քննարկեցինք իրերի դրությունը, դրանց բարելավման միջոցները, ներկայացումների որակի բարձրացման խնդիրները, կարգապահության հարցերը և այլն:

Միաժամանակ ես համակ ուշադրությամբ լսում և դիտում էի ներկայացվող բոլոր բեմադրությունները և կազմակերպում ներկայացումից հետո քննարկումներ, որոնց մասնակցում էին տվյալ ներկայացումների դիրիժորները, խմբավարները, պարուսույցները, բեմադրական մասի ղեկավարները, իսկ ամենակարևորը՝ բոլոր մեներգիչները:

Այդ քննարկումներին ես մանրակրկիտ բնորոշում էի, թե ով ինչպես էր երգել (առաջին հերթին), ինչպես էր նվագախումբը նվագել, ինչպես էր երգել երգչախումբը, ինչպես էր պարել բալետային խում-

բը, ինչպիսի բացթողումներ, թերություններ ունեւ բեմադրական մասը և բացատրություն էի պահանջում բոլորից:

Այսպիսի մանրամասն քննարկումները շատ շուտով տվեցին իրենց դրական արդյունքները: Մարդիկ իրենց աշխատանքին սկսեցին մեծ պատասխանատվությամբ վերաբերվել, և ներկայացումների որակը զգալիորեն բարելավվեց:

Ես ստիպված էի ծրագրից հանել երկու ներկայացում՝ «Ալմաստ» և «Հտպիտներ» («Պայացներ») օպերաները, որոնց բեմադրությունները ոչ մի քննադատության փորձության չէին դիմանում և՛ բեմադրական, և՛ կատարողական բոլոր տեսանկյուններից: Ծրագրում մնացին ընդամենը 11 անուն օպերային և բալետային ներկայացում և անհրաժեշտ էր անհապաղ զբաղվել լավորակ նոր բեմադրություններ կատարելու գործով: Եվ գեղարվեստական խորհրդի առաջին իսկ նիստի ժամանակ ես մանրամասն զեկույցեցի այս ամենի մասին իմ նկատառումները և ի զարմանս, որ շատ հաճելի էր, գեղարվեստական խորհրդի անդամների գերակշռող մեծամասնությունը կողմ էր ու պաշտպան կանգնեց իմ առաջարկներին:

Ներկայացումների նոր բեմադրությունների համար անհրաժեշտ էին առաջին հերթին նոր դիրիժորներ, բեմադրիչներ, պարուսույցներ, նկարիչներ հրավիրել, և ես անհապաղ դիմեցի անհետաձգելի միջոցների այդ խնդիրները կատարելու համար:

Հանդիպումների ժամանակ օպերային թատրոնի ստեղծագործական բոլոր խմբերն ու նրանց անդամները դժգոհում էին, որ օպերային թատրոնն արդեն ինը տարի է հյուրախաղերի չի մեկնել: Այդ պարագան շատ մեծ նշանակություն ունի ստեղծագործական մթնոլորտը բարձրացնելու և հարստացնելու առումով:

Ես համարձակություն ունեցա հեռախոսով կապվելու ԽՍՀՄ կուլտուրայի նախարար Եկատերինա Ֆուրցևայի հետ այդ խնդրին ընթացք տալու համար: Նա ասաց, որ այս տարի արդեն ուշ է, որովհետև ամեն ինչ արդեն ծրագրված է դեռևս մեկ տարի առաջ, իսկ ապագայում, այն է. 1971 թվականի հուլիսին, Մոչխում, Հայաստանի օպերային թատրոնին հյուրախաղային ներկայացումներ ունենալու հնարավորություն կընձեռվի:

Մեծ ցանկություն ունեի նորից բեմադրելու Ալեքսանդր Սպեն-

դիարյանի, որի անունով էլ կոչվում է օպերային թատրոնը, հանճարեղ «Ալմաստ» օպերան: Այդ կոթողային ստեղծագործությունը ես շատ էի սիրում և բարձր գնահատում: Օպերայի բեմադրության աշխատանքները սկսելու համար հրավիրեցի մեծատաղանդ, հիանալի բեմադրիչ Վարդան Աճեմյանին: Մնում էր համապատասխան դիրիժորի ընտրությունը, որովհետև թատրոնում, իմ կարծիքով, մնանը չէի տեսնում:

Այդ ժամանակ Օհան Գուրյանը հայրենիքը լքել էր, իսկ նա ժամանակին լավ էր ղեկավարել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի ներկայացումները և որի համար բարեխոսում էր Էդվարդ Միրզոյանը, որպեսզի ես նրան որպես դիրիժոր հրավիրեմ աշխատելու օպերային թատրոն: Պետք էր Կենտկոմի թույլտվությունը խնդրել և ստանալ: Գնացի Կենտկոմի մշակույթի գծով քարտուղար Ռուբերտ Խաչատրյանին ներկայացնելու խնդրանքս:

Նա ինձ ուշադրությամբ լսեց և որոշ ժամանակ մտորելուց հետո ասաց. «Եթե ցանկանում ես, վերցրու, բայց լավ իմացիր, ընդամենը երեք ամիս հետո զոջալու ես արածիդ համար»:

Եվ, իրավ, ես զոջացի, բայց ոչ երեք, այլ ընդամենը մեկ ամիս համատեղ աշխատանքից հետո: Նա աշխատանքում իրեն դրսևորեց որպես կոպիտ, անգուսպ, անհավասարակշիռ անճնավորություն, վիճաբանում և կռիվներ էր սարքում նվագախմբի, երգչախմբի, բալետի արտիստների հետ՝ վիրավորում նրանց և շուտով նվաճեց օպերային թատրոնի ողջ կոլեկտիվի ատելությունը: Իսկ մի անգամ էլ Տիգրան Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» օպերայի երկրորդ գործողության ավարտից հետո վիճաբանության բռնվեց թատրոնի նվագախմբի արտիստներից մեկի հետ և, վերարկուն վերցնելով, խռոված հեռացավ թատրոնից: Անասելի դժվարությամբ գտա այն դիրիժորին, որն իմանար օպերայի պարտիտուրը, որպեսզի կարողանայիք փրկվել խայտառակությունից, որովհետև դահլիճը լեփլեցում էր, որոնց թվում այդ օրը շատ էին նաև արտասահմանցի զբոսաշրջիկները և անհամբերությամբ սպասում էին ներկայացման շաբուկությանը:

Այդ անելանելի վիճակից ստեղծագործական կազմին փրկեց երիտասարդ դիրիժոր Հերման Տերտերյանը: Նա հիանալի ղեկա-

վարեց «Արշակ Երկրորդի» երրորդ և չորրորդ գործողությունները և իրավամբ արժանացավ մվագախմբի, երգչախմբի և մեներգիչների լիարժեք համակրանքին և գովասանքի խոսքերին:

Այդպիսի անհավասարակշիռ ու մանկամիտ մարդու հետ, ինչպիսին իրեն դրսևորեց Օհան Դուրյանը, շատ դժվար էր աշխատել, չնայած ամեն անգամ հերթական հիմար արարքից հետո (մեղմ ասած) գալիս ներողություն էր խնդրում, թե այլևս այդպիսի արարք չի կրկնվի:

Ահա միայն մի դեպք, որը վերը նշածի վառ ապացույցն է: «Ալմաստ» օպերայի բեմադրության դիրիժոր նշանակեցինք Օհան Դուրյանին: Որոշ ժամանակ անց եկավ, թե՛ «որոշ փոփոխություններ պետք է անեմ՝ կրճատումներ, ավելացումներ և այլն»: Երբ ծանոթացրեց իր ծրագրին, մեղմ ասած՝ զարմացա, թե ինչպես կարելի է հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանի գլուխգործոց ստեղծագործությունն այդ աստիճան բզկտել: Եվ երբ հերթը հասավ Նադիր շահի մենախոսությունը հանելու նրա առաջարկին, էլ չհամբերեցի ու որոշեցի երաժիշտների մի հանձնախումբ ստեղծել նրան համոզելու և ապացույցելու, որ անիմաստ և անմիտ առաջարկներ է անում և այդպես օպերան ներկայացնելն անհնարին է, չի կարելի հայ դասականի ստեղծած գործի հետ խաղեր խաղալ:

Եվ ահա քննարկում ենք Օհան Դուրյանի առաջարկները: Ամեն ինչ լսելուց հետո խոսքը տալիս եմ Էդվարդ Միրզոյանին և հարցնում, թե՛ «ընկեր Միրզոյան, Ձեր կարծիքն ինչպիսի՞ն է. հնարավոր է արդյոք Նադիրի մենախոսությունը կիսով չափ կրճատել»:

Եվ Միրզոյանն սկսում է Օհանին բացատրել, որ «Օհան, դու պետք է հասկանաս, որ դա անհնարին բան է, դու չես կարող ինքնագլուխ վերցնել ու խաղեր խաղալ այդպիսի կոթողային ստեղծագործության հետ: Դու պարտավոր ես հարազատ մնալ կոմպոզիտորի ստեղծած պարտիտուրին, չէ՞ որ դա հայ երաժշտության գլուխգործոցներից է և ոչ ոքի իրավունք չի վերապահվում նրա մեջ փոփոխություններ կատարել» և այլն:

Երբ Ղազարոս Սարյանին հարցրի, պատասխանեց, որ Միրզոյանի ասածներին համամիտ է և ավելացնելիք չունի:

Օհանը կատաղեց Էդվարդ Միրզոյանի ասածներից ու սկսեց վիրավորական խոսքեր ասել նրան, թե «Էդիկ, դու քեզ թագավորի տեղ ես դնում, ինչ ես քեզ երևակայում: Ոչ, ես էլ ոչ մի բան չեմ անի»:

Օպերայի պարտիտուրները (չորս գործողության չորս հաստափոր հատորներ) շարված էին աշխատասենյակումս գտնվող ռոյալի վրա: Մոտեցավ ու գոռգոռալով ձեռքն ընկածը վերցնելով խփեց գետնին: Բոլորս ապշահար նայում էինք նրան, թե ինչպես կարելի է այդպիսի արարք թույլ տալ: Կիմ Պողոսյանն էլ ամեն այսպիսի հարվածից հետո բարձրացնում, դնում է տեղը հերթական նետված պարտիտուրը, իսկ Օհանն էլ, մոլուցքի մեջ, կարծես ոգևորված շարունակում է այսպես շարունակ մի քանի անգամ: Մի քանի րոպեից կրկնվում էր նույն պատկերը, ճիշտ նախորդի հերթականությամբ: Մշակույթի նախարար Կամո Ուդումյանը, որ քիչ հեռու նստած էր, ասաց. «Ամեն ինչ ինձ համար պարզ է, ես հեռանում եմ, ավելի կարևոր գործեր ունեմ»:

Նայեցի Էդվարդ Միրզոյանին, գույնը գցել, ձեռքերը դողում էին, խոսքեր չէր գտնում ասելու (չէ՞ որ ինքն էր երաշխավորել Օհան Դուրյանին օպերային թատրոնում աշխատանքի վերցնելու համար):

Կանչեցի վարորդին (քարտուղարի միջոցով) և ասացի. «Էդիկ, դու գնա տուն, այդ վիճակով, որի մեջ դու ես, անհնարին է այս աշխատանքը շարունակել, հանգստացիր, միգուցե հետո կխոսենք, չնայած կարծում եմ՝ բոլորիս համար ամեն ինչ պարզ է և սրանով վերջացնում ենք: Եվ եթե Օհան Դուրյանը շարունակի այս անհեթեթությունները, ես նրան աշխատանքից կհեռացնեմ»:

Կիմ Պողոսյանը եկել էր Օհան Դուրյանին պաշտպան կանգնելու համար: Եվ երբ այս ամենին ականատես եղավ, առանց ծպտուն հանելու հեռացավ հավաքատեղից, Սարյանն էլ գնաց: Նվազախմբի տեսուչին խնդրեցի պարտիտուրները տանել և վստահելի տեղ դնել, թե չէ կարող է այս անգամ պատահոտել:

Սա երկրորդ դեպքն էր, որ ես վերջնականապես համոզվեցի, որ Օհան Դուրյանն անվստահելի, մանկամիտ, անհավասարակշիռ անձնավորություն է և նրան ոչինչ չի կարելի հանձնարարել: Եվ ընդհանրապես, պետք չէ նրա հետ գործ ունենալ: Իմ ուղեղում հասու-

նայել էր արդեն ինչ անելս, որ պետք է նրանից ամեն կերպ ազատվել: Նորից խառնվեց գործին Էդվարդ Միրզոյանը, թե լավ, պետք չէ հեռացնել, ես նորից կխոսեմ հետը, կարգի կհրավիրեմ, միգուցե խելքի գա:

Իսկ ժամանակն անցնում էր, հարկ էր հյուրախաղերի նախապատրաստվել: Սակայն նորից պետք է վերադառնամ Օհան Դուրյանին: Ցերեկը նվազախմբի արտիստների հետ ֆուտբոլ էր խաղում, իսկ գիշերները նույն արտիստների հետ խաղաթուղք: Առավոտյան արդեն ինձ հայտնում էին, որ խաղամուլ է և շատ այլ բաներ: Հայտնում էին նույնիսկ, թե Օհանը որքան է տանուլ տվել, իսկ ֆուտբոլ խաղում էին առավելապես նվազախմբի տղաները և այնպես էին անում, որ գնդակով անընդհատ Օհանի գլխին էին խփում, այդ բանն ավելի կատաղի և ուժգին էին անում նրանք, ում փորձերի ժամանակ վիրավորել էր (հատկապես հյուրախաղերի ժամանակ):

Բոլոր ներկայացումները, որպես կանոն, ես լսում էի տնօրենին հատկացված օթյակում նստած: Նման բան պարտավոր էր անել և գլխավոր դիրիժորը, սակայն Օհան Դուրյանը ոչ մի ներկայացում չէր լսում:

Մեկ անգամ հրավիրեցի և հարցնում եմ. «Ոչ բարով, դու գլխավոր դիրիժոր ես և պետք է բոլոր ներկայացումներին պարտադիր ներկա լինես»: Պատասխանում է, թե «ես ինչ ընեմ, չեմ գիտեր» և այլ պատճառաբանություններ:

Այդ ընթացքում օպերային թատրոնում աշխատանքը եռում էր: Ամենօրյա պարտադիր ներկայացումներ, հայտնի մեներգիչների, դիրիժորների, բալետի հայտնի պարողների հյուրախաղային ներկայացումներ: Կազմակերպել էինք տոմսերի կոլեկտիվ վաճառք, որը շատ օգտավետ էր թատրոնի համար նրանով, որ թատրոնը միշտ լեփ-լեցուն էր հանդիսականներով:

Հատկապես արտակարգ նշեցինք հայկական օպերայի ծննդյան 100-ամյա հոբելյանը՝ Տ. Չուխաշյանի «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությամբ, որին հրավիրել էինք Սովետական Միության օպերային բոլոր թատրոնների տնօրեններին: Նրանց ես ծանոթացնում էի Հայաստանի պատմական տեսարժան վայրերին, հյուրընկալվեցինք Ամենայն Հայոց կաթողիկոս, Վեհափառ հայրա-

պետ Տեր, Տեր Վազգեն Առաջինի մոտ, որը, ի դեպ, հաճախ էր ունկնդրում մեր ներկայացումները, իսկ ես նրան և ուղեկից հոգևորականներին տրամադրում էի տնօրենական օթյակը, ստանում նրա օրհնությունը:

Իսկ մեկ անգամ Երևանում գտնվելիս օպերային թատրոն այցելեց Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը՝ դիտելու և լսելու Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետը: Եկել էր մենակ, առանց ուղեկցողների կամ թիկնապահների: Մարշալի խնդրանքով ես նստել էի կողքին կառավարական օթյակում և պատասխանում էի իրեն հետաքրքրող բազմաթիվ հարցերի և բացատրություններ ու տեղեկություններ տալիս մեծն Կոմիտաս վարդապետին նվիրված ներկայացման, նրա երաժշտության հեղինակի մասին, լսում նրա տպավորությունները: Ինձ համար մեծ պատիվ էր: Այսպիսի հանդիպումներ օպերային թատրոնում շատ ու շատ են եղել ու ժամանակին նշանավոր, խոշոր իրադարձություն էր Հայաստան աշխարհի համար, երբ մեր հինավուրց հողը հյուրընկալել էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման 50-ամյա հորեկյանի տոնակատարությունների առիթով, 1970 թվականի նոյեմբերի 29-ին Լեոնիդ Բրեժնևին և հանդիսավոր մասից հետո ինձ հրավիրեցին այն հարկաբաժինը, որտեղ գտնվում էր Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղարը, Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի հետ միասին:

Անտոն Քոչինյանն ինձ ներկայացրեց բարձրաստիճան հյուրին, որից հետո Բրեժնևն ասաց, «Ա՛-ա՛-ա՛, թատրոնի տեր ու տիրակա՞նն է: Շնորհավորում եմ Ձեզ այս հրաշալի տոնի առթիվ, խմեք մեզ հետ»: Եվ ինձ մեկնեց ընտիր կոնյակով լիքը մի գավաթ, մենք բաժակները խփեցինք ու շնորհավորելով միմյանց երեքով խմեցինք: Այն ժամանակ դա մեծ պատիվ էր համարվում: Դե, այսօր էլ քչերը կարող են հպարտանալ, որ բաժակ են բարձրացրել երկրի առաջին ղեմների հետ:

Դեռևս 1970 թվականի հունիսին, թատրոնում աշխատանքիս առաջին օրերին, ես թատրոնի դիրիժորների, բեմադրիչների, երգչախմբի, բալետային խմբերի ղեկավարների, ինչպես նաև բեմադ-

րական բաժնի պետ Օսիկի և գլխավոր էլեկտրիկ Էդիկի հետ խորհրդակցություն էի անցկացրել, որի ժամանակ պլանավորել և նշել էինք բեմադրվելիք նոր ներկայացումների և հները փոխելու, քարնայնելու հատակ ժամկետներ: Ինչպես և պահանջվում էր, որոշեցինք առաջին տարում հենց բեմադրել հինգ նոր ներկայացում և հիմնական բարեփոխման ենթարկել երկու-երեք բեմադրություն: Այսպես, խստագույն որոշակի պլանով նշված ծրագրով էլ առաջ էինք տանում մեր աշխատանքը:

Հատկապես իմ հիշողության մեջ մխրճվել են մի քանի հրաշալի ներկայացում, որոնց թվում և Պյոտր Չայկովսկու «Կարապի լիճը» բավեռի հրաշալի բեմադրությունը: Այդ բեմադրությունն իրականացնելու համար Երևան էի հրավիրել Սովետական Միության բալետային արվեստի նշանավոր դերեր Ե.Մ. Դուդինսկայային և Կ.Ս. Սերգենին: Երկամսյա քրոնաջան և ջանադիր, անընդմեջ աշխատանքի շնորհիվ նրանք հասան զարմանալի, փայլուն արդյունքների և Սոչի հյուրախաղերի մեկնելու մախօրեին նրանք առաջին անգամ ցույադրեցին հրաշալի մի բեմադրություն, որին ես հրավիրել էի երկրի կառավարության բոլոր անդամներին, հանրապետության երաժշտական և թատերական նշանավոր գործիչների ու ներկայացուցիչների:

Բոլորն անխտիր հիացած էին բեմադրությամբ և այն «մայրաքաղաքային ներկայացում» անվանեցին:

Բառացիորեն առաջին ներկայացման հաջորդ օրը Հայաստանի օպերային թատրոնի տեղծագործական, բեմադրական կազմը մեկնեց Սոչի և ամբողջ մեկ ամիս մեծ հաջողությամբ էր ցույադրում մեր ծրագրում ունեցած առաջնակարգ բեմադրությունները՝ արժանանալով համընդհանուրի ջերմ ընդունելությանը: Ի դեպ, մեր թատրոնի կազմին էր հատկացվել, որոշակի ջանքեր թափելուց հետո, «Պրիմորսկայա» հյուրանոցը, որը թե լողափին, թե թատրոնին շատ մոտ էր:

Տեղական և համամիութենական թերթերը խրախուսական ու գովեստի բազմաթիվ գրախոսականներ էին գրում մեր բարձրորակ էլոյթների մասին, իսկ հյուրախաղերի ավարտին Սոչիի քաղկոմը մեր թատրոնին հանդիսավոր պայմաններում պարգևատրեց քաղաքային կոմիտեի պատվոգրով:

Սոչիում ունեցած հյուրախաղերն այնպես ոգևորեցին օպերային քատրոնի ստեղծագործական կազմին, որ ինձ ստիպեցին ծրագրելու հաջորդ՝ 1972 թվականի ամռանը հյուրախաղային ներկայացումներ կազմակերպել հանրապետության երկու գլխավոր քաղաքներում ևս՝ Լենինականում և Կիրովականում:

Մշակույթի նախարար Կամո Ուրումյանի շնորհիվ և նշված քաղաքների ղեկավարության հետ, դեռևս գարնանը, ինձ հաջողվեց տեղերում նախապատրաստել հյուրախաղերին առնչվող բոլոր հարցերն ու խնդիրները՝ հյուրանոց, քատրոնների դահլիճներ, անհրաժեշտ ղեկորների փոխադրությունը, նվագախմբի և երգչախմբի բաժանումը, որովհետև նշված քաղաքների քատրոններում նվագախմբի համար նախատեսված փոսերը փոքր էին և կարող էին տեղավորել առավելագույնը 30-35 երաժիշտ, իսկ բեմահարթակին կարող էին լինել երգչախմբի 25-30 երգիչ: Այդ պատճառով էլ հարկադրված էի վաղօրոք տեղերում՝ քաղաքների և քատրոնների ղեկավարների հետ լուծել ու համաձայնեցնել անհրաժեշտ հարցերը:

1972 թվականի հուլիսի 1-ից Լենինականում և Կիրովականում միաժամանակ սկսվեցին հյուրախաղային ներկայացումները: Միայն ականատեսը լինեիք, թե ինչպիսի ոգևորություն էր ապրում այս քաղաքների ազգաբնակչությունը: Ժողովուրդը խուռներամ գրավում էր դահլիճները, ցմծությամբ ու մեծ ոգևորությամբ լսում ու դիտում սեր ներկայացումները, որովհետև դրանք իրենց համար եզակի երևույթ էին և պարզ է. դահլիճներն էլ բոլոր ներկայացումներին, ասել է թե՛ ամեն օր լեփ-լեցուն էին: Ես հարկադրված էի օրվա ընթացքում մի քանի անգամ երկու քաղաքներում էլ լինել և լուծել ոչ միայն ստեղծագործական, այլև կազմակերպչական, տեխնիկական բազում հարցեր: Ճիշտ է, երկու քաղաքների միջև հեռավորությունն այնքան էլ մեծ չէ և ես 30-40 րոպեի ընթացքում հասնում էի մեկից մյուսը:

Ի լրումն այս ամենի՝ հուլիս ամսվա ընթացքում օպերային քատրոնը Լենինականում և Կիրովականում ցուցադրեց վաթսու ներկայացում և արժանայալ տեղական իշխանությունների պատվոգրերին:

Մենք Մարիաննայի հետ երջանիկ մի օր էլ ունեցանք, որը անն-

կարագրելի ուրախություն բերեց մեր ընտանիքին՝ 1971 թվականի դեկտեմբերի 20-ին ծնվեց մեր առաջնեկ, սիրելի բոռնուհին՝ Ջուդին: Ավելի ճիշտ՝ ոչ թե բոռնուհին, այլ երրորդ դուստրը, որովհետև ծննդյան օրից նա մեզ հետ էր ապրում և մենք Մարիաննայի հետ նրան վերաբերվել ենք որպես մեր զավակ, դաստիարակել, կրթել և ամեն ինչ: Եվ պատահական չէ, որ նա մեզ մայրիկ և հայրիկ է կոչում:

*
* *

Իսկ օպերային թատրոնում այդ ընթացքում եռուն աշխատանք էր տարվում. ամենօրյա պարտադիր ներկայացումներ, լեփ-լեյուն դահլիճների առկայությամբ: Դահլիճի պատասխանատու աշխատակիցները պատասխանատվության մեծ զգացումով էին վերաբերվում իրենց աշխատանքին:

Մեկ անգամ ինձ հրավիրեցին մշակույթի նախարարության միացյալ նիստին: Այլազան հարցերի հետ քննարկվելու էր նաև օպերային թատրոնի (ինչպես և բոլոր թատրոնների) 1972 թվականի և 1973 թ. սկզբի պլանների կատարման արդյունքները: Երբ գեկույման հերթը հասավ օպերային թատրոնին, ֆինանսական բաժնի պետը հայտարարություն արեց. «Օպերային թատրոնի պատմության մեջ առաջին անգամ պլանները ոչ միայն կատարվել, այլև առավելագույնս գերակատարվել են բոլոր առումներով» և ներկայացրեց հաշվետվությունը:

Միացյալ նիստի ավարտից հետո իմ խնդրանքով հանձնեցին ինձ այդ թվերը պարունակող ցանկը: Ահա այն.

- 1972 թ. ֆինանսատնտեսական պլանի կատարման ցանկ
- Պլանով նախատեսված ներկայացումների քանակը՝ 322 - իրականում՝ 368 (+ 46)
- Հանդիսատեսների թիվը՝ 292.0 - իրականում՝ 295.004 (+ 3.004)
- Հավաքված գումարը՝ 248.0 ռ.- իրականում՝ 301.312 (+ 53.312 ռ.)

Ընդհանուր եկամուտը՝ 290.0 ռ.- իրականում՝ 325.629
(+ 35.629 ռ.)

1973 թ. հունվար (ընդհանուր եկամուտներ՝ 23.0 - իրականում՝
65.843 ռ.)

Պլանով նախատեսված ներկայացումների քանակը՝ 33 -
իրականում՝ 79 (+ 66)

Հանդիսատեսների թիվը՝ 30.1 - իրականում՝ 80. 555 (+ 50.455)
Ընդհանուր եկամուտը՝ 25.0 ռ.- իրականում՝ 65.456
(+ 40.456 ռ.)

Բացի դրանից, Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար
Լյուդվիգ Ղարիբջանյանի միջնորդությամբ ինձ հաջողվեց շրջկո-
մների միջոցով տարածել 1973 թ. բոլոր ներկայացումների համար
աբոնեմենտներ, որը թատրոնին նույնպես մեծ օգուտներ բերեց,
դրանով իսկ ամբողջ տարվա ներկայացումներն ապահովելով հան-
դիսականների թվաքանակով:

Մեծ ցավով պետք է նշեմ, որ մշակույթի նախարար Կամո Ու-
դումյանին տեղափոխելիս և նշանակելիս արտաքին գործերի
նախարար, իսկ նրան փոխարինեց ուն Ռուբեն Պարսամյան, որը ոչ
երաժշտությունից, ոչ թատրոնից ոչ միայն զիտելիքներ, անգամ գա-
ղափար չունեց և մի կարևոր հանգամանք էլ՝ բացասական բնավո-
րության տեր անձնավորություն էր:

Առաջին մեր բախումը տեղի ունեցավ, երբ նա արգելեց տոմսե-
րի կուլեկտիվ վաճառքը: Իմ բոլոր փաստարկները, որ տոմսերի տա-
րածման այդ ձևից օգուվում են և Մեծ թատրոնը, և Կրեմլի պալատը,
և Միության օպերային բոլոր թատրոնները, նրան չհամոզելիս, սա-
կայն հաշվի չառնելով այս ամենը՝ ես շարունակում էի թատրոնի հա-
մար բացառիկ օգտակար այդ գործընթացը:

Երկրորդ մեր բախումը տեղի ունեցավ, երբ նա պահանջեց պա-
կասեցնել օպերային թատրոնի անխտիր բոլոր աշխատակիցների
աշխատավարձը, չեղյալ համարելով նախարարների խորհրդի և
ֆինանսների նախարարության որոշումները, որին հասել էր մշա-
կույթի նախկին նախարար Կամո Ուդումյանը: Կամո Ուդումյանի
հետ մենք հարկադրված էինք մի քանի անգամ թակելու վերը նշված
հաստատությունների ղեկավարների դռները՝ պաշտպանելու թատ-

րոնի աշխատակիցների իրավունքները, ընդունել ճշմարիտ որոշումներ:

Երրորդ և բախտորոշ բախումը Պարսամյանի հետ կայացավ, երբ նա ինձ իր մոտ կանչեց (և ոչ թե հրավիրեց) և պահանջեց Ալեքսանդր Բորոդինի «Իշխան Իգոր» օպերայի բեմադրությունը հանձնարարել Օհան Դուրյանին, նշելով նաև, որ այդ դեպքում Դուրյանը պետք է լիներ ոչ միայն դիրիժորը, այլև բեմադրիչը, որովհետև Դուրյանն այդ օպերայի բեմադրությունը տեսել էր Գերմանիայում:

Ես որոշեցի հենց այդ պահին ծաղրուծանակի ենթարկել այդ հիմար առաջարկը և ասացի. «Այդ օպերայի երկրորդ գործողությունն ամբողջությամբ պարերից է բաղկացած, միգուցե Դուրյանի՞ն հանձնվի պարերի բեմադրությունը ևս»: Չնայած հիմար լինելուն՝ նա հասկացավ իմ ծաղրը, նեղացավ, և դրանով ավարտվեց մեր խոսակցությունը: Ես լավ գիտեի, թե ով է մինիստրին և Դուրյանին լարում իմ դեմ, և որ այդ «բարեկամն» ու «կամեցողը» երաժշտական աշխարհում ազդեցիկ պաշտոնյա անձնավորություն է:

Մի խոսքով, Պարսամյանի վերջին այդ տխմար առաջարկությունն ապացույցեց, որ օպերային թատրոնում իմ աշխատանքային գործունեությունը դադարեցնելու ժամանակն է և որպեսզի այլևս այս անդուր բաների հետ չառնչվեմ, դիմում գրեցի և ինձ սպասարկող օպերային թատրոնի վարորդի միջոցով ուղարկեցի նախարար կոչվածին:

Եվ այսպես, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում աշխատելով երկու տարի և տասն ամիս և այդ ժամանակահատվածում իրականացնելով 12 օպերային և բալետային նոր ներկայացումների բեմադրություն և հիմնավորապես վերաբեմադրելով՝ ութը, ես հեռացա օպերային թատրոնից և վերադարձա կոնսերվատորիայի իմ աշխատանքին: Իրական է, որ այդ իրագործելու համար հարկ եղավ այն ժամանակ բարձրագույն կրթության նախարար Աշոտ Տիգրանի Ասլանյանի համառ և որոշիչ միջամտությունը, որովհետև գործուն կերպով շարունակում էր գործել «բարեկամ» կոչված ազդեցիկ պաշտոնյան:

Վերադառնալով կոնսերվատորիա՝ ես հաճույքով լծվեցի իմ սիրելի գործին: Պրոռեկտորի պաշտոնավարությունը և իհարկե ուսա-

նողների հետ աշխատանքային գործունեությունը ինձ լիարժեք բավարարվածություն և հաճույք էին պատճառում, առավել ևս, որ նախարարն ու բարձրագույն կրթության փոխնախարարը խելամիտ և գիտակ գործիչներ էին, բարեկիրթ մարդիկ, ոչ թե խանգարում, այլ օգնում էին ինձ ուսումնադաստիարակչական իմ աշխատանքում:

Վերադառնալով կոնսերվատորիա և ծանոթանալով ուսումնական գործառնության իրավիճակին, հայտնաբերեցի, որ ինձ փոխարինողը (Ն. Դերոյան) երեք տարվա ընթացքում ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ ամեն ինչ բարձիթողի է արել, այդ թվում և՛ ուսանողների և՛ մանկավարժական անձնակազմի շրջանում տարվող աշխատանքներում:

Խորհրդակցելով կոնսերվատորիայի ռեկտոր Ղ. Սարյանի հետ, ես հաճախումների և դասավանդման նոր համակարգ ստեղծեցի, որի համաձայն մանկավարժն աշխատանքի գալով՝ ուսումնական մասում պետք է ստորագրի հատուկ նախապատրաստված մատյաններում, որտեղ նշված էին ամսաթվերը, մանկավարժի անուն-ազգանունը, լսարանը, դասն սկսվելու և ավարտի ժամը, հենց ուսումնական մասում էլ՝ ստանա դասամատյանն ու դասի համար նախատեսված լսարանի բանալին և ստորագրել ավարտի մասին:

Այս բոլորը պետք է արվեր ուսումնական մասի քարտուղարի իմացությամբ, երկու հերթափոխի ընթացքում (մինչև կեսօր և հետո):

Ավարտելով այս համակարգի մշակման անհրաժեշտ և պարտադիր աշխատանքը՝ ես հավաքեցի ամբիոնների վարիչների և դեկանների խորհրդակցություն, մանրագնին ծանոթացրի նրանց այս նոր համակարգի հետ և խնդրեցի մոտ օրերի ընթացքում որպեսզի ամբիոնների ճիստեր կազմակերպեն և բոլոր պրոֆեսորներին, դուստր-մանկավարժներին ծանոթացնեն նոր կարգի հետ, իսկ ամենակարևորը՝ հետևեն իրենց ուսանողների վարքին, ուսման ընթացքի բոլոր առարկաներին և ընդհանրապես, պատասխան տան իրենց ուսանողների համար, որովհետև կոնսերվատորիայի ուսանողները, առհասարակ, մեծ հարգանքով են վերաբերվում մասնագիտության իրենց դասատուներին ու լսում նրանց խորհուրդները և մատների արանքով նայում մյուս առարկաներին: Տառապանքս փորձ ունի, լավ գիտեի: Բոլոր նախապատրաստական աշխատանքներից մեկ

ամիս հետո մենք սկսեցինք իրագործել նոր համակարգը: Շատ շուտով այն հիանալի արդյունքներ տվեց:

Կոնսերվատորիայի դասախոսների գերակշռող մեծամասնությունը ազնվորեն և նվիրված աշխատում էր՝ գերազանց կատարելով իրենց պարտականությունները:

Բացառություն էին կազմում մի քանի անարժան մարդ՝ Ռ. Ազատյանը (ալտի դասարան), Ս. Կարապետյանը (հայոց լեզու) և օպերային պատրաստության ամբիոնի 2-3 դասախոս, ի դեպ, այդ ամբիոնի դասախոսներից ոմանք իրենց աշխատանքի նկատմամբ պատասխանատվության, հարգանքի տարրական զգացում չունեին:

Այս դասախոսները գալիս էին ուսումնական մաս, միանգամից ստորագրում դասն սկսելու և ավարտելու ժամերի դիմաց, չէին վերցնում ոչ մատյանները և ոչ էլ լսարանների բանալիները և գնում էին տուն: Ի դեպ, նրանց ուսանողները շատ լավ էին ուսումնասիրել նրանց մանրությունը և ատում էին այդպիսի դասախոսներին:

Երբ ուսումնական մասում զեկույում էին նրանց արարքների մասին, ես հարկադրված էի նրանց բռնել «հանցանքի վայրում» և բարեկրթորեն խիստ նկատողություն անել: Մակայն այս եզակի դեպքերը չէին կարող խանգարել ուսումնական գործընթացի նշանակալի բարելավման ընթացքին և նոր համակարգը կարճ ժամանակամիջոցում հիանալի արդյունքներ ունեցավ, որն ընդունում էին կոնսերվատորիայի թե՛ ուսանողները, թե՛ մանկավարժները: Այդ համակարգը լիովին արդարացրեց իրեն և կիրառվում է կոնսերվատորիայում մինչև օրս:

Վառ հիշելով Մոսկվայի կոնսերվատորիայի ուսումնառության տարիներին ուսանողական կյանքի դժվարություններն ու հաճելի ժամանակները, ես իմ պարտքն էի համարում հոգալու մեր ուսանողների կյանքի, ուսման, հմարավորությունների բարելավման մասին, հմարավորին չափ ավելի լավ պայմաններ ստեղծելու ուսման և առօրյայի համար, սեր և հարգանք սերմանել իրենց մասնագիտության, ինքնուրույն աշխատանքի նկատմամբ: Ես գայրույթով էի մերժում որոշ ղեկանների և մանկավարժների՝ ուսանողներին որպես պատիժ թռչակից զրկելու առաջարկները, նախապատվությունը տալով դաստիարակչական այլ միջոցների, որովհետև համարում էի

և համոզված էի, որ ռեկտորատը, դեկանատը և ամբիոնները կոչված են ուսանողներին ուսում տալու և դաստիարակելու համար, որ մենք առաջին հերթին պարտավոր ենք հոգալ և մտածել նրանց մասին:

Հատկապես հենց այս տեսանկյունից մտորումներն ինձ հանգեցրին իմ կարծիքով շատ կարևոր մի գաղափարի: Ես համոզված էի, որ կատարողական ֆակուլտետների ուսանողների ինքնուրույն տնային պարապմունքների ամենահարմար ժամանակը առավոտյան ժամերն են, թարմ գլխով, որ ավելի լավ է առավոտյան պարապել 3-4 ժամ, քան վեց ժամ դասախոսություններից հետո հոգնած՝ նոր սկսել պարապել մասնագիտությամբ 5-6 ժամ:

Խորհրդակցելով փորձառու և լավագույն մեր մասնագետների հետ, մի ավելորդ անգամ ևս համոզվեցի այդ գաղափարի ճշմարտացիության մեջ և որոշեցի այն կյանքի կոչել:

Ես հարկադրված էի իմ մեկամսյա արձակուրդը վատնել, որպեսզի ուսումնական նոր դասացույցակն այնպես կազմեն ու դասերը, դասախոսություններն այնպես դասավորեն, որ այն ոչ միայն ուսանողներին, այլև խմբական դասընթացների դասախոսներին հարմար լինի, ինչպես նաև հաշվի առնելով լսարանների անհրաժեշտ բավարար բանակը:

1977 թվականի աշնանից պարապմունքներն սկսեցինք նոր դասացույցակներով, որի համաձայն տեսական, ստեղծագործական, խմբերգային, դիրիժորական (նվագավարական) բաժնի ուսանողների դասերն անց էին կացվում առավոտյան ժամը 9-ից, իսկ կատարողական բաժնի ուսանողների խմբական դասերն ու դասախոսությունները սկսվում էին կեսօրվա ժամը 1-ից, հնարավորություն ընձեռելով առավոտյան ժամը 8-9-ից այդ թանկարժեք ժամերը հատկացնել մասնագիտական անհատական պարապմունքներին:

Արդեն իսկ ձմեռային քննաշրջանում այս նորամուծությունը գերազանց արդյունքներ տվեց և նոր համակարգն արդարապես իրեն: Այն գործում է մինչև այսօր՝ տալով հիանալի որակ ու արդյունք:

Իմ հիշողության մեջ մի շարք միջոցառումներ շատ ուժեղ հետք են թողել, որոնք շատ ուժ և ժամանակ են խլել ինձնից:

Առաջին. Ժողովրդական ստեղծագործության կաթինետի ստեղծումը: Այդ գործի իրականացման աշխատանքներում մեծ օգնություն բերեց ժողովրդական ստեղծագործության մեծ գիտակ Մարգո Բրուտյանը: Ես դիմեցի բարձրագույն կրթության նախարարին (այդ ժամանակ Լյուդվիգ Ղարիբջանյանն էր նախարարը), որը մեծ ըմբռնմամբ և հասկացողությամբ մոտեցավ իմ խնդրանքին՝ հատկացնել անհրաժեշտ քանակի հաստիքներ այս հրաշալի գործն իրականացնելու համար, և ես էլ ստիպված էի մեր սուղ պայմաններից երկու լսարան հատկացնելու և դասապուրակն էլ ձևավոխել ժողովրդական ստեղծագործության կաթինետի բնականոն աշխատանքին համապատասխան:

Կաթինետի աշխատակիցներն ամեն տարի գործուղվում էին գիտարշավի՝ ժողովրդական երաժշտություն ձայնագրելու և հավաքագրելու ոչ միայն Հայաստանի շրջաններ, այլև Սև ծովի առափնյա հայաբնակ բնակավայրերը, ուր ապրում են մեծ թվով մեր հայրենակիցները, ինչպես նաև արտասահմանյան երկրներ (ոչ միշտ): Հավաքված նյութը գործիմացությամբ մանրակրկիտ ուսումնասիրվում էր կաթինետի աշխատակիցների կողմից և հաճախ հրատարակվում, արդյունքում որոշակի քանակի գրականություն ստեղծվեց ժողովրդական ստեղծագործության հարուստ մնուշների գետեղմամբ:

Կաթինետն արդեն մի քանի տասնամյակ շարունակում է լավ, ամուր հիմքերի վրա դրված գործը և իր ավանդույթներն է ստեղծել:

Երկրորդ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի օպերային ստուդիայի վերաստեղծումը շատ բարդ ու դժվարին իրագործվող մի ձեռնարկ էր և ինձնից խլեց մեկուկես տարվա լարված աշխատանք: Անհրաժեշտ էր սկզբում ծանոթանալ

¹ Երևանի պետական կոնսերվատորիայում օպերային ստուդիա ստեղծվել է դեռևս 1927 թ. Ա. Տեր-Ղևոնդյանի նախաձեռնությամբ, որն ընդգրկել է Արշակ Աղայանի ստեղծած սիմֆոնիկ նվագախումբը և Սպ. Մելիքյանի ղեկավարած երգչախումբը: 1933 թ. օպերային ստուդիան վերածվեց օպերային թատրոնի, որի բացումը կայացավ 1933 թ. հունվարի 20-ին:

երկրի այլ կոնսերվատորիաներում գործող օպերային ստուդիաների աշխատանքներին և առաջին հերթին Մոսկվայի կոնսերվատորիայի Ս. Տ. Շայկո անվան օպերային ստուդիայի աշխատանքներին, որի դրվածքն, անշուշտ, լավագույնն էր: Ի դեպ, 1935-1945 թվականներին այդ օպերային ստուդիան ղեկավարել է պրոֆեսոր Միքայել Մալունյանը և մի շարք բեմադրություններ իրականացրել: Աշխատանքների ուսումնասիրման նպատակով հարկադրված էի մեկ շաբաթով գործուղվել Մոսկվա և մանրամասնորեն ծանոթանալ անձնակազմի հետ, տեղեկանալ հաստիքացուցակներին, նվագախմբի երաժիշտների, երգչախմբի կազմերի, նրանց մեներգիչների թիվը պարզել, իմանալ ղեկավարների, տեխնիկական, բեմադրական աշխատանքների քանակի և ընդհանրապես՝ ինչպես են տարվում ու կատարվում աշխատանքները և այլն, և այլն:

Միաժամանակ եղա նաև Սովետական Միության մշակույթի և բարձրագույն կրթության նախարարություններում, իմանալու՝ ի՞նչ և ինչպե՞ս անել, որպեսզի արագ ստանալ ստուդիայի վերաստեղծման նրանց թույլտվությունն ու համաձայնությունը և թե ո՞վ է զբաղվում այդ գործերով և այլն:

Վերադառնալով Երևան՝ ձեռքիս ունենալով համապատասխան բոլոր տեսակի փաստաթղթերն ու այդ թվում Մոսկվայի կոնսերվատորիայի օպերային ստուդիայի հաստիքացուցակի պատճենը, մանրակրկիտ ծանոթացրի ռեկտոր Ղազարոս Սարյանին այս ամենի հետ, որից հետո քննարկելով բոլոր հարցերը՝ կազմեցինք մանրամասն հիմնավորված մի մամակ՝ ուղարկելով այն Նախարարների խորհրդի նախագահին և Հայաստանի բարձրագույն կրթության նախարարին, մամակին կցելով համապատասխան փաստաթղթեր և համամիութենական բարձրագույն կրթության նախարարության որոշումը:

Օպերային ստուդիայի համար գոյություն ունեցող չափակարգի համաձայն՝ մենք պահանջեցինք նվագախմբի երաժիշտների 50, երգչախմբի համար՝ 30, մեներգիչների համար՝ 12, բալետի արտիստների համար՝ 6 հաստիք, ինչպես նաև 3 հաստիք ղեկավար մարմին և 5 հաստիք երգիչ-արտիստներին հազցնելու և տեխնիկական աշխատանքների կատարման համար՝ ընդամենը 112 հաստի-

քային միավոր, նշելով նաև յուրաքանչյուրի աշխատավարձի չափը:

Վերջապես, 1981 թվականի սեպտեմբերին Հայաստանի Նախարարների խորհրդի որոշմամբ վերաստեղծվեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային կից օպերային ստուդիան:

Մրցութային կարգով ընդունելով նվագախմբի երաժիշտներին, երգչախմբի երգիչներին և գլխավոր մենակատարներին՝ օպերային պատրաստության ամբիոնին հանձնարարեցինք նշանակել գիտական խորհրդի որոշմամբ հաստատված առաջին օպերայի բեմադրության դիրիժորին և բեմադրիչին և փորձերն սկսել հոկտեմբերի 1-ից:

Մեծագույն ցավով պետք է նշեմ, որ շատ շուտով համոզվեցի, որ օպերային պատրաստության ամբիոնը լուրջ աշխատանք կատարելու ընդունակ չէ: Ամբիոնի գրեթե բոլոր անդամներն ավելի շատ գոյություն չունեցող պատվավոր պաշտոնների, դիրքերի, կոչումների, քան թե կատարվելիք աշխատանքի մասին էին մտածում: Նրանց կատարած աշխատանքի մեջ ոչ մի կարգապահություն չկար, ծրագրված աշխատանք չկար, բեմադրությունները կատարվում էին հսկայական կրճատումներով, կատարման որակը անգամ մասնագիտականին մոտ չէր: Նվագախմբի, երգչախմբի, մեներգիչների փորձերն անկազմակերպ, ոչ մասնագիտական մակարդակով էին անցնում, վայ ղեկավարները պատասխանատվության ոչ մի զգացում չունեին իրենց կատարած աշխատանքի հանդեպ և այլն:

Այս ամենն ինձ մեծ հիասթափություն պատճառեց, և ազնվորեն ափսոսում էի, որ իմ փայփայած իղձերը, աշխատանքն ու չարչարանքները իզուր էին անցնում, երկար ժամանակ չէի կարողանում ուշքի գալ:

Երրորդ. այն նախաձեռնությունը, որով ես սկսեցի զբաղվել, կոնսերվատորիայի թանգարանի ստեղծման աշխատանքներն էին: Այս նախաձեռնությունը հատուկ միջոցներ և շատ չարչարվելու պահանջ չէր պարտադրում: Թանգարանի համար հատկացրի լսարաններից մեկը և ղեկավարի հաստիքային մեկ միավոր: Թանգարանի ղեկավար նշանակեցինք կոնսերվատորիայի տեսական ֆակուլտետի նորաթուխ շրջանավարտներից Ջարուհուն (*Տեր-Ղազարյան*-

Վ.Թ.), որը մեծ նվիրումով լծվեց աշխատանքի և կարճ ժամանակահատվածում օգտակար շատ մեծ գործ կատարեց: Հիանալի աշխատանքի համար հետագայում նրան տեղափոխեցինք երաժշտության պատմության ամբիոն: Մի քանի տարվա ընթացքում քանգարանում կուտակվեց պատմական, քանկարժեք բազմաթիվ նյութ, այդ աշխատանքն առայսօր էլ շարունակվում է:

*
* *

Իմ հուշերում առանձնահատուկ տեղ ու նշանակություն ունեն իմ ուսանողներին Մոսկվայում ցուցադրելու հրավերները: Այդ հրավերները կազմակերպում էր Արվեստի աշխատողների կենտրոնական տանը կից՝ փողայինների համամիութենական ընկերությունը: Ունկնդրումների հանձնախմբում ընդգրկված էին Մոսկվայի կոնսերվատորիայի և Գ.Մեսիների անվան երաժշտամանկավարժական ինստիտուտի (այսօր երաժշտական ակադեմիա) պրոֆեսորներ, Մեծ քատրոնի, պետական սիմֆոնիկ նվագախմբի, սիմֆոնիկ մեծ նվագախմբի և այլ նվագախմբերի փողային գործիքների լավագույն կատարողներ:

Մինչև 1962 թ. համամիութենական մրցույթը, Մոսկվայի ձայնագրող ստուդիաներից մեկի կողմից հրավեր ստացա ապահովել իմ սաներից մեկի մասնակցությունը՝ Յոզեֆ Հայդնի շեփորի և նվագախմբի կոնցերտի ունկնդրությանը: Ես ընտրեցի իմ լավագույն ուսանող Յուրի Բալյանին, որն իմ կարծիքով այդ կոնցերտի լավագույն և ճիշտ կատարողն էր: Սակայն երբ մա ունկնդրման օրը ուշացումով ներկայացավ Արվեստի աշխատողների կենտրոնական տան դահլիճ, պարզվեց, որ նախորդ երեկոյան ինչ-որ կերակրատեսակից թունավորվել է և ամբողջ գիշերը գալարվել է ցավերից ու չի քնել և շատ վատ տեսք ուներ: Ես որոշեցի, որ այսպիսի դրության մեջ մա ի վիճակի չէր նվագելու, նստեցրի կողքիս աթոռին՝ պարզապես մասնակիցներին ունկնդրելու համար: Սակայն ունկնդրության երկու մասնակցի լսելուց հետո Յուրան կարծես թե ուշքի եկավ և

մասնակցելու բույրավորություն խնդրեց: Խորհրդակցելով ունկնդրության հանձնախմբի նախագահ Տիմոֆեյ Դոկչիսյեի հետ՝ մենք համաձայնեցինք և նա բեմահարթակ բարձրացավ:

Ի զարմանս ինձ, չնայած առողջական վիճակին, նա շատ հաջող նվագեց, կատարելով դասական երաժշտության կատարման բոլոր իմ ցուցումները: Երբ նա նվագն ավարտեց, դահլիճում բուռն ծափողջույններ թնդացին և ես հանգստացա:

Ունկնդրության բոլոր մասնակիցների ելույթից հետո սկսվեց արդյունքների մանրակրկիտ քննարկումը: Հուրախություն և ի հպարտություն ինձ, հանձնախմբի բոլոր անդամները միաձայն նշեցին Յուրի Բալյանին՝ որպես Յոզեֆ Հայդնի շեփորի և նվագախմբի կոնցերտի (դաշնամուրի նվագակցությամբ) լավագույն կատարող, նշելով ոճի, հնչողության, տեմպերի և մեկնաբանության ճշմարտությունն ու հեղինակի ստեղծագործական ոճական առանձնահատկությունների հարազատությունը: Սկսվեցին շնորհավորանքներն ու ծափերը, և մենք լիարժեք բավարարված էինք:

Իմ սաների ամենահաջող, հաճելի և ուրախալի ցույցադրությունը Մոսկվայում 1966 թվականին էր: Իմ դասարանից ընտրեցի 5 սանի: Վաղօրոք Մոսկվա ուղարկեցի յուրաքանչյուր ուսանողի կատարելիք ստեղծագործությունների ցանկը, պրոֆեսորի պաշտոնակատար դաշնակահար Գեորգի Կուզանովի մասին տեղեկություններ (այս տվյալները հեռախոսով Տիմոֆեյ Դոկչիսյեին էր խնդրել):

Համերգի առաջին բաժնում պետք է հանդես գային Տիգրան Սարգսյանը, Ֆելիքս Հայրապետյանը և Գուրգեն Սարգսյանը (Չոնիկ), որոնցից յուրաքանչյուրը պետք է ներկայացներ 15-17 րոպեանոց ծրագիր: Համերգի երկրորդ բաժնում հանդես էին գալու Հրաչիկ Փոթիկյանը և Յուրի Բալյանը՝ յուրաքանչյուրը ներկայացնելով 22-25 րոպեի ծրագիր:

Նշանակված օրը մենք Մոսկվայում էինք, տեղավորվեցինք Ստոլեշնիկով նրբանցքի փոքրիկ, բայց շատ հարմարավետ հյուրանոցում, որը ԱՄԿՏ-ից 5-6 րոպե բայլելու հեռավորություն ուներ:

Հաջորդ օրը երեկոյան Արվեստի աշխատողների կենտրոնական տան դահլիճում տեղի ունեցավ մեր հաշվետու համերգը:

Համերգից առաջ բացման խոսքով հանդես եկավ Մոսկվայի

կոնսերվատորիայի պրոֆեսոր Գեորգի Օրվիդը՝ և ծրագրի համաձայն իմ տղաները նշված հերթականությամբ, սկսեցին ներկայացնել գործերը:

Արվեստի աշխատողների կենտրոնական տան լեփ-լեցուն դահլիճում նստած էին Մոսկվայի լավագույն փողային գործիքների կատարողները՝ և՛ կոնսերվատորիայի, և՛ Գ-նեսինների անվան ինստիտուտի պրոֆեսորներ, դոցենտներ, ուսանողներ, տարբեր նվագախմբերի մենակատարներ և այլն:

Այդ երեկոն իմ մանկավարժական գործունեության ամենաերջանիկ օրերից մեկն էր: Իմ բոլոր ուսանողները շատ հաջող հանդես եկան, առանց պատահականությունների, նրանց կատարումները հրաշալի էին հնչում, նվագում էին շատ երաժշտական և զրազետ: Դահլիճը նրանցից յուրաքանչյուրին շատ ջերմ էր ընդունում, բուռն ծափերով, «բռավո» բացականչություններով:

Համերգի ավարտին նորից խոսք ասաց Գ. Ա. Օրվիդը, բարձր գնահատական տվեց իմ սաների կատարողական արվեստին և հատկապես մանկավարժական իմ գործունեությանը, իսկ երբ նորից ինձ անվանեցին «պրոֆեսորի պաշտոնակատար», դահլիճից զայրալից բացականչություններ լսվեցին՝ «Վերայնել «պաշտոնակատար» բառը, մա վաղուց է վաստակել պրոֆեսորի պատվավոր կոչումը»:

Համերգից հետո ինձ շրջապատեցին բազմաթիվ հիանալի երաժիշտներ, շնորհավորում էին, գովեստի խոսքեր էին ասում շռայլորեն, և զգում էի, որ դրանք անկեղծ ու բարյացակամ արտահայտություններ էին:

Համերգի այդպիսի հաջողությունից ոգևորված՝ որոշեցի

¹ Օրվիդ Գեորգի Անտոնի (1904-1980) - խորհրդային շեփորահար, մանկավարժ, երաժշտահասարակական գործիչ: Ռ-ԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1966): Ռ-ԽՖՍՀ ժողովրդական արտիստ (1972) Մ. Ի. Տաբակովի աշակերտ: 1923-ից նվագել է Մոսկվայի ֆիլիարմոնիկ սիմֆոնիկ նվագախմբում, 1930 թ. Մեծ քաղաքի նվագախմբի մենակատար, 1936-1940 թթ. ԽՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախմբում որպես մենակատար: Փողային գործիքների կատարողների համամիութենական մրցույթի եռակի մրցանակակիր (1941), Կազմել է «շեփորի ձեռնարկ» (1933): Շեփորի և դաշնամուրի մի շարք ստեղծագործությունների փոխադրություններ է կատարել: 1946-1961 թթ. ԽՍՀՄ կուլտուրայի նախարարությունում ղեկավար պաշտոններ է վարել: 1931 թ. դասավանդել է Մոսկվայի կոնսերվատորիայում (1941 թ., պրոֆեսոր, 1948-1954 թթ. ուսումնական և գիտական գծով դիրեկտորի տեղակալ, 1969՝ փողային գործիքների ամբիոնի վարիչ):

«Արագվի» ռեստորանում ընթրիք կազմակերպել և հրավիրել իմ մոսկովյան գործընկերներից մի տասը հոգու: Մակայն այդ մասին տեղեկացան մոսկվաբնակ իմ հայ բարեկամները, մոսկովյան լավագույն նվագախմբերի մենակատարներ Ժորա Սահակյանը, Սերգեյ Ամեդյանը, Անուշ Գրիգորյանը, Միմիկ Փեշումալջյանը, Սուրիկ Գևորգյանը և ինձ ասացին. «Դու քո պարտականություններն ու գործը փայլուն կատարեսիր, իսկ «Արագվի» հրավիրելը մեր գործն է»:

Գնացի՞նք ռեստորան ու շատ մտերմիկ, ուրախ մի երեկո անցկացրի՞նք: Իմ ավագ գործընկերները և բարեկամները գովեստի շատ խոսքեր ասացին իմ և իմ սամերի հասցեին, իսկ Երյոմինը, Օրվիդը և Դոկշիցերը նշեցին, թե իրենք իրենց դասարաններից չեն կարող առանձնացնել հինգ այսալիսի մակարդակի ուսանող և ցույադրել բայ համերգի:

Այս գեղեցիկ, հաճելի երեկոն շատ երկար ապրում է իմ հիշողության մեջ, ճիշտ է, մինչև այդ և դրանից հետո էլ Երևանում շատ եմ ունեցել դասարանական համերգներ, ուսանողներս հանդես են եկել ամբիոնի բայ համերգներին և համակոնսերվատորիական համերգներին Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում, Կամերային երաժշտության տան դահլիճում և այլն, սակայն մոսկովյան այդ երեկոն անմոռայ հետք է թողել և Մոսկվայի ԱԱԿՏ-ն դահլիճի համերգն ինձ համար յուրահատուկ նշանակություն ունի: Ինչ վերաբերում է դահլիճից լաված ցանկությանը, թե պրոֆեսորի «պաշտոնակատար» բառը դեն մետեք, այնքան էլ շուտ տեղի չունեցավ: Ես հարկադրված սպասեցի տասը երկար տարի, մինչև 1976 թվականի մայիս ամիսը, երբ վերջապես հաստատվեց պրոֆեսորի գիտական կոչումը: Դրա միակ պատճառն այն էր, որ ես ավելի շատ աշխատանքով էի տարված, պրոռեկտորի իմ պարտականություններով, մանկավարժական իմ գործունեությամբ, քան իմ կոչումներով: Այնպես որ, դուցենտից մինչև պրոֆեսոր ընկած ճանապարհը ինձ համար շատ երկար տևեց և հարկադրված էի սպասել 1954-ից մինչև 1976 թվականը: Իսկ կոնսերվատորիայում աշխատանքային գործունեության 1947-ից մինչև 1976 թվականը:

Հաշվի չառնելով այս ամենը՝ ես շարունակում էի ազնիվ, իմ հա-

րազատ կոնսերվատորիային նվիրված աշխատանքս, որտեղ աշխատում եմ արդեն կես դարից ավելի:

Այն բոլորին, ինչի ես հասել եմ իմ երկարամյա աշխատանքային, դժվարին կյանքի ընթացքում, պարտական եմ իմ ջանադիր աշխատանքին, պարապմունքներին, համեստ գիտելիքներին, լավագույնին, բարձրին հասնելու ձգտումին, ազնվությանը, նախանձի բացակայությանը:

Ես պաշտոնյա ու ազդեցիկ ծնողներ ու բարեկամներ չեմ ունեցել, որոնք ինձ օգնեին առաջխաղաչման ասպարեզում, օգնեին ինձ հաջողությունների հասնել, ինչպես շատ-շատերին, որոնց ես քաջ ճանաչում եմ ու գիտեմ:

Մանկույց ես շատ եմ կարդացել, ուսումնասիրել իմ ժողովրդի անցած ծանր ու դժվարին ուղու պատմությունը, կարդացել գեղարվեստական գրականություն դասականների ու ժամանակակիցների լավագույն ստեղծագործությունները, ուսումնասիրել եմ հանճարեղ երաժիշտների կենսագրականն ու գործունեությունը (սիմֆոնիաներ, օպերաներ, պոեմներ և այլն): Լինելով Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ և օպերային թատրոնի նվագախմբերի մեմակատար՝ հաճախել ու լսել եմ լավագույն դաշնակահարների, ջութակահարների, երգիչների (Երևանում և Մոսկվայում) եզակի համերգներ: Այդ ամենն ինձ մեծապես օգնել է իմ մասնագիտական գործունեության ասպարեզում, հատկապես մանկավարժական աշխատանքում: Այդ գիտելիքներն ինձ օգնել են նաև կոնսերվատորիայի նվագախմբային և կոնսերվատորիայի ղեկանի (1960-1967 թթ.), պրոռեկտորի (1967-1970, 1973-1985) պաշտոնավարության ընթացքում և Հայաստանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարի և տնօրենի պաշտոնավարության ժամանակ (1970-1973), և փողային գործիքների ամբիոնը ղեկավարելիս (1981-1992):

Փողային գործիքներ կատարողների համամիութենական մրցույթների հանձնախմբի անդամ ինձ առաջին անգամ հրավիրել են 1963 թվականին: Մրցույթն անցկացվում էր Լենինգրադում, «Կապելլայի» դահլիճում:

Վաղօրոք իմանալով մրցույթի հանձնախմբի անդամների վե-

րաբերմունքը հանրապետությունների մասնակիցների նկատմամբ, համեմայն դեպս ես իմ ուսանողներից երկուսին Յուրի Բալյանին և Հրաչիկ Փոթիկյանին տարա, որպեսզի մասնակցեն այդ մրցույթին, ավելի ճիշտ՝ հանձնախմբի լեմինգրադյի և այլ բաղաբների անդամներին և, ինչու չէ, նաև մասնակիցներին ցուցադրելու, քան դափնիներ նվաճելու ակնկալիքով:

Ինչպես և կանխագգում, և համոզված էի, մոսկվայիներն ու լեմինգրադյիները վաղօրոք միմյանց հետ պայմանավորվել էին և բարձր միավորներ էին նշանակում միայն իրենց յուրայիններին, իսկ մյուսներին՝ ամենապածր գնահատականները: Այսպիսի պայմաններում իմ Փոթիկյանը, իհարկե ոչինչ չստացավ, իսկ Բալյանը միայն մասնակցի դիպլոմի արժանացավ:

Դրանից հետո, չնայած ես բազմաթիվ մրցույթների հանձնախմբերի կազմում եմ եղել, սակայն իմ տղաներից և ոչ մեկին չեմ տարել մասնակցելու, որպեսզի նրանց չհիասթափեցնեն: Նրանք հիանալի էին կողմնորոշվում, համոզվում, որ այն մասնակիցները, ովքեր իրենցից շատ ավելի ցածր մակարդակի կատարողներ էին, սակայն մոսկվայի կամ լեմինգրադյիներ էին, ստանում էին բարձր միավորներ, հասկանալի է՝ նաև դափնեկրի կոչումներ:

Միայն 1980 թվականին Տալլինում կայանալիք համամիութենական մրցույթին մասնակցելու համար ես նախապատրաստեցի հիանալի ուսանող Արթուր Մխիթարյանին և նույնքեր ամսին նրա հետ մեկնեցիք Տալլին: Կարծես թե դիտավորյալ Տալլիննի սանձամանիքները նրա վրա ազդեցին, շատ խիստ մրսեց, շուրթերն անտանելի բորբոքվեցին, և երեք օր անընդմեջ պարապելու հնարավորություն չունեց և, քայ թողնելով մասնակցելու իր օրը՝ ժամկետը և միայն մրցույթի առաջին փուլի ավարտից մեկ օր առաջ Արթուրն սկսեց պարապել: Առաջին փուլի ավարտի նախօրյակին, ուշ երեկոյան, ունկնդրումներից հետո Տիմոֆեյ Դոկչիլերի հետ նրան լսեցինք և որոշեցինք, որ հաջորդ օրը նա կարող է, ի վիճակի է ելույթ ունենալ:

Խնդրեցի հանձնախմբի՝ նախագահին, հայտնելով, որ Արթուր Մխիթարյանը կազդուրվել է և ի վիճակի է հանդես գալու, առաջին փուլի ամենավերջում թույլ տրվեց նրան բեմ բարձրանալու և կատարելու իր ծրագիրը՝ Հայդնի և Թամբերգի կոնցերտները:

Հաջորդ օրը, ինչպես և որոշված էր, փուլի վերջում Արթուր Մխիթարյանը բեմահարթակ բարձրացավ, շատ լավ կատարեց իր ծրագիրը, հանձնախմբի անդամները բարձրանում էին նստատեղերից, մոտենում ինձ, շնորհավորում, ձեռքս սեղմում, գովաբանում իմ աշակերտին: Դահլիճը բուռն ծափահարում էր Արթուրին, մրցույթի շատ մասնակիցներ մոտենում էին նրան, ջերմորեն շնորհավորում հաջող կատարման համար և խոստովանում, որ Արթուրը բոլորից լավ նվագեց: Սակայն երեկոյան պարզվեց, որ մրցույթի նախագահը և նրա երկու տեղակալները որոշել էին Արթուրին երկրորդ փուլին մասնակցելու իրավունքից զրկել, որովհետև նա իր նշանակված օրը հանդես չի եկել առաջին փուլում: Ինչպիսի՞ անհեթեթություն, մանրություն: Այդ անարդարացի (մեղմ ասած) որոշումը տակնուվրա արեց ինձ, և ես որոշեցի թողնել մրցույթն ու ժամկետից շուտ վերադառնալ Երևան, առավել ևս, որ նախօրյակին Ղազարոս Սարյանից հեռագիր էի ստացել այն մասին, թե շտապ գործերի պատճառով պետք էր վերադառնալ:

Այս արտառոց դեպքից հետո հաստատապես որոշեցի իմ ուսանողներին երբեք համամիութենական մրցույթների չտանել մասնակցելու, չնայած ամեն անգամ հրավերներ էին ուղարկում հանձնախմբի անդամ լինելու, նույնիսկ մեկ անգամ Մոսկվա հրավիրեցին միջազգային մրցույթի համար համամիութենական ունկնդրմանը մասնակցելու հանձնախմբի նախագահ, ավելի ուշ Սարատով հրավիրեցին համամիութենական մրցույթի, հետո Սիմսկ և այլն:

Բայց 1979 թվականին որոշում կայացվեց, որպեսզի Անդրկովկասյան հանրապետությունների երիտասարդ երաժիշտների եզրափակիչ մրցույթին մասնակցեն նաև փողային գործիքների կատարողները (մինչ այդ մասնակցում էին դաշնակահարներ, լարայիններ և մեներգիչներ):

Մրցութային պայմանների համաձայն՝ ամեն մի մասնագիտությունից մրցույթին կարող էր մասնակցել միայն երեք երաժիշտ: Երևանի կոնսերվատորիայի փողային ամբիոնի վարիչ Հայկ Ղասաբյանի հետ միասին բոլոր մասնագիտությունների գծով ընտրական մի քանի ունկնդրում անցկացրինք: Մենք ընտրեցինք լավագույն ֆլեյտահարների, հորոյահարների, կլառնետահարների, ֆագոտա-

հարձերի, գալարափողահարձերի, շեփոքահարձերի, ընդամենը՝ 21 երաժիշտ:

Մեկնեցի՞նք Բաքու, ուր մեզ շատ ջերմ ընդունեցին, տրամադրելով պարապելու լավագույն պայմաններ, հատկացնելով հյուրանոցային լավագույն կացարաններ և այլ հարմարություններ:

Արդեն առաջին իսկ փուլում հայտնի դարձավ, որ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողները շատ ավելի լավ են նախապատրաստվել, նրանց կատարողական վարպետությունը շատ ավելի բարձր է, քան Բաքվի և Թբիլիսիի կոնսերվատորիաների ուսանողների կատարողական վարպետության մակարդակը:

Անդրկովկասյան հանրապետությունների երիտասարդ երաժիշտների անդրանիկ մրցույթի երկրորդ և երրորդ փուլերն անցան մեր ուսանողների ջախջախիչ առավելությամբ: Նրանք գրավեցին բոլոր առաջին մրցանակները, և ընդհանրապես, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 21 ուսանող-երաժիշտներն էլ արժանացան մրցանակների, դառնալով մրցույթի հաղթողներ: Բաքվի թերթերն իրենց գրախոսականներում գովեստի խոսքեր չէին խնայում հայ երաժիշտների հասցեին և նրանցից շատերն էլ հարցազրույցներ էին անցկացնում ինձ հետ:

Իմ ուսանողներից առաջին մրցանակի արժանացավ Աշոտ Դալլաքյանը, երկրորդ մրցանակ ստացավ Իգոր Եվդոկիմովը, իսկ երրորդ մրցանակը շնորհվեց իմ Յուրի Բալյանի սան Աշոտ Ունջուգուլյանին: Անդրկովկասյան հանրապետությունների երիտասարդ երաժիշտների անդրանիկ մրցույթի եզրափակիչ հանդիսավոր համերգին առաջին մրցանակակիր Աշոտ Դալլաքյանը փայլուն կատարեց Էժեն Բոչչայի բարդ, վիրտուոզ ստեղծագործությունը:

Անդրկովկասյան հանրապետությունների երիտասարդ երաժիշտների երկրորդ մրցույթը տեղի ունեցավ 1985 թվականին: Այս անգամ՝ միայն փայտյա և պղնձյա փողային գործիքների կատարողների շրջանակներում և նույնպես Բաքվում:

Պղնձյա փողային գործիքների հանձնախմբի նախագահ ինձ ընտրեցին: Այս անգամ մրցույթին մասնակցելու համար տարա իմ սաներից երեքին՝ հրաշալի շեփոքահարձեր Արմեն Արմենյանին, Արթուր Մխիթարյանին, Արա Խաչատրյանին: Երեքն էլ լավագույնս

նախապատրաստվել էին մրցույթին և երբ Բաքվում հանդես եկան առաջին փուլին, հանձնախմբի բոլոր անդամները հիասպունքով արտահայտվեցին նրանց կատարողական արվեստի մասին, իսկ դահլիճը, որ լեփ-լեցուն էր, անդադար ծափահարում էր հայ շեփորահարներին: Համընդհանուր հիասպունք առաջացրեց Արմեն Արմենյանը, որը կյանքում համեստագույն անձնավորություն, քախոս, բեմահարթակին կերպարփոխվում էր՝ դառնալով փայլուն մենակատար: Երկրորդ և երրորդ փուլերն ավելի հաջող անցան, մեր բոլոր տղաները՝ գալարափողահարները, շեփորահարները և տրոմբոնահարները արժանապան մրցանակների և դափնեկրի կոչման և իրենց կատարողական արվեստի մասնագիտական բարձր մակարդակով հիացրին թե՛ մասնագետներին և թե՛ փողային գործիքների սիրահարներին:

Իմ ուսանողներից Արմենը և Արթուրն արժանապան առաջին մրցանակի, իսկ Արան արժանապավ երկրորդ մրցանակի:

Հետևեցին հիացական շնորհավորանքները, լավագույն ցանկությունները և մենք մեծ հաղթանակով վերադարձանք Երևան:

Անթաքույց հպարտությամբ և առանց ավելորդ համեստության պետք է ասեն, որ կոնսերվատորիայի պրոռեկտորի տասնհինգ տարիների պաշտոնավարության ընթացքում փողային գործիքների ամբիոնի վարիչության համատեղությամբ աշխատանքի հետ մեկտեղ, մասնագիտության դասերին ուսանողների հետ տքնաջան աշխատանքը, պահանջկտությունը, խիստ կարգապահությունը, ուսանողներին ազնիվ վերաբերվելը և նրանց նկատմամբ ունեցած հոգատարությունը շատ լավ արդյունքներ տվեցին:

Մինչև այսօր Կոմիտասի անվան կոնսերվատորիայի փողային ամբիոնի նախկին ուսանողներն ինձ հանդիպելիս վերհիշում են անցած ուսանողական երջանիկ տարիները և հիասպունքով արտահայտվում իրենց հետ կատարած իմ աշխատանքի մասին:

Իմ կատարողական, հատկապես մանկավարժական կյանքի, գործունեության մեջ հատուկ տեղ են գրավել շեփորի և դաշնամուրի համար ստեղծագործությունների փոխադրությունները և մշակումները: Դեռևս ուսանողական տարիներին ես նվագել եմ շեփորի համար կատարած փոխադրություններ (Բախ՝ «Արիա» սի բեմոլ մի-

նոր), Հենդել՝ սոնատ և կոնցերտ (բնագիր), Չայկովսկի՝ «Օ՞րն է արդյոք իշխում», Ռախմանինով՝ «Գարնանային ջրեր» և շատ այլ մանրանվագներ և ես ցանկանում էի հետևել այդ շնորհակալ գործին և ինչ-որ չափով հարստացնել շեփոքի ուսումնամանկավարժական գրականության ցանկը, որպեսզի ուսանողները դաստիարակվեն հանճարեղ, տաղանդավոր կոմպոզիտորների ստեղծագործություններով, զարգայնել նրանց գեղագիտական ճաշակը, ծանոթացնել նրանց դասական, ռոմանտիկ, ժամանակակից կոմպոզիտորների ոճերին: Ես սկսեցի գործը հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից, որովհետև նրանցից և ոչ մեկը մինչև իմ մանկավարժական գործունեությունն սկսելը շեփոքի համար ոչ մի գործ չէր գրել (քայատություն՝ Ալ. Հարությունյանի կոնցերտը, սկերցոն), իսկ Երևանի կոմսերվատորիայի ուսանող շեփորահարները պարզապես պարտավոր են կատարել նաև հայկական երաժշտություն:

Ավելի ուշ ես սկսեցի փոխադրել հանճարեղ կոմպոզիտորներ Բախի, Հենդելի, Հայդնի, Մոցարտի ստեղծագործությունները, թե որքանո՞վ են հարմար դրանք փոխադրության համար և շեփորով ինչպե՞ս կհնչեն, դեռևս ուսանողական տարիներին էի համոզվել: Երկար տարիների ջանադիր աշխատանքի շնորհիվ ինձ մոտ կուտակվեց հիանալի ստեղծագործությունների փոխադրություն-մշակումների ահռելի քանակություն, որոնք կատարում են ոչ միայն իմ ուսանողները, այլև իմ աշակերտներ Յուրի Բալյանի և Արթուր Մխիթարյանի դասարանների ուսանողները:

Ահա իմ կատարած աշխատանքների ոչ լրիվ ցանկը, որոնք մնացել են ինձ մոտ, որովհետև նրանց մի մասը տարիներ առաջ անհետացան չիրկիզվող պահարանից, ուրիշ շատ այլ նոտաների հետ մեկտեղ, մի մասն էլ ես տվել եմ ուսանողներին կատարելու համար և հետ չեմ ստացել, իսկ մի քանիսն էլ անհաջող էին և ինձ դուր չէին գալիս:

Երկար ժամանակ ես ջանում էի հրատարակել ուսումնական ձեռնարկ և մանրանվագների ժողովածու: Սակայն մեծ դժվարությամբ միայն 1970 թվականին հաջողվեց հրատարակել շեփոքի ուսումնական ձեռնարկը և մանրանվագների մեծ ժողովածուն, որի մեջ զետեղված էին 12 ստեղծագործություն:

Ուսումնական ձեռնարկի երկրորդ մասն այդպես էլ ձեռագիր

մնաց, որովհետև ԲՈՀ-ի պահանջեցին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու ժամանակ և այդպես էլ, չնայած իմ քախսանձագին խնդրանքներին, չվերադարձրին:

Այնպես որ, ինձ մոտ պահպանվել և մնացել է իմ կատարած փոխադրությունների և մշակումների ճիշտ կեսը, որոնց ցուցակը ես գրի եմ առել.

1. Բախ՝ Արիա 202-րդ կանտատիյ
2. Հենդել՝ Քսերքսեսի մեներզը
3. Հենդել՝ «Փառատոնային» մեներզ (2 հատոր)
4. Հենդել՝ Իսրաելացու մեներզը («Մամսոն»)
5. Հենդել՝ Հիսուս Նագովրեսու մեներզը
6. Հենդել՝ Հուդա Իսկարիովտացու մեներզը
7. Հենդել՝ «Կանցոնա» («Երգ»)
8. Վիվալդի՝ Մեներզ «Գրիգելդա» օպերայիյ
9. Հայդն՝ «Կանցոնետտա»
10. Հայդն՝ Մեներզ «Աշխարհի արարումը»
11. Մոցարտ՝ Կոմսուիու մեներզը «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայիյ (երկու հատորյակ)
12. Մոցարտ՝ Ջուբակի 5-րդ սոնատ
13. Գաբրիել Ֆորե՝ «Ջարթոնք»
14. Մենդելսոն՝ «Երգ»
15. Ալ. Գլազունով՝ «Արևելյան սիրավեպ»
16. Ֆրանսիս Պուլենկ՝ «Կոնցերտային վոկալիզ»
17. Բոցյա՝ «Վոկալ էտյուդ»
18. Ֆրանչեսկո Դուրանտե՝ «Արիետտա»
19. Դոմինգո Դեմարե՝ «Ave Maria»
20. Ջովաննի Բատիստա Պերգոլեզի՝ «Կանցոնա»
21. Կոմիտաս-Ասլամազյան՝ «Կռունկ»
22. Կոմիտաս «Ծիրանի ծառ»
23. Կոմիտաս Երգ և պար, «Օրոր» և «Էրզրումի պար»
24. Ալ. Սպենդիարյան «Օրորոցային»
25. Ալ. Սպենդիարյան «Երգ» (ջութակի համար)
26. Ալ. Սպենդիարյան «Անտառային հոն»
27. Ալ. Սպենդիարյան «Սիրուհուս»

28. Ալ. Սպենդիարյան «Սիրտ իմ, ուրախացիր»
29. Ալ. Սպենդիարյան «Քնարական»
30. Ա. Խաչատրյան՝ «Վալս»
31. Ա. Խաչատրյան՝ «Այշեի պարը»
32. Ա. Բարաջանյան՝ «Եղերերգ»
33. Ալ. Հարությունյան՝ «Կոմպերտային վոկալիզ 1»
34. Ալ. Հարությունյան՝ «Կոմպերտային վոկալիզ 2»
35. Ալ. Հարությունյան՝ «Էքսպրոմտ»
36. Ալ. Հարությունյան՝ «Դլե յաման»
37. Ղ. Սարյան՝ «Սերենադ»
38. Գր. Եղիազարյան՝ «Սկերցո»
39. Գր. Եղիազարյան՝ «Չկան պարը»
40. Գր. Եղիազարյան՝ «Նախերգանք»

Կոմիտասի անվան կոմսերվատորիայի գիտական գծով պրո-
 նեկտորի պաշտոնավարության առաջին իսկ օրից մեծ ուշադրու-
 յուն էի դարձնում ուսանողական գիտական խորհրդի (ՈՒԳԽ) աշ-
 խատանքներին:

Սկզբնական շրջանում խորհուրդը ղեկավարում էին Գ. Գ. Տիգ-
 րանովը, Ա. Բարսամյանը, Մ. Հարությունյանը, Մ. Բրուտյանը:
 Ավելի ուշ իմ խնդրանքով խորհրդի աշխատանքները ղեկավարեց
 Ա. Գ. Բուդաղյանը, որին կարճ ժամանակամիջոցում հաջողվեց
 նշմարելի արդյունքների հասնել: Կոմսերվատորիայում պարբերա-
 բար կազմակերպվում էին գիտական ուսանողական ամենամյա
 համաժողովներ, որոնց շատ ուսանողներ էին մասնակցում, հիմնա-
 կանում երաժշտագետ-տեսաբաններ: Լավագույն աշխատանքների
 հեղինակները գործուղվում էին Մոսկվա, Լենինգրադ, Կիև, որտեղ
 անց էին կայվում միջբուհական համաժողովներ:

1985 թվականին հաջողվեց Մոսկվայի միջոցով այդպիսի միջբու-
 հական համաժողով անցկայանել Երևանի Կոմիտասի անվան կոմսեր-
 վատորիայում: Մենք հյուրընկալեցինք Խորհրդային Միության բազ-
 մաթիվ կոմսերվատորիաների ուսանողների, իրենց ղեկավարների
 հետ միասին: Բոլորին արտակարգ լավ ընդունեցինք, տեղավորեցինք
 հրաշալի հյուրանոցներում, նրանք եղան Հայաստանի պատմական և
 տեսարժան վայրերում, այցելեցին Մատենադարան և այլն:

Բարձր կազմակերպվածությամբ անցավ համաժողովը, մեր ուսանողները բարձր մակարդակով հանդես եկան և արժանապան համապատասխան գովեստներին:

Վերջերս իմ փաստաթղթերում հետաքրքրական մի լուսանկար հայտնաբերեցի, ուր պատկերված է համաժողովի նախագահությունը, որի կենտրոնում ուսանողների հետ ես էլ եմ նստած, իսկ լուսանկարի ետևում շատ հուզիչ տողեր են գրված. «Միքայել Վահանովիչ, որպես ազնիվ հարգանքի և շնորհակալության նշան և «16-18-րդ դարերի արեւմտաեվրոպական երաժշտության խնդիրները» միջազգային համաժողովի մասին հիշատակ, ՈւԳԽ-ից, ապրիլ, 1985»: Հաճելի զգայմունք ապրեցի այս տողերն ընթերցելով ու վերհիշելով անցած հրաշալի օրերը:

Ցավով պիտի նշեմ, որ ընդամենը դրանից մի քանի տարի անց մեր ժողովրդին օրհասական ծանր օրեր բաժին հասան և մասնավորապես ծանր օրեր մեր կոնսերվատորիային, որը մինչև օրս էլ դժվարությունների ծանրաբեռնվածությունից չի կարողանում ձերբազատվել:

Հայացքս ուղղելով կոնսերվատորիայում աշխատանքային գործունեության անցած 50 տարիներին (1947-1997), ես ամենայն պատասխանատվությամբ պետք է նշեմ, որ դրանցից լավագույն տարիներն էին 1973-ից մինչև 1985-ը ընկած տարիները: Երբ կոնսերվատորիայի մանկավարժներն աշխատում էին լիարժեք նվիրվածությամբ, իսկ ուսանողները ամբողջությամբ նվիրված էին իրենց ուսումնառությանը, պարապմունքներին և դա հիանալի արդյունքներ էր տալիս: Այդ ժամանակահատվածում շատ ու շատ ուսանողներ դարձան միջազգային մրցույթների դափնեկիր, ավելի շատերը համաիւրօժանական մրցույթների մրցանակների, դեռևս անդրկովկասյան հանրապետությունների երաժիշտների մրցույթը չհաշված:

Կոնսերվատորիայում մթնոլորտն առողջ էր, բոլորը զիտեին իրենց գործը և բարեխղճորեն կատարում էին իրենց պարտականությունները, չխնայելով իրենց ուժերն ու ժամանակը: Անցած այդ ժամանակների մասին մինչև այսօր խոսում են, վերհիշում, մանկավարժներն ու շրջանավարտները, գրադարանի աշխատակիցները, լաբորանտները, ուսումնական մասի աշխատակիցները, շատերը:

Կոմիտասի անվան կոնսերվատորիայի լավ աշխատանքները ստիպված էին նշելու և անվերջամալի ստուգումները: Ամեն տարի, նույնիսկ տարին երկու անգամ, մեր աշխատանքները մանրակրկիտ ստուգման էին ենթարկվում վերադաս կուսակցական և սովետական մարմինների կողմից և ստիպված էին նշելու կատարվող դրական աշխատանքը: Սակայն մեկ անգամ, 1977 թվականի դեկտեմբերին, Մոսկվայից այն ժամանակի համար շատ մեծ հանձնախումբ եկավ (7-8 հոգույց բաղկացած) կոնսերվատորիայի աշխատանքները ստուգելու: Լուրեր տարածեցին, թե հանձնախումբը եկել է ռեկտորին աշխատանքից ազատելու համար:

Այս մասին ինձ մանրամասն պատմեց, իրերն ու դեմքերն իրենց անուճով կոչելով հանձնախմբի անդամներից մեկը՝ Մոսկվայի երկաթուղային ինստիտուտի պրոռեկտորը, երբ հինգ ամիս անց, 1978 թվականի մայիսին հանդիպեցինք Մոսկվայում կայացած պրոռեկտորների խորհրդակցության ժամանակ:

Ես շատ ծանր օրեր անցկացրի (մոտավորապես երկու շաբաթ), որպեսզի փաստաթղթերով, հիմնավորված և համոզիչ պատասխաններ տամ առաջադրված բոլոր այն հարցերին, որ կազմել էր հանձնախումբը, և այն նոր հարցերին, որ ամեն օր կազմվում էր հանձնախմբի անդամների կողմից, յուրաքանչյուրն իր բնագավառի գծով: Այս ծանր, դժվարին օրերին ինձ օգնում էին միմիայն իմ մերձավոր բարեկամներ՝ նվագախմբային ֆակուլտետի դեկան Արամ Շամչյանը և ուսումնական մասի վարիչ Լևոն Բրուտյանը: Վերջապես, հիմնավորված փաստաթղթերը, բոլոր հարցերի պատասխանները պատրաստ էին և դրանք հանձնախմբին ներկայացնելու նախօրյակին, երեկոյան կոնսերվատորիայից զանգահարեցի Ղազարոս Սարյանին տուն, խնդրելով գալ և ծանոթանալ կատարված աշխատանքին և իր կարծիքը հայտնել: Բայց նա պատճառաբանեց, որ խիստ զբաղված է, չի կարող գալ: Վերջապես, ստուգումն ավարտվեց և հանձնախումբն ամբողջությամբ հավաքվեց իմ աշխատասենյակում, և ես մանրամասնորեն ծանոթացնելով նրանց՝ բոլոր փաստաթղթերի հետ, հանձնեցի դրանք ստուգող հանձնախմբի նախագահին: Մեկ օր անց ստուգող հանձնախմբի նախագահը բերեց ստուգումների արդյունքն

ամփոփող եզրափակող որոշումը, որտեղ ի պատիվ իրենց պետք է խոստովանեն, նշված էր կատարված ամբողջ դրական աշխատանքը և հետո միայն նշված էր. «Սակայն նշված են լուրջ թերություններ.

1. Բացակայում են պարապմունքների սկիզբն ու վերջն ազդարարող դասամիջոցի զանգերը (չնայած բանավոր նրանց ասել էի, որ դրանք խանգարում են մասնագիտական պարապմունքներին, որ Մոսկվայի կոնսերվատորիայում էլ այդ զանգերը չեն դողանջում):

2. Պարապմունքների դասաչույսակում դասի սկիզբն ու վերջն ազդարարող ժամերը կազմված են 9-11-ը, 11-13-ը, 13-15-ը, 15-17-ը և այլն. իսկ պետք է գրել 9-9.45, 9.45-10.40, 10.40-11.30 և այլն»:

Երբ այս եզրակացությունը ցույց տվեցի բարձրագույն կրթության նախարար Լյուդվիգ Ղարիբջանյանին, նա շատ ուրախապալ դրական մասի գնահատման համար, իսկ ընթերցելով «լուրջ թերությունները», պարզապես ծիծաղեց: Երբ տեղեկացրի, որ Մոսկվայի հանձնախմբին հրավիրում ենք այցելելու Գառնիի հեթանոսական տաճար, ասաց, որ հաճույքով կմիանա մեզ:

Վերջերս իմ արխիվում հայտնաբերեցի այդ այցելության ժամանակ կատարված լուսանկար, որտեղ Գառնիի վեհաշուք տեսարանի վրա պատկերված են ստուգող այդ հանձնախմբի բոլոր անդամները, մեր նախարարը և մեր կոնսերվատորիայի աշխատակիցներից ոմանք:

Այսպես ավարտվեցին այդ դժվարին ստուգումները, որից «բարյացականները» և «բարեկամները» սպասում էին իմ կործանումը, սակայն այս անգամ էլ նրանք ոչնչի չհասան:

Այստեղ գործի շրջանառության մեջ մտավ ամենուր գործող «նորին մեծություն» օրենքը:

Այն ժամանակ, գոյություն ունեցող կարգի համաձայն, ղեկավար պաշտոններ կարելի էր զբաղեցնել մինչև 65 տարեկան հասակը: Հիշելով այս պատգամը, 1981 թ. հունվարին կոնսերվատորիայի գիտական ուսումնական գծով պրոռեկտորի զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու դիմումով ներկայացա Բարձրագույն կրթության նախարար Լ.Պ. Ղարիբջանյանին:

Դիմումս կարդալով, նա ասաց. «Դու ոչ թե 65, այլ 50 տարեկան

ես: Գնա և շարունակիր աշխատել: Մենք քաջատեղյակ ենք, թե կոնսերվատորիայում ով ինչպես է աշխատում»:

Ստիպված էի ենթարկվել, սակայն դրանից հետո յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին նոր դիմումը ձեռքիս ներկայանում էի Լ.Պ. Ղարիբջանյանին: Եվ ահա, 1985 ճա զանգահարեց և ասաց, որ կարգադրություն է ստացել կոնսերվատորիայի պրոռեկտոր նշանակել, ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի իր զբաղեցրած պաշտոնից ազատված, կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանին:

Մի քանի օրից նախարարության կոլեգիայի նիստում հրապարակվեց իմ երկարամյա ամբասիր աշխատանքի համար նախարարի շնորհակալական հրամանը, իսկ մեկ այլ հրամանով, իմ անձնական դիմումի համաձայն, ինձ ազատեցին զբաղեցրած պաշտոնից:

Այդ օրվանից մինչև 1992 թվականի վերջը ես ղեկավարում էի փողային գործիքների ամբիոնը և հրաժեշտ տվեցի ղեկավար աշխատանքին: Մեկ տարի անց ռեկտորի պաշտոնավարությունից ազատեցին Ղազարոս Սարյանին ևս և նրա պաշտոնին նշանակեցին Էդգար Հովհաննիսյանին: Այստեղից էլ սկսվեց կոնսերվատորիայի անկումը դեպի անդունդ: Եթե նախկինում ընդունելության քննություններին մանրակրկիտ ընտրություն էր կատարվում և կոնսերվատորիա էին ընդունվում ամենաօժտվածներն ու տաղանդավորները, ընդունակ մարդիկ, ապա նոր կարգերի օրոք ընդունվում էին բոլոր նրանք, ովքեր դիմումներ էին ներկայացրել: Օրինակ, փողային բաժին նախկինում մենք ընդունում էինք 12-13 երիտասարդ երաժիշտ, իսկ այժմ սկսեցին ընդունել 30 կամ 40 դիմորդի, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր դիմում էին ներկայացրել կոնսերվատորիա ընդունվելու համար: Բնական է, ուսանողների այդպիսի թվի համար պետք է հրավիրել անհրաժեշտ թվով դասատուներ: Կոնսերվատորիա հրավիրվեցին աշխատելու միջակ կարողությունների տեր բազմաթիվ մարդիկ, աշխատանքի անկում սկսվեց ամբիոններում, նաև հիասթափություն, անկազմակերպվածություն և այլն:

*
* *

Հանդիսավոր պայմաններում, 1983 թվականի նոյեմբերին, մենք նշեցինք կոնսերվատորիայի հիմնադրման 60-ամյա հոբելյանը: Մինչև այդ կազմակերպել և անց էինք կայրել այդ տարեկիցին նվիրված բազմաթիվ համերգ-ելույթներ, բոլորն անպայման կոնսերվատորիայի ստեղծման և անցած պատմական ուղու մասին ներածական խոսքով Երևանի համերգային բոլոր դահլիճներում, երաժշտական դպրոցներում, ուսումնարաններում: Այդ հոբելյանին նվիրված հոդվածներ տպագրեցին Հայաստանի գրեթե բոլոր թերթերն ու ամսագրերը: Ի դեպ, իմ արխիվում պահպանվել է «Երեկոյան Երևան» օրաթերթի 1983 թվականի նոյեմբերի 16-ի համարը, ուր զետեղված է Ռոմանոս Մելիքյանի և Կոնստանտին Սարաջյանի մեծադիր դիմանկարներով գրած իմ հոդվածը կոնսերվատորիայի հիմնադրման 60-ամյակի առթիվ:

Երևանում կազմակերպված համերգ-ելույթներից բացի կոնսերվատորիայի սաների համերգներ կազմակերպեցինք նաև Հայաստանի շրջաններում: Ղազարոս Սարյանը մասնակիցներից շատերին ելույթների տարավ Չանգեզուր, իսկ ես՝ Լենինական և Կիրովական, վաղօրոք զանգահարելով քաղկոմների քարտուղարներին, նրանց հետ պայմանավորվելով համերգների օրը և ժամը:

Լենինականի մատույցներում մեզ դիմավորեցին քաղաքի ղեկավարները, ոստիկանների մեքենաների ուղեկցությամբ հասանք հյուրանոց, որտեղ վաղօրոք բոլորի համար համարներ էին նախապատրաստվել: Ժամանածներին հրավիրեցին ճաշի և ընդհանրապես, մթնոլորտն անչափ ջերմ ու բարեկամական էր: Այս բոլորը կազմակերպել էր քաղկոմի առաջին քարտուղար Դոնարա Հարությունյանը:

Երեկոյան կայացավ համերգը, լավեցին հրաշալի ելույթներ, իսկ հանդիսատեսները արտակարգ ջերմությամբ էին ընդունում յուրաքանչյուր ելույթ: Հաջորդ առավոտյան մեզ նորից ռեստորան հրավիրեց տիկին Դոնարան, արտակարգ հյուրասիրությունից հետո նա մեզ ճանապարհեց Կիրովական: Կիրովականում մեզ ոչ ոք չդիմավորեց, ավելին, երբ տեղ հասանք, հյուրանոցում քաշքշուկներ

սկսվեցին (համերգների մասնակից ուսանողներից երկուսն անձնագրեր չէին վերցրել իրենց հետ), և ընդհանրապես, հյուրանոցի աշխատակիցները հանդուգն վերաբերմունք էին ցուցաբերում:

Ես հասկացա, որ քաղկոնի քարտուղարը, որի հետ մեր գալստյան մասին հեռախոսով պայմանավորվել էինք, կամ մոռացել էր, կամ էլ հարկ չէր համարել այդ հարցով զբաղվելու:

Հանոզվելով դրանում, ես կարգադրեցի մեկնել Կիրովսկանի Մ. Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարան, այնտեղ համերգ տալ և ավարտից հետո, գիշերով, մեկնել Երևան: Գիշերվա ժամը երեքին տուն հասնելով՝ տեղեկացա, որ իր մահկանացուն է կնքել մեր ազգական և իմ մերձավոր բարեկամ Առնո Բարաջանյանը: Մահվանից երկու շաբաթ առաջ նա մեր տանն էր: Սիրով համաձայնեց նվագել մեզ համար և նստելով գործիքի առաջ, արտակարգ ներշնչումով կատարեց Սերգեյ Ռախմանինովի ստեղծագործությունները, այնպիսի վարպետությամբ, որ միայն իրեն էր հատուկ, նվագեց նաև իր հիանալի ստեղծագործությունները, որոնք իմ և իմ ընտանիքի անդամների ամենասիրելի գործերն են: Ընդամենը մի քանի-օր անց վատ էր զգացել և տարել էին հիվանդանոց, ու...

Առնոյի մահն ինձ վրա շատ խիստ ազդեց, ողջ գիշեր աչք չփակեցի, մտածում էի, վերհիշում մեր մանկությունը, պատանեկությունը, Մոսկվայի կոնսերվատորիայում ուսանելու մեր տարիները, մեր բարեկամությունը: Ես նրան հանճարեղ դաշնակահար և նույնքան էլ հանճարեղ կոմպոզիտոր եմ համարում, հիանալի շախմատիստ և ընդհանրապես հիանալի անձնավորություն ու անհատականություն, մի խոսքով՝ ՄԱՐԴ, որ քիչ է հանդիպում:

Այս խոսքերը ես արտաբերեցի նրա աճյունը հողին հանձնելուց հետո, երբ Առնոյի մերձավոր ընկերների ու բարեկամների մի խմբով հավաքվել էինք «Հրազդան» ռեստորանի առանձնասենյակում հոգեհայի:

Սակայն կյանքն առաջ է գնում... և մենք նախապատրաստվում էինք կոնսերվատորիայի 60-ամյա հոբելյանը օպերային թատրոնում հանդիսավորությամբ նշելուն, որի առիթով էլ ընդլայնված համերգ պետք է տեղի ունենար: Բազմաթիվ հյուրեր ժամանեցին Մոսկվայից, Լենինգրադից, Խորհրդային Միության բոլոր հանրապետու-

թյունների մայրաքաղաքների կոնսերվատորիաների ռեկտորներ, կոմպոզիտորներ, երաժշտական-հասարակական գործիչներ:

Հանդիսավոր երեկոյի կազմակերպման և համերգի անցկայման պատասխանատու և կարևոր գործը հստակ անցկայցնելու աշխատանքներում ինձ օգնում էին օպերային թատրոնի իմ բարեկամները և այլ աշխատակիցներ, թատրոնի բեմադրական մասի ղեկավարը, գլխավոր էլեկտրիկը, կապավորը և ուրիշներ, և մեզ հաջողվեց հստակ կազմակերպված անցկայցնել հորեյլանական երեկոն:

Մակայն կարևոր իրադարձությունը դեռ առջևում էր: Ըստ Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիաների ղեկավարությունների համաձայնության՝ պետք է մեր ուժերով երկու համերգ ունենայինք Մոսկվայում՝ նվիրված 60-ամյա հորեյլանին: Առաջինը՝ մեր ուսանողների ուժերով, երկրորդը՝ համաշխարհային ճանաչման, միջազգային մրցույթների հայ դափնեկիրների ուժերով: Ես ոչ միայն պետք է զբաղվեի այդ համերգի մասնակիցների ընտրությամբ, նրանց ունկնդրումների կազմակերպմամբ, այլ և ինքնաթիռի մոտ 100 տոմսի հայթայթմամբ, հյուրանոցներում նրանց տեղավորմամբ ու Մոսկվայի կոնսերվատորիայի Փոքր դահլիճում փորձերի անցկայցման հարցերով նույնպես:

Ինչևէ, երկու համերգն էլ մեծ հաջողությամբ անցան, պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Դահլիճում ունկնդիրներ էին Մոսկվայի անվանի երաժիշտներ, կոնսերվատորիայի, Գնեսինների անվան ինստիտուտի պրոֆեսորներ, ուսանողներ, մոսկվաբնակ մեծաքանակ հայեր ու հայ ուսանողներ, երաժիշտներ, երգիչներ և մշակույթի, արվեստի գործիչներ: Մեր ուսանողներին ու մանկավարժներին ջերմությամբ էին ընդունում՝ բուռն ծափահարելով նրանց:

Մոսկվայից վերադառնալուց հետո տեղեկացանք, որ Մոսկվայի Պյոտր Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ռեկտորատը նամակ է հղել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարին, որի մեջ շատ բարձր է գնահատել մեր ուսանողների և մանկավարժների պրոֆեսիոնալ աննախադեպ բարձր մակարդակը՝ նշելով հորեյլանական համերգների հաջողությունները, ջերմորեն շնորհավորել էին Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ղեկավարության:

նը: Այսպես մենք կազմակերպեցինք և անցկացրինք մեր հարազատ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հիմնադրման 60-ամյակին նվիրված տոնական միջոցառումներն ու համերգները 1983 թվականի նոյեմբերին:

Վերջին յոթ-ութ տարիների ընթացքում ինձ համար ամենաերջանիկ իրադարձությունն իմ երկրորդ թոռնիկի ծնունդն էր:

1991 թվականի սեպտեմբերի 6-ին իմ կրտսեր դուստրը՝ Հայկանուշը (Աննան) ունեցավ հրաշալի, արտակարգ մի աղջնակ, որին մենք Մարիաննա անվանակոչեցինք: Նա զարմանալի, իր տարիքին անհամապատասխան տաղանդավոր, գեղեցկուհի, գրավիչ աղջնակ է, որը մեր երջանկությունն ու ուրախությունն է:

Փոքրիկ Մարիաննան գերազանց հանձնեց Չայկովսկու անվան միջնակարգ դպրոցի ընդունելության քննությունները և այժմ գերազանց սովորում է: Ի դեպ, այդ դպրոցի դաշնամուրային բաժինն են ավարտել նաև և՛ Նատաշան, և՛ Անյան, և՛ Ջուդին:

*

* *

Կոմիտասի անվան կոնսերվատորիայում կրկնապատկվեցին լաբորանտների, տարբեր բաժինների քարտուղարների և այլ աշխատողների հաստիքները, որոնք այնքան էլ անհրաժեշտ չէին, որոնք ոչինչ չանելով միայն աշխատավարձ են ստանում:

Իրավիճակն ավելի վատթարացավ, երբ կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնում Էդգար Հովհաննիսյանին փոխարինեց Տիգրան Մանուրյանը: Կոնսերվատորիան հայտնվեց անդունդի եզրին, ամեն ինչ փլուզվեց, ամենուր բարձիթողի վիճակ, անհասկացողություն, մարդիկ անարգել հասնում էին իրենց անարժան նպատակներին: իմանալով, որ անպատժելի ժամանակներում ենք ապրում: Հանդգնությունն ու անկարգությունները օրինական կարգավիճակ ստացան:

Պատահականություն չէ, որ կոնսերվատորիայում այսօր դա-

սավանդող մանկավարժների մեծամասնությունը «պրոֆեսորներ» են, իսկ դասավանդման որակը և նրանց աշխատանքի արդյունքները ոչ մի բնագրատության չեն դիմանում:

Բայց, փառք Աստծո, Մանուրյանի «գահակալությունը» երկար չտևեց. ընդամենը երեք տարի: Ռեկտորի պաշտոնն ստանձնեց Արմեն Սմբատյանը: Կարծում եմ՝ ավելի լավ է լինելու:

